

Պ. Հ. ՍԱՐԱԶՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԷՔԻ
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԵՐԱՓՈՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

П. А. САРАДЖЯН

БОРЬБА КОММУНИСТИЧЕСКИХ
ПАРТИЙ И ПРОГРЕССИВНЫХ
СИЛ АРАБСКОГО ВОСТОКА
ЗА ДЕМОКРАТИЮ И
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ
ПРЕОБРАЗОВАНИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1986

ՀՆԱԲԵՐՑՍՄԱՐԱԶ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

3KUS

Պ. Հ. ՍԱՐԱԶՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԻՔԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՎԵՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

A 24625



Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ ասենյազիտության ինստիտուտի գիտական խորհրդի
 որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր
 Ե. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Գիրքը հաստատակության են երաշխավորել գրախոսներ՝ պատմական
 գիտությունների դոկտոր Հ. Մ. ԵԳՈՆՅԱՆԵՐԸ և պատմական գիտությունների
 րեկենսաու Ե. Հ. ՆԱԶԱՐՅԱՆԸ

Սարաջյան, Պ. Հ.

Ս 255 Արարական արևելքի կոմունիստական կուսակցու-
 թյունների և առաջադիմական ուժերի պայքարը դե-
 մոկրատիայի և սոցիալ-տնտեսական վերափոխություն-
 ների համար/Պատ. խմբ. Ե. Հ. Հովհաննիսյան; ՀՍՍՀ ԳԱ
 արևելագիտ. ին-տ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.—
 236 էջ.

*Մենագրության մեջ, կուսակցական համագումարների, կոնֆե-
 րանսների և պաշտոնական այլ փաստաթղթերի հիման վրա շուտա-
 քանովում է Սիրիայի, Իրաքի, Լիբանանի և Եգիպտոսի կոմկուսների
 գործունեությունը: Մեծ տեղ է հատկացվում Սիրիայի և Իրաքի ազ-
 գային առաջադիմական նակատների ստեղծման հարցին, Նաև երկրի
 հայրենասիրական ուժերը համախմբելու ուղղությամբ Լիբանանի
 կոմկուսի գործադրած ջանքերին:*

*Նախատեսվում է արևելագետներին, արարական երկրների մա-
 մանակազից պատմությամբ զբաղվողներին համար:*

ԳՄԳ 66.61 (07)

05C6000000

Ս 703 (02) — 86 8—85

© Հայկական ՍՍՀ ԳԱ հաստատակություն, 1986

Ա Ռ Ա Ջ Ա Ր Ա Ն

Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXVII համագումարը, ելնելով մարքսիզմ-լենինիզմի տեսական գրույթներից և զարաշրջանի գլխավոր բովանդակություններից, նշեց, որ կուսակցության միջազգային գործունեության կարևոր արդյունքներից մեկը զազութային ճնշումից ազատագրված երկրների հետ համագործակցության նկատելի ընդլայնումն է:

Համագումարի նյութերում տրված է այդ երկրների զատակարգումը, խմբավորումը՝ ըստ նրանց վարած ներքին և արտաքին քաղաքականության, զարգացման ընտրած ուղու: Գազութատիրությունից ազատագրված երկրներից մի քանիսը, այդ թվում նաև արաբական երկրները, զնացին հեղափոխական-դեմոկրատական ուղիով, այլ երկրներում հաստատվեցին կապիտալիստական հարաբերություններ, շատ երկրներ վարում են խակական անկախ քաղաքականություն, կան երկրներ, որոնք իմպերիալիզմի քաղաքականության շրջանակներից դուրս չեն եկել:

Արաբական ազգային-ազատագրական շարժումն իր արժանի տեղն ունի համաշխարհային հեղափոխական շարժման մեջ: Այն կարևոր գեր է խաղում միջազգային իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում և գրական ազգեցությունն է թողնում ամբողջ ազգային-ազատագրական շարժման վրա:

1960—70-ական թվականների արաբական ազգային-ազատագրական շարժման ընտրող գծերից մեկը հակասությունների սրումն է մի կողմից արաբական առաջադիմական ուժերի՝ բանվորների, գյուղացիների, հեղափոխական մտա-

վորականության և գինւորականության, իսկ մյուս կողմից՝ իմպերիալիզմի, Իսրայելի և տեղական հետադիմության միջև Համառ ու սկզբունքային պայքարում արաբական միջաբերկրների կոմունիստները և այլ առաջադիմական ուժեր հետապնդում են քաղաքական և տնտեսական լիակատար անկախության ամրապնդման նպատակ:

ՍՄԿԿ XXVII համագումարում ասվեց նաև այն մասին, որ ահել է սոցիալիստական կողմնորոշման զարգացման ուղին ընտրած երկրների թիվը, արվեցին այդ զարգացման ընդհանուր գծերը և օրինաչափությունները: Զարգացումը տեղի է ունենում ոչ միատեսակ և ընթանում է բարդ պայմաններում: Բայց հիմնական ուղղությունները նման են: «Հազվաճարելով ներքին ու արտաքին սեպտիկայի դիմադրությունը, կառավարող հեղափոխական-գեմոկրատական կուսակցությունները վարում են իմպերիալիստական մոնոպոլիաների, ցեղային վերնախավի, ֆեոդալների ու սեպտիկայի բուրժուազիայի վերացման, էկոնոմիկայում պետական սեկտորի ամրապնդման, գյուղում կոոպերատիվ շարժման խրախուսման, տնտեսական ու քաղաքական կյանքում աշխատավոր մասսաների գերի բարձրացման կուրս: Իրենց անկախությունը պաշտպանելով իմպերիալիստների հարձակումից, այդ երկրներն ընդլայնում են համագործակցությունը սոցիալիստական պետությունների հետ»:

Աշխատությունը նվիրված է 1967—1982 թթ. Իրաքի, Սիրիայի և Լիբանանի, մասամբ Եգիպտոսի կոմունիստական կուսակցությունների և առաջադիմական ուժերի՝ իմպերիալիզմի, Իսրայելի, և արաբական ներքին հետադիմական ուժերի դեմ մղված պայքարի լուսարանմանը:

Ժամանակահատվածի ընթացությունը պատահական չէ բընավ: Իսրայելի 1967 թ. հունիսյան ագրեսիան նոր փուլ նշանավորեց արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ, քանի որ ամբողջ Արաբական արևելքում առաջ քաշվեցին նոր խնդիրներ, նոր նպատակներ: 1967-ի երկրորդ կեսից արաբական աշխարհում ստեղծվեց անհանապատեհ կարգը: Սոցիալ-տնտեսական և քաղաքական բազմաթիվ ու

բազմապիսի վերափոխումների ու տեղաշարժերի, մանավանդ ավելի արմատական ու վճռական է դառնում արարական ազատագրական պայքարը: Միրիայում և Իրաքում ստեղծվում են առաջադիմական-հայրենասիրական ճակատներ: Ամրապնդվում է այդ պետությունների և ՄՍՀՄ-ի ու մյուս սոցիալիստական երկրների համագործակցությունը: Արարական ազատագրական շարժման մի շարք շոկատներ որդեգրում են գիտական սոցիալիզմի գաղափարախոսությունը:

1973 թ. արաբա-իսրայելական պատերազմը նույնպես նոր փուլ նշանավորեց, համեմատաբար վերափոխվեց ուժերի հարաբերակցությունը Մերձավոր արևելքում հօգուտ արաբների, փշրվեց Իսրայելի «անպարտելիության» առասպելը, վերստին հաստատվեց, որ արաբական ժողովուրդները ի դեմս Մովետական Միության ունեն հուսալի գաշնակից, որը հետևողականորեն հանդես է գալիս հանուն մերձավորարևելյան ճգնաժամի արդարացի և կայուն կարգավորման: Միաժամանակ, պատերազմը բացահայտեց ԱՄՆ-ի և իմպերիալիստական մյուս պետությունների քաղաքականության էությունը, այն, որ նրանք հանդես են գալիս արաբների անմիջական թշնամու՝ Իսրայելի հավատարիմ պաշտպանի դերում:

Հայտնի է, նաև, որ 1975 թ. կնքվեց եգիպտա-իսրայելական անջատ համաձայնագիրը, որը փաստորեն Եգիպտոսը տարանջատեց արաբական ազատագրական շարժման առաջապոստից և զգալապես նախադրյալ հանդիսացավ Լիբանանի քաղաքացիական պատերազմին, որն իր հերթին սրեց իրավիճակը արաբական աշխարհում: Իսկ 1978 թ. ԱՄՆ-ի հովանու ներքո կնքվեց բեմպոլեիզյան դորժարքը, որը հակասում է արաբների ազգային շահերին, որին որպես օրինաչափ հակազդեցություն՝ արաբական ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի վառ դրսևուրումներ հանդիսացան «Տոկոնություն և հակազդեցության ճակատի» և «Արաբ ժողովրդի կոնգրեսի» ստեղծումը:

Աշխատությունը ժամանակագրական ավարտակետ է հանդիսանում 80-ական թվականների սկիզբը, ավելի կոնկ-

բևտ՝ իսրայելական զորքերի ներխուժումը Լիբանան 1982 թ.՝ Կերչին հանգամանքը արաբական աշխարհում ստեղծեց բուլտորովին նոր իրադրություն, որը կոմունիստների ու առաջադիմական ուժերի առջև նոր խնդիրներ դրեց:

Արաբական առաջադիմական ուժերի միջուկը հետազոտվող ժամանակաշրջանում կազմում են աշխատավորական զանգվածները և առաջին հերթին նրանց շահերն արտահայտող Սիրիայի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի այնուհետև Եգիպտոսի կոմունիստական կուսակցությունները, ինչպես նաև արհեստակցական միությունները և երիտասարդական զանազան ղեմնկրատական կազմակերպությունները: Նրանց հետ մեկ ճակատում էին գտնվում ազգային հեղափոխական ուժերը՝ մանր բուրժուազիան, հեղափոխական մտավորականությունը և առաջադեմ գինվորականությունը, հակաիմպերիալիզմի դիրքերում կանգնած այլ ուժեր: Այդ ուժերի շահերն էին արտահայտում Բաաս կուսակցությունը, Արաբ սոցիալիստների շարժումը, Սոցիալիստ-յունիոնիստների կազմակերպությունը, Արաբական սոցիալիստական միությունը՝ Սիրիայում, Բաաս կուսակցությունը, Քրդական ղեմնկրատական կուսակցությունը, Առաջադիմական ազգայնականների և Անկախ ղեմնկրատների կազմակերպություններն՝ Իրաքում, Սոցիալիստական առաջադիմական կուսակցությունը, Բասսի լիբանանյան մասնաճյուղը և Նասերական ուժերի կազմակերպությունը՝ Լիբանանում, Արաբական սոցիալիստական միությունը, իսկ 1975 թ. հետո կոմունիստական կուսակցությունը և Ազգային առաջադիմական (ձախ) կուսակցությունը Խալեզ Մոհի էդ-Դինի գլխավորությամբ՝ Եգիպտոսում, ինչպես նաև Պաղեստինյան դիմադրական շարժման (ՊԴՇ) զանազան ջոկատների մարքսիստական, ձախ և ազգայնական խմբավորումներն ու կազմակերպությունները:

Հետադիմական աջ տարրերը, որոնք համախմբված էին գլխավորապես Սաուդյան Արաբիայի, Հորդանանի և Քուվեյթի շուրջը, զգալի չափով պահպանել էին իրենց դիրքերը առաջադիմական վարչակարգեր ունեցող երկրներում՝ Սի-

բիայում, Եգիպտոսում, Իրաքում՝ ի դեմս ֆեոդալների, խոշոր հողատերերի, բուրժուազիայի և մանր բուրժուազիայի որոշ խավերի: Նրանք ձգտում էին ազատագրական շարժումը Լենինի կողմից իրենց նեղ-դասակարգային նպատակներին, երկյուղ էին կրում ժողովրդական ղանգվածների պայքարի վերելքից, ուստի և հաճախ ճգնում էին կասեցնել ազգային-ազատագրական շարժման զարգացումը, վախենալով, որ այն դուրս կմնա իրենց վերահսկողությունից:

Արաբական հետադիմության հարվածային ուժն էին ներկայացնում «մուսուլման եղբայրները» կազմակերպություններն արաբական մի շարք երկրներում, առաջին հերթին Սիրիայում, փաղանգավորներն ու շամունահանները և այլ կուսակցություններ ու խմբավորումներ Լիբանանում, որոնք արտահայտում էին, առաջին հերթին, ֆինանսական օլիգարխիայի և կալվածատերերի՝ շահերը, որոնք, որպես կանոն, համապորժակցում էին միջազգային խմբերիալիզմի հետ արաբական աշխարհում:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ի տարբերություն արաբական առաջադիմական զանազան ուժերի, կոմունիստները ակտիվորեն պայքարում էին և շարունակում են պայքարել: Հակաֆեոդալիստական ու հակաֆեոդալական ղեմոկրատական հեղափոխությունները մինչև վերջ հասցնելու, ազգային ղեմոկրատիայի պետություն ստեղծելու, սոցիալական առաջադիմության համար: Կոմունիստների նպատակները համապատասխանում են արաբական ժողովուրդների բարձրագույն շահերին: Արաբական կոմունիստական կուսակցությունները շարունակում են ընդլայնել իրենց շարքերը, ամրապնդել իրենց ազդեցությունը ժողովրդական ղանգվածների մեջ: Զարգացման ընդհանուր օրինաչափությունների տեսական վերլուծության հիման վրա կոմունիստները, նույնիսկ ամենազգժվար իրադրության մեջ, դանում են այն հարցերի ճիշտ պատասխանը, որ առաջադրում է կյանքը: Եվ կթև ազգային-ազատագրական ուժերն ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում զեպի սոցիալիզմը, ապա այդ դործում վիթխարի է արաբ կոմունիստների ծառայությունը:

Պրորբիմի ալթմեականութիւնը նաև այն է, որ սերտորեն շաղկապված է մի այլ կարևոր խնդրի՝ միջաբարական հարաբերութիւնների հետ, որոնց ուսումնասիրումը կնպաստի արաբական երկրների զարգացման բնորոշ գծերի ու առանձնահատկութիւնների բացահայտմանը, հնարավորութիւն կընձեռի ինչպես այդ երկրների միջև ստեղծված կապերի մասին բնդհանուր և զիտականորեն հիմնավորված պատկերացում կազմելու, այնպես էլ արաբական երկրների նորագույն պատմութիւնն այս կամ այն առանձին պրորբիմը հետազոտելու և ճիշտ գնահատելու:

Ուսումնասիրութիւնն առարկան հատուկ հետազոտութիւնն էլ յուր շի դարձել արտասահմանյան արեւելագետների, այդ թվում և արաբ հեղինակների համար: Կան առանձին աշխատութիւններ և հոդվածներ, որոնցում շոշափված են մասնակի հարցեր, սակայն գրանք խնդիրը բազմակողմանիորեն շեն արծարծելու Ավելին, որոշ բուրժուական արաբագետների հետազոտութիւններին բնորոշ են պատմական զեպքերի, երևութիւնների և փաստերի խեղաթյուրումը, ծայրահեղ կողմնակալութիւնը և ատելութիւնը այն ամենի հանդէպ, ինչ կապված է սոցիալական առաջադիմութիւնն, սոցիալիզմի գաղափարախոսութիւնն և սովետա-արաբական բարեկամութիւնն հետ:

Հետազոտութիւնն մեջ արծարծվող հարցերի տեսական և մեթոդոլոգիական հիմք են բնդունվել մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը, առաջին հերթին Վ. Ի. Լենինի հիմնակազմ գրույթները իմպերիալիզմի և ազգային-ազատագրական շարժման, կոմունիստական մամուլի խնդիրների, պրորբետարիատի և բուրժուազիայի դասակարգային պայքարի հարցերի վերաբերյալ², ՍՄԿԿ ծրագրային փաստաթղթերը³, ՍՄԿԿ համագումարների, հատկապես XXVII համագումարի նյութերը⁴, ՍՄԿԿ և Սովետական կառավարութիւնն ղեկավար գործիչների ելույթները, մասնավորապես 1986 թ. հունիսյան պլենումի նյութերը⁵:

Աշխատութիւնը շարագրելիս հեղինակի համար հիմնական սկզբնաղբյուրային բազա են հանդիսացել Իրաբի,

Միրիայի, Լիրանանի և Եգիպտոսի կոմունիստական կուսակցությունների պաշտոնական փաստաթղթերն ու նյութերը՝ Համագումարների, պլենումների, կոնֆերանսների որոշումները⁶, Ինչպես նաև միջազգային և արաբական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդակցությունների հայտարարությունները⁷։

Որպես կարևոր սկզբնաղբյուր գիտական շրջանառության մեջ է դրված արաբական կոմունիստական մամուլը. Լիրանանի կոմկուսի «ալ Ախրար» շաբաթերթը, «ան Նիդա», «Կանչ» ցրագրերը և «աբ Քարիկ» ամսագիրը⁸, Միրիայի կոմկուսի օրգան «Նիդալ աշ Շաար» և «Գիրասաթ իշթիրաթիա» ամսագիրը⁹, Իրաքի կոմկուսի օրգան «Քարիկ աշ Շաար» և «աս-Սակաֆա ալ շադիգա» ամսագիրը¹⁰։ Միաժամանակ օգտագործել ենք Եգիպտացի մարքսիստների օրգան «աբ Քալիա» ամսագրի ժողովածուները ինչպես նաև 1975 թ. հիմնրված Եգիպտոսի կոմկուսի օրգան «ալ Ինթիսարը» և այլ նյութեր ու փաստաթղթեր¹¹։ Անհրաժեշտ ուշադրություն է դարձվել արաբ կոմունիստ ղեկավար զործիչների ուսումնասիրություններին։ Նրանց աշխատություններում ու հոդվածներում փաստական նյութի հիման վրա քննության են ենթարկված զարգացման ոչ կապիտալիստական ուղու տեսական և գործնական բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներ, վերլուծված են սոցիալիստական կողմնորոշում ունեցող արաբական երկրների փորձը զանազան քնադավառներում, կոմունիստական կուսակցությունների և հեղափոխական-ղեկավարատների փոխհարաբերություններն ու համագործակցությունը, սոցիալ դասակարգային պայքարի էությունը և այլ կարևոր հարցեր, որոնք, անշուշտ, նոր ավանդ են ազգային-ազատագրական շարժման մարքս-լենինյան տեսության մեջ։ Հենց այս տեսակետից հիշատակման են արժանի Խ. Բազդաշի¹², Ն. Շաուրի¹³, Ք. Մրուեի¹⁴, Տ. Շաքերի¹⁵, Ֆ. Մուրսիի¹⁶, Ռ. Սաադի¹⁷, Ա. Համրուշի¹⁸, Մ. Ամելի¹⁹, Է. Քումալի²⁰, Ֆ. Կազանի²¹ առանձին աշխատություններն ու արաբական կոմունիստական մամուլում, «Պորըլմի միրա ի սո-

ցիալիզմ» ամսագրի և սովետական տեսական հանդեսների էջերում լույս տեսած հոդվածները:

Ուսումնասիրվող երկրների կոմունիստական կուսակցությունների հրատարակությունները հարուստ նյութ են տալիս, առանց բացառության, բոլոր հարցերի պարզարանման համար: Գա վերաբերում է հատկապես 60—70-ական թվականների փոփոխահույզ շրջանին, երբ արարական ազատագրական շարժման համար կենսական անհրաժեշտություն էին կոմունիստների ճշմարտացի խոսքն ու արդարացի և անաշու զնահատականները, պայքարի կազմակերպման նրանց հարուստ ավանդություններն ու փորձը:

Որոշակի կարևորություն են ներկայացնում նաև Բեյրութի ամերիկյան համալսարանի կողմից հրատարակվող «Արաբական փաստաթղթերի»²² ամենամյա ստվարածավալ ժողովածուները, որոնք արտացոլում են արաբական աշխարհի սոցիալ-տնտեսական և քաղաքական նշանակալից իրադարձությունները: Հարկ է սակայն, հաշվի առնել, որ նշված ժողովածուում փաստաթղթերի ընտրությունը, հակառակ երևութական օբյեկտիվության, կատարվել է այնպես, որ նսեմացվեն արաբական երկրների սոցիալ-քաղաքական պրոցեսներում ձեռք բերված հեղափոխական-առաջադիմական նվաճումները, մի բան, որ ընթերցողին տալիս է ազնաոված պատկերացում:

Հարուստ փաստական նյութ են մատուցում նասերի²³, Սադաթի²⁴ ճառերի, էլույթների և հարցազրույցների ժողովածուները: Հեղինակը օգտվել է նաև Իրաքի և Սիրիայի Բաաս կուսակցությունների համազգային ու մարզային համագումարների նյութերից, որոշումներից ու փաստաթղթերից՝ խորամտուս լինելու համար բաասականների կողմից առաջ քաշված գաղափարատեսական և քաղաքական հիմնական ուղղությունների մեջ²⁵: Այդ նյութերի վերլուծությունը սակայն, պահանջում է շրջահայաց և քննադատական մոտեցում, քանի որ նրանք բովանդակում են բազմաթիվ սուբյեկտիվ կողմեր՝ կապված Բաաս կուսակցության և հայրենասի-

բական-գեմոկրատական ուժերի, մասնավորապես կոմունիստների, գործունեության գնահատման հետ:

Առանձին հարցերի քննարկման համար օգտագործվել են ՍՍՀՄ արտաքին քաղաքականությանը նվիրված աշխատություններ²⁶, ինչպես նաև Արարական արևելքի հետ առնչվող մի շարք հոդվածներ, որոնք զետեղված են սովետական տեղեկատու և տարեգրային գրահանույթյան էջերում²⁷:

Ուսումնասիրության վրա աշխատելիս հեղինակն օգտվել է սովետական արարազետների, արևելագետների և միջազգայնագետների աշխատություններից: Հիշատակության արժանի են մասնավորապես Ս. Մ. Պրիմակովի²⁸, Լ. Ի. Մեդվեդևի²⁹, Ս. Չեխարինի և Վ. Լադեյկինի³⁰, Լ. Տուլուսովի³¹ ժառանգական հարուստ նյութերի հիման վրա գրված ուսումնասիրությունները, որոնք հանգամանորեն լուսարանում են Մերձավոր արևելքի վտանգավոր ճգնաժամի ակունքները, մերկացնում ԱՄՆ-ի և արևմտյան աերությունների նեղ քաղաքականությունը, բացահայտում Իսրայելի ծավալապաշտական ներսումներն արարական երկրների նկատմամբ: Օ. Մ. Գորբատովի և Լ. Յա. Չերկասկու մենագրությունը³² վերլուծում է Սովետական Միության պայքարի հիմնական ուղղությունը՝ կայուն և արդարացի խաղաղության հաստատումը Մերձավոր արևելքում, բացահայտում սովետական մերձավորարևելյան քաղաքականության ինտերնացիոնալիստական դասակարգային բնույթը, մերկացնում Իսրայելի և նրա հովանավորողների ագրեսիվ քաղաքականության էությունը:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Ռ. Վ. Բորիսովի³³, Ա. Ա. Գրոմիկովի³⁴ և Ա. Ի. Օսիպովի³⁵ աշխատությունները, որոնցում լուսարանվում է 60—70-ական թվականներին արարական երկրների նկատմամբ ամերիկյան իմպերիալիզմի ծավալապաշտական նեոգաղութատիրական քաղաքականությունը, որը Մերձավոր արևելքի կոնֆլիկտի կարգավորման գլխավոր խոչընդոտն է և սպառնում է ժողովուրդների անվտանգությանն ու համաշխարհային խաղաղությանը: Միաժամանակ ցույց են տրվում արարական ազ-

գային-ազատագրական շարժման հաջողություններն ու գծվարությունները:

Արարական ազգային-ազատագրական պայքարի կնճառահարցերի լուսարանման համար օգտվել ենք նաև Ն. Հ. Հովհաննիսյանի արժեքավոր մենագրություններից ու բազմաթիվ հոդվածներից⁵⁶, որոնք լուսարանում են ազգային-ազատագրական պայքարը, սոցիալ-տնտեսական վիճակը Իրաքում, կիրանանում և Միրիայում, ինչպես և կիրանանի 1975 թ. քաղաքացիական պատերազմի ակունքները, ԱՄՆ-ի և Իսրայելի դերը կոնֆլիկտի առաջացման ու շարունակման գործում:

Արժեքավոր ու շահեկան են նաև է. Պ. Փիր-Բուզազովայի⁵⁷, Վ. Պ. Վիկտորովի⁵⁸, Վ. Վ. Վալիլովի⁵⁹, Ա. Օ. Ֆիլոնիկի⁶⁰ և Գ. Ի. Միրսկու⁶¹ մենագրությունները, որոնք նվիրված են Միրիայի սոցիալ-տնտեսական վերափոխություններին, քաղաքական կուսակցությունների գործունեության, ազգային-առաջադիմական ճակատի ստեղծման, երկրի դեմոկրատական շարժման զարգացման գործում բանակի դերի և այլ կարևոր հարցերին:

Ուսումնասիրությանը փաստական կարևոր նյութ են մատուցել մի շարք մենագրություններ՝ նվիրված 1973 թ. արաբ-իսրայելական պատերազմի լուսարանման հարցերին⁶²:

Հարկ է նշել, որ բուրժուական սուբյեկտիվիզմի դիրքերից են շարագրված արևմտակիթուպական և արաբ բազմաթիվ հեղինակների մենագրությունները, որոնք ճշգրտում են քողարկել իմպերիալիզմի շարամիա նպատակներն ու ձեռնարկները: Այդ տեսակետի արտացոլումը գտնում ենք Սալահ էդ Դին Մունշիդի⁶³, Ահմեդ Շալաբի⁶⁴, Իբրահիմ Սաադալի⁶⁵ և այլոց աշխատություններում:

Չափազանց կարևոր է նաև սովետա-արաբական փոխհարաբերությունների լուսարանման հարցը: Արաբ և եվրոպական մի շարք հեղինակներ այս հարցը բազմիցս գնահատել են սխալ, սուբյեկտիվիզմի դիրքերից: Դա պարզ ու որոշակի երևում է Ա. Ռիչարդի⁶⁶, Բ. Ռալֆի⁶⁷, Ֆ. Փոհլերի⁶⁸, Մ. Հեյքալի⁶⁹ աշխատություններում: Դժբախտաբար, համաճանման վերաբերմունքի ենք հանդիպում նաև արաբ առանձին

պետական ու քաղաքական գործիչներին՝ Ա. Սաղաթի⁵⁰ և այլոց գրքերում:

Հասկանալի է, որ օգտվելով այդ աշխատություններից, միաժամանակ պատմաբնական վերլուծության ենթ ենթարկել գրանք բուն տեքստում, շանացել ենք ներկայացնել պատմության սրչեկտիվ պատկերը:

Որպես հարակից նյութ օգտագործել ենք սովետական, արևմտանվրոպական և արաբական աշխարհում յույս տեսնող մամուլը:

**ԱՐԱՐ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋԱԳԻՄԱԿԱՆ-
ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՅՈՒՍ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ
ԻՄՊԵՐԻԱԼԻՉՄԻ ԴԵՄ ԵՎ ՀԱՆՈՒՆ ԻՄՐԱՅՆԼԱԿԱՆ
ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ**

1967 թ. հունիսի 5-ին Իսրայելը կայծակնային պատե-
րազմ սանձազերծեց Արարական Միացյալ Հանրապետության
(ԱՄՀ), Սիրիայի Արարական Հանրապետության (ՍԱՀ) և
Հորդանանի Հաշիմյան թագավորության դեմ: Իսրայելական
ազդեցությունները դավթեցին Սիրիայի թերակղզին, Գոլանի բար-
ձունքները, Եզրուսաղեմի արարական մասը, Հորդանան գետի
արևմտյան ափը և Ղազայի շրջանը:


Հունիսյան ազդեցիվ պատերազմը տրամաբանական
շարունակությունն էր Իսրայելի կառավարող սիոնիստ վեր-
նախաձի ծավալապաշտ անհաղուրդ քաղաքականության և
ուղղակի հետևանքը իմպերիալիստական շրջաններից այդ
վերնախաձիի կախվածության: Վերջին հաշվով, իսրայելական
ազդեցիան, որ առաջին հերթին նկրտում էր իրականացնել
«Մեծ Իսրայելի» ստեղծման վաղեմի երազանքը, միաժա-
մանակ և իմպերիալիստական էր, քանի որ ԱՄՆ-ի, Անգլիա-
յի և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության բարո-
յական և նյութական քաջալերանքն ու հովանավորությունը
միտում էր մահացու հարված հասցնել արարական ազգային-
ազատագրական շարժմանը, տապալել ԱՄՀ-ի և ՍԱՀ-ի
առաջադիմական վարչակարգերը, խարխիլել սովետա-արա-
րական բարեկամությունն ու համագործակցությունը և, վեր-

շայես, վերականգնել իմ պերիալիզմի կորցրած ազդեցութիւնն ու գիրքերը Արարական արևելքում:

Հունիսյան ազրեսիան պարզորոշ սահմանազատում մտցրեց արարական երկրների իսկական բարեկամների և երզվալ թշնամիների միջև: Այն հաստատեց, որ Սովետական Միութիւնը, հովատարիմ ժողովուրդների ազատութեան և սովերեն իրավունքների հարգման սկզբունքի վրա հիմնված լենինյան իր արտաքին քաղաքականութեանը, պաշտպանում է արարական ժողովուրդների իղձերն ու շահերը: Պատերազմի առաջին իսկ ժամերին Սովետական կառավարութիւնը պահանջեց անհասպաղ և առանց նախապայմանի դադարեցնել ազրեսիմ գործողութիւնները և իսրայիլական զորքերը ետ քաշել ելման գիրքերը: Հունիսի 7-ին, իր երկրորդ հայտարարութեամբ, Սովետական կառավարութիւնը խտիմ նախազգուշացրեց հարձակումը շարունակող իսրայիլական զեկավարներին, իսկ հունիսի 8-ին ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում մի անգամ ևս հանդես եկամ ազրեսիալին վերջ տալու պահանջով:

Հունիսի 9-ին՝ երկրոյան, Կահիրեի հետուտատեսութեամբ ունեցամ էլույթում, հայտարարելով, որ անձամբ ինքը, և ուրիշ ոչ ոք, պատասխանատւութիւն է կրում պարտութեան համար, նասերը հրաժարական տվեց: Ոչ միայն Եգիպտոսի, այլև Միրիալի, Հորդանանի, Լիբանանի և արարական մյուս երկրների ժողովրդական լայն զանգվածները հունիսի 9-ի զիշերը և հաշորդ օրը փողոց դուրս եկան պահանջելով, որ նասերը ետ վերցնի իր հրաժարականը: Նրանք համողվամ էին, որ ազմական պարտութիւնը հրամայական պահանջ էր դարձնում ձեռք բերվամ սցիալ-տեսական և քաղաքական նվաճումների պահպանումն ու խորացումը:

Լիբանանյան կոմունիստական կուսակցութեան օրգան «ան Նիդա»-ն առաջնորդող հողվածներից մեկում, բարձր գնահատելով նասերի զեկավարութեամբ ԱՄՆ-ի անցամ ուղին, պրեզիդենտին կոչ էր անում ետ կանգնել իր որոշումից: քանի որ դա «ձեռք բերվամ նվաճումների պահպանման ու խորացման, իսրայիլական-իմպերիալիստական ազրեսիալի



Հետևանքների վերացման և Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքների վերականգնման միակ երաշխիքն էր»²:

Հունիսի 10-ին ԱՄՇ-ի ազգային ժողովը, նպատակ ունենալով վերականգնել Սզիպատտի պաշտպանունակությունը, որոշում ընդունեց երկրի ողջ իշխանությունը նասերի ձեռքում կենտրոնացնելու մասին: Նույն օրը Իսրայելը կոպիտ կերպով խախտեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ կրակի գաղափարի մասին որոշումը: Սովետական Միությունը և սոցիալիստական մյուս երկրները խզեցին դիվանագիտական հարաբերությունները նրա հետ: «Եթե Իսրայելը անմիջապես շղաղարեցնի պատերազմական գործողությունները, ապա Սովետական Միությունը և մյուս խաղաղասեր պետությունները պատժամիջոցների կզիմեն Իսրայելի նկատմամբ»³, — ասված էր ՏԱՄՍ-ի հայտարարությունում:

1967 թ. հունիսի 19-ին, Սովետական Միության նախաձեռնությամբ, գումարվեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի արտահերթ նիստը, որտեղ սովետական պատվիրակությունը ներկայացրեց բանաձևի իր նախագիծը: Այն խիստ դատապարտում էր իսրայելական ագրեսիան, պահանջում իսրայելական զորքերի անհապաղ ու անվերապահ դուրս բերումը գրավված տերիտորիաներից և արաբական երկրների նյութական վնասների փոխհատուցումը: Սովետական պատվիրակությունն ընդգծեց, որ «Սովետական Միությունը կձեռնարկի իրենից կախված բոլոր միջոցները, որպեսզի վերացնել տա ագրեսիայի հետևանքները և նպաստի այդ շրջանում կայուն խաղաղություն հաստատելուն»⁴: Սովետական դիրքորոշումը ջերմ արձագանք գտավ արաբական հասարակության ամենալայն շրջաններում:

Երկարատև բանակցություններից հետո, 1967 թ. նոյեմբերի 22-ին, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց № 242 բանաձևը, որը նախատեսում էր իսրայելական զորքերը դուրս բերել արաբական բոլոր բնագրավված հողերից, Մերձավոր արևելքում հաստատել կայուն և ար-

զարացի խաղաղություն, ճանաչել շրջանի բոլոր պետություն-
ների քաղաքական անկախությունը, անվտանգ զոյությունն
ու տերիտորիալ ամբողջականությունը և, վերջապես, արգա-
րացիորեն լուծել պաղեստինցի գաղթականների հարցը: Բա-
նաձևի կենսագործման աշխատանքներին հսկելու նպատակով,
ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու. Տանը նշանակեց իր հա-
տուկ ներկայացուցչին՝ շվեդացի գիվանագետ Գ. Յարինգին:
Բանաձևի պաշտպանությամբ հանդես եկան արարական
կոմունիստական կուսակցություններն ու առաջադիմական
այլ ուժեր:

Արար կոմունիստները գտնում էին, որ բունազրաված
հողերից իսրայելական զորքերի զուրսերումը բանաձևի
կարևոր դրական կետերից է, որը պայմանավորված է մյուս
կետերի կենսագործմամբ: Դրանք իրենց հերթին ենթադրում
են լուրջ զիջումներ: Բացատրելով իրերի էությունը, կոմու-
նիստներն ընդգծում էին, որ արարները տվյալ պահին անզոր
են գիմազրավելու ագրեսիային, իսկ եթե շնորհունեն բանա-
ձևը և շղթմեն գործնական միջոցների, ապա դա նպաստելու է
զոյավիճակի ամրապնդմանը: Նթե նրանք, շունենալով ան-
հրաժեշտ ուժը, ակամայից մղվեն անհավասար պատերազ-
մի, ապա արդյունքներն ավելի վատ կլինեն: Մինչդեռ, բա-
նաձևն ընդունելով որպես ժամանակավոր հաշտություն,
նրանք, հարկադրական այդ զիջումով, ոչ միայն պահպանե-
լու են եզամ ռազմական ուժը, այլև այն զարգացնելու ու ամ-
րապնդելու հնարավորություն են ձևաք բերելում:

Օգտվելով իմպերիալիստական տերությունների հովա-
նավորությունից, Իսրայելը կտրականապես մերժեց ենթարկ-
վել զորքերի զուրսերման պահանջներին, մի բան, որի իրա-
կանացման համար եռանդուն պայքարում էին ՍՍՀՄ-ը, սո-
ցիալիստական և շմիացած երկրները:

Իսրայելական ագրեսիայի տարելիցի առթիվ «ալ Ախ-
բար»-ի թղթակիցը կիրանանի կոմկուսի գլխավոր քարտուղար
Ն. Շաուրի հետ անցկացրեց հարցազրույց, որի ժամանակ
շոշափվեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ Մերձավոր

արևելքում իրադրությունների զարգացումը, արար ժողովուրդների պայքարի հեռանկարները, առաջադիմական ուժերի տեղն ու դերը այդ պայքարում, տեղական հետադիմության ծրագրերը և խնդրո առարկա բոլոր հարցերի հանգույցում կիրանանի ուրույն դերը: Եսուիի կարծիքով, արարների պարտության պատմական դասը այն էր, որ անհրաժեշտ է ուժեղացնել պայքարը իմպերիալիզմի, սիոնիզմի և հետադիմության դեմ, միաժամանակ ամրապնդելով արարա-սովետական համագործակցությունը⁶:

1968 թ. հուլիսին տեղի ունեցավ արարական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդածուխովը, որը քննարկեց արարական աշխարհում ստեղծված իրադրությունը, իսրայելական ազրեսիայի բնույթը, նպատակները և հետևանքները: Խորհրդածուխովը միաժամանակ սահմանեց արարական ազգային-ազատագրական շարժման առաջ ծառայած անհետաձգելի խնդիրները և բացահայտեց թույլ տրված սխալներն ու թերությունները:

Խորհրդածուխովը ուղենշեց արարական առաջադիմական ու հայրենասիրական ուժերի առջև կանգնած հետևյալ կարևոր խնդիրները.

1. Քաղաքական ու տնտեսական բնագավառներում զարկ տալ հակաիմպերիալիստական ու հակասիոնիստական պայքարին:

2. Պայքարել հանուն ՄԱԿ-ի № 242 բանաձևի կենսագործման, այն կարևոր ուղենիշ համարելով մերձավորարևելյան պրոբլեմի կարգավորման ճանապարհին:

3. Դեմոկրատական ազատություններ շնորհել ժողովրդական զանգվածներին և վերջ տալ հակակոմունիզմի քաղաքականությանը:

4. Ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային ասպարեզներում ամրապնդել կապերը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ:

5. Աշակցել ԱՄՆ-ի և ՍԱՀ-ի առաջադիմական կարգերի սոցիալ-տնտեսական վերափոխումների խորացմանը:

5. Անգույ պայքար մղել պահպանողական ու հետադիմական բուրք ուժերի դեմ, որոնք փորձում են կասեցնել սոցիալական առաջընթացը:

7. Շարունակել պայքարը արաբական հետադիմական ու բռնապետական վարչակարգերի դեմ²:

Արաբական ղեկավար շրջաններում արժանին էին հատուցում սովետա-արաբական ամրապնդվող բարեկամությանը, արաբների արգարացի պայքարին Սովետական Միության կողմից ցույց տրվող բարոյական ու նյութական անշահախնդիր օժանդակությանը: Այսպես, 1968 թ. հուլիսի 23-ին, ելույթ ունենալով Արաբական սոցիալիստական միության (ԱՄՄ) Ազգային կոնգրեսում, նասերը շեշտում էր, որ արաբ ազգը երախտագիտությամբ պետք է արձանագրի այն փաստը, որ եթե շիներ Սովետական Միությունը, ապա արաբներն այժմ անզոր կլինեին Իսրայելի ռազմական մերկնայի առաջ³:

Համանման հայտարարությամբ հուլիսի 27-ին հանդես եկավ նաև ՄԱՀ-ի պրեմիեր մինիստր Յուսեֆ Չուլենը, որը խստիվ դատապարտելով ԱՄՆ-ի դիրքորոշումը արաբների նկատմամբ, ողջույնի խոսք հղեց սոցիալիստական երկրներին ու Սովետական Միությանը՝ իրենց ցուցաբերած հակայական օգնության համար:

Արաբական երկրներում, մասնավորապես կոմունիստական ու ղեմավորատական մամուլի էջերում, դրական գնահատականի արժանացավ Մերձավոր արևելքի իրադրության վերաբերյալ Սովետական կառավարության 1968 թ. սեպտեմբերի 26-ի հայտարարությունը, որը խստիվ նախազգուշացնում էր իսրայելական ղեկավարներին՝ հակաարաբական ոտնձգությունների շարունակման առթիվ, միաժամանակ հավաստելով, որ ՍՄՀՄ-ը շարունակելու է իր բազմակողմանի օգնությունը արաբական ժողովուրդների արգար պայքարին: Այս կապակցությամբ «ան նիզա» թերթը նշում էր. «Սովետական նախազգուշացումը կրկին անգամ մերկացնում է Իսրայելի ծավալապաշտական նկրտումները ոչ միայն ԱՄՀ-ի, ՄԱՀ-ի, Հորդանանի, այլև Հարավային Լիբանանի նկատմամբ»⁴:

Սակայն Խորաշիւր ոչ միայն չէր ցանկանում կենսադործել ՄԱԿ-ի որոշումները, այլև շարունակում էր զինված պրովոկացիաներն ու սպառնալիքները արաբների դեմ:

Արաբ ժողովուրդների, մասնավորապես առաջադիմական վարչակարգերի առջև կանգնած հրատապ ու անհետաձգելի խնդիրներն իրենց արտացոլումը գտան Սիրիայի կոմունիստական կուսակցութեան III համագումարում, որը տեղի ունեցավ 1969 թ. հունիսին: Հայտնի է, որ պաշտպանելով Անվտանգութեան խորհրդի N 242 բանաձևը կոմկուսը զնաց հոսանքին հակառակ, այն զեպրում, երբ սիրիական կառավարությունը դեմ էր դրան:

Համագումարը քննութեան առավ մերձավորարևելյան պրորբլեմի վարդացման, Անվտանգութեան խորհրդի N 242 բանաձևի հանդէպ զանազան քաղաքական ուժերի դիրքորոշման, վարչակարգի թույլ տված սխալների, ժողովրդական զանգվածների մորիլիզացման և արզալին-առաջադիմական ճակատի ստեղծման, բանակի զերի. պաշտպանունակութեան ու մարտունակութեան բարձրացման և այլ կարևոր հարցեր: Կոմկուսը կոչ էր անում պայքարել ոչ միայն խորաշիւրական արևելսիայի հետևանքների վերացման, այլև Սիրիայի առաջադիմական վարչակարգի ամրապնդման և սոցիալ-տնտեսական վերափոխութեանների խորացման ուղղութեամբ: Այդ նպատակին հասնելու համար կուսակցությունն առաջադրեց մի շարք կոնկրետ խնդիրներ. 1) «Ամեն ինչ ռազմաճակատի համար» լողունը ճշմարիտ է, սակայն այդ շպետք է նշանակի տնտեսական զարգացման զաղարեցում, այլ բնդհակառակը: Անհրաժեշտ է լինել ուժեղ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական բոլոր ասպարեզներում: 2) Անհրաժեշտ է բարձրացնել Սիրիայի և եգիպտոսի մարտունակութունը. ամրապնդել ու խորացնել ձեռք բերված նվաճումները: 3) Բոլոր բնագավառներում զորացնել արաբ-սովետական համագործակցությունը¹⁰:

Նշված շրջանում բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները կոմունիստներին մեղադրում էին հայ-

ընկերի շահերի նկատմամբ անտարբերության, հայրենասիրության բացակայության և ՍՍՀՄ-ից անկախություն չունենեալու մեջ: Կոմկուսը արժանի հակահարված տվեց այդ գրպարտանքներին¹¹:

Մերձավոր արևելքում քաղաքական կարգավորման հասնելու գլխավոր և, ըստ էության, միակ խոչընդոտը Իսրայելի և ԱՄՆ-ի գրաված դիրքն էր 1969 թ. նոյեմբերի սկզբներին, օրինակ. արևմտյան մամուլում շեփոհհարվեց ամերիկյան հերթական «առաջարկը»՝ ուղղված ԱՄՆ-ի կառավարությանը: Այն նախատեսում էր իսրայելական զորքերի ետքաշումը մինչև հունիսի 5-ի եզրից առ-խորայելական սահմանագիծը՝ պայմանով, որ ԱՄՆ-ն հաշտության պայմանագիր կնքեր Իսրայելի հետ՝ ուղղակի բանակցություններ վարելով Ղազզայի և Եարամ աշ-Շեյխի վերաբերյալ: Այլ խոսքով, ԱՄՆ-ը ԱՄՆ-ին առաջարկելով հաշտության անջատ պայմանագիր կնքել, փաստորեն, միտում էր նրան անշատել Արաբական արևելքի մյուս երկրներից, այսինքն՝ իրականացնել իմպերիալիզմի վաղեմի երազանքը: Հասկանալի է, ԱՄՆ-ի կառավարությունը կտրականապես մերժեց ԱՄՆ-ի առաջարկած գործարքը, քանի որ այն ամբողջապես հակասում էր Անվտանգության խորհրդի բանաձևին: Նոյեմբերի 19-ին ԱՄՆ-ի Ազգային ժողովի հրապարակած հայտարարությունը կոչ էր անում՝ ԱՄՆ-ին վերաբերվել որպես թշնամու, որը «պատասխանատու է մերձավորարևելյան պրոբլեմի խաղաղ կարգավորման ձախողման համար և հանդես է գալիս պատերազմ հրահրողի դերում»¹²:

1970 թ. փետրվարի 3-ին Սովետական Միությունը Մերձավոր արևելքի իրադրության վերաբերյալ հուշագրեր հանձնեց ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին: ԱՄՆ-ը և Իսրայելը մեղադրվում էին որպես մերձավորարեւելյան պրոբլեմի կարգավորմանն ուղղված բանակցությունների ձախողման պատասխանատու և կրկին անգամ պահանջվում էր իսրայելական զորքերի դուրսբերումն արաբական տարածքներից¹³:

Սակայն իմպերիալիստներն ու նրանց հովանավորչալ-
ները հետո էին բանականություն ձայնին անսալուց: Նույն
օրը ելույթ ունենալով ուսանողության առաջ, Իսրայելի
պաշտպանության մինիստր Մ. Գայանը հայտարարեց-
«ԱՄՆ-ը միակ երկիրն է, որ պատրաստակամություն հայտ-
նեց անհրաժեշտ զենք մատակարարել մեզ»¹⁴:

Ամերիկյան իմպերիալիզմի կողմից Իսրայելին օրեցօր
աճող զենքի մատակարարումները հասցրին այն բանին, որ
Սովետական Միությունը պատրաստակամություն հայտնեց
իրենց անվտանգությունն ապահովելու համար, արարներին
տրամադրել անհրաժեշտ զենք: Այս խնդրին անդրադառնալով
Նասերը նշել է. «Գնացիներ Սովետական Միություն և ռազ-
մական օժանդակություն խնդրեցինք՝ դիմադրապիլու համար
ԱՄՆ-ի կործանիչ զենքին, որի միջոցով Իսրայելն ավերում է
մեր քաղաքներն ու սպանում մեր երեխաներին: Սովետա-
կան Միությունը՝ տվեց մեզ ժամանակակից կատարչալ զենք,
առանց որևէ պայմանի»¹⁵:

Ի պատասխան սովետական հուշազրերի, Անգլիան և
ԱՄՆ-ը պահանջեցին ՄԱԿ-ի արտակարգ զորքերի տեղադրում
կրակի դադարեցման գծի երկայնքով մեկ: Այդ առաջարկը ոչ
այլ ինչ էր, եթե ոչ իմպերիալիստական շրջանների փորձը՝
զինադադարի գծերը վերածելու մշտական սահմանագծերի,
հետևաբար և ընդունելի լինել շէր կարող: Սովետական Միու-
թյունը, որը միջազգային քառակողմ բանակցություններում
ներկայացնում էր արաբական երկրների տեսակետը, մերժեց
այդ առաջարկությունը, պնդելով, որ «կրակի դադարեցման
մասին ՄԱԿ-ի որոշումը չպետք է անշատել իսրայելական
զորքերի դուրսբերման բանաձևից»¹⁶:

Մարտի 26-ին, ելույթ ունենալով Ազգային ժողովում,
Նասերը անդրադարձավ մերձավորարևելյան պրոբլեմին:
Նշելով, որ ամերիկյան առաջարկները պահանջում էին եզիպ-
տա-իսրայելական անշատ կարգավորում, նա միաժամանակ
ընդգծեց, որ զորքերը պետք է դուրս բերվին արաբական
զավթված բոլոր տարածքներից: Նա խստիվ դատապարտեց
ԱՄՆ-ի և բարձր զնահատեց ՍՍՀՄ-ի դիրքորոշումները: «Մեր
երկրները (ՍՍՀՄ-ը և ԱՄՆ-ը—Պ. Ա.) համաձայնվել են հետև-

յալ երկու պայմանների շուրջ. նախ, արարների պետք է պնդեն իսրայելական զորքերի լրիվ դուրսերման վրա, և երկրորդ, նրանք զեմ են և պետք է հակառակվեն ուղղակի բանակցությունների պահանջին»¹⁷:

Ապարդյուն անցան ԱՄՆ-ի փորձերը համողելու նասերին, որ նա համաձայնվեր անշատ կարգավորման և լքեր արար մյուս ժողովուրդներին, հատկապես պաղեստինցիներին: Սկզբից ենթ նրա զիրքորոշումն էր. «Իսրայելական զորքերի լիակատար դուրսերումը նախ և առաջ նրուսաղևից, Գոլանի բարձունքներից, Ղազալից, Հորդանան գետի արևմտյան ափից, և ապա նոր Սինայից»¹⁸:

Ազրեսիայից երեք տարի անց Իսրայելը ոչ միայն համառորեն չէր ենթարկվում ՄԱԿ-ի N 242 բանաձևին, այլև ԱՄՆ-ի անսահման օգնության շնորհիվ փաստորեն շատունակում էր պատերազմական գործողությունները ԱՄՆ-ի և ՄԱՀ-ի զեմ: Ընդամենը 200 մ հեռավորության վրա գտնվող Սուեզ և Իսմայիլիա՝ եգիպտական քաղաքները ենթարկվում էին ամենօրյա զնդալժոծության ու ումբակոծության: ԱՄՆ-ը ստիպված եղավ տեղահանել կես միլիոն բնակչություն: Սովետական Միության ցուցարևած բազմակողմանի օգնության շնորհիվ վերականգնվեց և ամրապնդվեց ԱՄՆ-ի պաշտպանունակությունը: 1969 թ. մայիսին նասերը հայտարարեց, որ ԱՄՆ-ն այլևս ի վիճակի չէ միակողմանիորեն ընդունելու կրակի դադարեցման վերաբերյալ որոշումը: Ուստի և Իսրայելի զեմ նա հայտարարեց չյուծիչ պատերազմ, որին պետք է հաջորդեր ազատագրական պատերազմը:

Այսպիսի անբարենպաստ պայմաններում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը կուլիաների ետևում նախապատրաստեց զիվանադիտական նոր քայլ: 1970 թ. հունիսի 25-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ու. Ռոջերսը հրապարակեց, այսպես կոչված, «ամերիկյան խաղաղասիրական նոր նախաձեռնությունը» Մերձավոր արևելքի վերաբերյալ, որը հետագայում ստացավ «Ռոջերսի պլան» անունը: Այն առաջարկում էր երեք ամիս ժամանակով կրակի դադարեցումը ԱՄՆ-ի ու Իսրայելի

միջև և № 242 բանաձևը կենսազորժելու համար 9. Յարինզի առաքելության վերսկսումը:

Հուլիսի 23-ին, ելույթ ունենալով ԱՄՄ-ի Ազգային կոնգրեսի առաջ, նասերը մանրամասն վերլուծության ենթարկեց «Ռոչեսթրի պլանը»: Նա նշեց, որ ամերիկյան «նոր» առաջարկությունը ոչ մի նորություն չի պարունակում և այն չի տարբերվում № 242 բանաձևից, որը միշտ էլ անտեսվել էր Իսրայելի և ԱՄՆ-ի կողմից: Այնուհետև նասերը շեշտեց, որ իմպերիալիստական-պրոպագանդիստական մեքենան թմրկահարում է, թե ԱՄՆ-ն ու Սովետական Միությունը ձգտում են պատերազմել Իսրայելի դեմ, «և քանի որ սույն առաջարկի ընդունումը ոչ մի վտանգ չի սպառնում մեզ, ուստի մենք հայտարարում ենք ԱՄՆ-ի համաձայնությունը»¹⁹: Նա միաժամանակ նախազգուշացրեց ԱՄՆ-ին, որ դա վերջին հնարավորությունն է ստուգելու ամերիկյան վարչակազմի մտադրությունները:

Արաբական առաջադիմական ուժերը և առաջին հերթին կոմունիստական կուսակցությունները խիստ նախազգուշացրեցին, որ «Ռոչեսթրի պլանի» ընդունման կապակցությամբ տարբեր քաղաքական ուժեր ու կուսակցություններ կունենան տարբեր վերաբերմունք, ինչպես № 242 բանաձևի ընդունման ժամանակ: Ուստի նրանք կոչ արին, որ այդ «տարածայնությունները շխորացնեն ազատագրական պայքարի պառակտվածությունը»: «Իմպերիալիզմի, սիոնիզմի և հետադիմության դեմ մղված պայքարը պետք չէ տեղափոխել առաջադիմական շոկատների միջև»²⁰,—խորհուրդ էր տալիս «ան Նիդան»:

Արաբական կոմունիստական կուսակցությունները շանք շինայեցին բացատրելու հարցի էությունը, իրերի վիճակը: Նրանք բազմիցս նշեցին, որ ԱՄՆ-ն հենվելով գլխավորապես ՄՍՀՄ-ի պաշտպանության ու փոխըմբռնման վրա ընդունեց «Ռոչեսթրի պլանը» և, որ Կահիրեի համաձայնությունը ոչ մի դեպքում արգելք չի կարող լինել պաղեստինյան դիմադրական շարժման համար:

Այսպիսի բարդ իրադրության մեջ 1970 թ. սեպտեմբերին

տեղի ունեցավ Իրաքի կոմունիստական կուսակցության (ԻԿԿ) II համագումարը: Կենտկոմի հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ կուսակցության գլխավոր քարտուղար Ա. Մուհամեդը: Կարևորագույն հարցերից էր՝ «արաբական ազգային-ազատագրական շարժման արդի խնդիրները»: Համագումարը բացատրական լայն աշխատանք կատարեց մերձավորարևելյան պրոբլեմի, մասնավորապես «Ռոջերսի պլանի» ընդունման ուղղությամբ: Ընդգծելով Եգիպտոսի դիվանագիտական ճիշտ դիրքորոշումը, Ա. Մուհամեդը միաժամանակ քննադատեց հետադիմական վարչակարգ ունեցող արաբական պետությունների և ուժերի դիրքորոշումը: Այդ առթիվ նա նշեց. «Վերջիններս գտնում են, որ Իսրայելի զեմ պայքարի հարատևումը ամրապնդում է բարեկամությունն ու համագործակցությունը սոցիալիստական աշխարհի հետ, ուժեղացնում հեղափոխական սոցիալիստական զաղափարախոսության ներդրությունը, ամրապնդում Պաղեստինի դիմադրության շարժման (ՊՂԾ)-ի դիրքերը, հետևապես, վտանգում իրենց նեղ զասակարգային շահերը»²¹:

Չնայած առաջադիմական ուժերի տարած բացատրական լայն աշխատանքներին, «Ռոջերսի պլանի» ընդունումը այնուամենայնիվ պատակտվածություն առաջ բերեց արաբական ազատագրական շարժման զանազան շոկատների միջև:

Այսպիսի փոթորկալից իրադարձությունների պայմաններում արաբական կոմունիստական կուսակցությունները ամենահրատապ խնդիր էին համարում.

1. Բարձրացնել արաբական բանակների մարտունակությունը և միավորել արևմտյան (եգիպտական) և արևելյան (սիրիական-իրաքյան-հորդանանյան-պաղեստինյան) ուղեմահակատների զործողությունները:

2. Ամրապնդել առաջադիմական ուժերի համագործակցությունը յուրաքանչյուր երկրի ներսում և ազատվել հակակոմունիզմի մնացուկներից:

3. Ռազմաքաղաքական ու տնտեսական ասպարեզներում դարձ տալ առաջադիմական կարգերի համագործակցությունը:

Ուժեղացնել համադրածակցությունն ու կոորդինացիան ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ: Պահպանել և խորացնել սոցիալ-տնտեսական բնագավառում ձևոր բերած նվաճումները:

4. Մատարել իմպերիալիզմի և սրտնիզմի դեմ Պաղեստինի ազատագրման կազմակերպության (ՊԱԿ) պայքարին:

5. Տիրապետել ժամանակակից տեխնիկային ու անցնել երկրի ինդուստրացմանը, որպեսզի վերջ տրվի արարական երկրների հետամնացությանն ու կախվածությանը միջազգային կապիտալիստական էկոնոմիկայից²²:

Համաշխարհային խաղաղասեր հասարակայնության էնշման ներքո, Իսրայելն ի վերջո տակտիկական նկատառումներով ստիպված եղավ ընդունելու իր դաշնակցի առաջարկը: Օգոստոսի 7-ին կրակը դադարեցվեց Սուեզի ջրանցքի շրջանում:

1970 թ. սեպտեմբերի 28-ին անժամանակ վախճանվեց արարական աշգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, իմպերիալիզմի դեմ անխոնջ մարտնչող, Գամալ Աբդել Նասերը: Եզիպտոսի նոր պրեզիդենտը դարձավ Ա. Սադատը:

ԱՄՆ-ը և Իսրայելը հույս ունեն, որ Նասերի մահից հետո, նրա օրոք աշխուժություն գտած կենտրոնախույս ուժերն իշխանության գլուխ կընտրեն առավել խոնարհ մի անձնավորություն: Ուստի և մեծացրին ճնշումը ԱՄՆ-ի վրա:

Ամերիկյան իմպերիալիզմը կրկնապատկեց իր հարձակումն արարական ազատագրական շարժման դեմ երկու ուղղությամբ: Նախ, ԱՄՆ-ի դեմ, որպեսզի անշատեր նրան արարական ազատագրական շարժումից ու նախապատրաստեր նրան հրաժարվելու առաջադիմական կուրսից և երկրորդ, ՊԱԿ-ի դեմ, որպեսզի վերջնականապես լուծարքի ենթարկեր պաղեստինյան հարցը:

Այսպիսի խառնաշփոթ պարագաներում մեծ նշանակություն ունեցավ արարական կոմունիստական և բանվորական կուսակցությունների՝ 1971 թ. հունվարի կեսերին գումարված խորհրդածողովը: Այն առաջադիմական ուժերին կոչ արեց

միանալ և զիմացրավել իմպերիալիզմի, սիոնիզմի և հետագիմոսիան կատաղի հարձակումներին: Մերձավորարեկելյան պրորբնի քաղաքական կարգավորման հարցում խորհրդածողովը գտնում էր, որ ասմերիկյան իմպերիալիզմի բացահայտ օժանդակությունը Իսրայելին և նրա թշնամական վերաբերմունքը արարների նկատմամբ՝ կարմիր լույս են վառում N 242 բանաձևի առաջ, բանաձև, որն ԱՄՆ-ը պաշտոնապես ընդունել է»²⁰:

Փետրվարի 8-ին Յարինգը հուշագիր ներկայացրեց ԱՄՆ-ի և Իսրայելի կառավարություններին, ինչպես նաև Անվտանգության խորհրդի մշտական անդամ շորս պետությունների ներկայացուցիչներին: Այն պահանջում էր զազարեցնել պատերազմական գործողությունները, հարգել յուրաքանչյուր կողմի քաղաքական անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը, ստեղծել ապառազմականացված վայրեր և այնտեղ տեղադրել ՄԱԿ-ի արտակարգ զորքերը, ապահովել միջազգային նավագնացություն և ազատությունը շրջանի բոլոր ծովային երթուղիներով, այդ թվում նաև՝ Մուսկի ջրանցքով, մշակել կարգացուցակ-պլան Անվտանգության խորհրդի N 242 բանաձևի իրականացման համար²¹:

Փետրվարի 15-ին ԱՄՆ-ի կառավարությունն իրազեկ պահեց Յարինգին, որ դրական է վերաբերվում այդ հուշագրին: Փետրվարի 18-ին Իսրայելի արտաքին գործերի մինիստր Ա. էրանը սվիճեցրեց ընդունեց Յարինգի հուշագիրը, քանի որ այն պահանջում էր մշակել կարգացուցակ-պլան Իսրայելական զորքերի զուրսերման վերաբերյալ: Փետրվարի 21-ին Իսրայելական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ իր զորքերը զուրս չեն բերվի զավթված արաբական հողերից: Դրանով իսկ Իսրայելը վերստին ամբողջ աշխարհին բացահայտորեն ցույց տվեց, որ շարունակում է մարտահրավեր նետել ՄԱԿ-ին և աշխարհի բոլոր ժողովուրդներին: Իր հերթին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռ. Նիքսոնը փետրվարի 25-ին պաշտպանեց Իսրայելական կառավարության հայտարարությունը «անվտանգ սահմանների» պահ-

պանման և «ուղղակի բանակցություններ վարելու» անհրաժեշտության վերաբերյալ:

Փետրվարի 28-ին Սովետական Միության հրապարակած հայտարարությունը խստորեն դատապարտում էր լարվածության խորացման ուղղությամբ ամերիկա-խորաչեղական մաներները ու նախազուշացնում, որ Մերձավոր արևելքի երկրներանքն այսպիսին էր. կամ քաղաքական կարգավորում, կամ պատերազմական գործողությունները: «Սովետական Միությունը՝ արարական ժողովուրդների բարեկամը,— ասված էր հայտարարության մեջ,— նրանց քաղաքական ու նյութական անհրաժեշտ օգնություն է ցույց տալիս խորաչեղական ագրեսորների դավթած հողերն ազատագրելու պայքարում»²⁵:

Մայիսի 4-ին Հ. Ռոշերսը այցելեց Կահիրե: Սազաթը հավաստիացրեց նրան, որ եգիպտական զորքը հիմնված է հետեւյալ սկզբունքների վրա: ԱՄՆ-ը չի է վճռականությամբ իրականացնելու № 242 բանաձևի բոլոր դրույթները և մերժում է ամեն տեսակի անշատ կամ ժամանակավոր կարգավորում, եթե այն կապված չէ պրոբլեմի ամբողջական կարգավորման հետ:

Ռոշերսի հետ բանակցությունների ժամանակ խորաչեղական կառավարությունը հանդես եկավ Սուեզի ջրանցքում նավազնացություն վերսկսման վերաբերյալ անհետատես մի առաջարկությամբ: Խորաչեղի քաղաքական գործիչները առաջարկում էին միայն մի փոքր ետ քաշել խորաչեղական դորքերը Սուեզի ջրանցքից, պայմանով, որ արգելվի եգիպտական և սովետական որևէ ռազմանավի անցումը ջրանցքով, զազարեցվեն պատերազմական գործողությունները և ԱՄՆ-ի հետ կնքվի անշատ հաշտության պայմանագիր: վերջապես, թույլ տրվեն խորաչեղական նավերին անցնել Սուեզի ջրանցքով:

ԱՄՆ-ի կառավարությունը մերժեց այդ առաջարկը²⁶:

Սովետա-արարական բարեկամությունը շարունակում էր մնալ որպես իմպերիալիզմի և հետագիմության հարձակում-

ների ղեմ արարական աշխարհի առաջադեմ ուժերի պայքարի զլխավոր գործոնը:

Այս տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ 1971 թ. մայիսի 27-ին Կահիրեում ստորագրված սովետա-արարական բարեկամության ու համագործակցության պայմանագիրը: Պայմանագրի կնքման միտքը, ինչպես վկայում է ՍՍՀՄ-ում ԱՄՆ դեսպան Մ. Ղալիբը²⁷, և ԱՄՆ-ի արտաքին գործերի մինիստր Մ. Ռիսզի վկայությամբ այդ հարցը ծագել էր Նասերի մոտ դեռևս 1967 թվականին և մնաց Նասերի ուշադրության կենտրոնում մինչև նրա կյանքի վերջը²⁸: 1971 թ. հունիսի 2-ին ԱՄՆ-ի Ժողովրդական ժողովը պայմանագիրը վավերացնելիս ընդգծեց, «Հուլիսի 23-ի հեղափոխության առաջնորդ Գամալ Աբդել Նասերը սկզբնավորեց և ամուր հիմքերի վրա դրեց արարա-սովետական բարեկամությունն ու համագործակցությունը»²⁹: Ժողովրդական ժողովում պրեզիդենտ Սադամը մեկնաբանելով պայմանագրի պատմական նշանակությունը, ընդգծեց. «Հանուն մեր զալիք սերունդների ապագայի, Սովետական Միության հետ մենք կնքեցինք սույն պայմանագիրը»³⁰:

Արարական հակամարտության խիստակալն ու հակասիրոնիստական պայքարի ամբապնդման ու խորացման ուղղությամբ մեծ նշանակություն ունեցան երեք կարևոր իրադարձություններ: Նախ Լիբանանի կոմկուսի III համագումարը (հունվար, 1972), երկրորդ, (1972 թ. մարտի 7-ին) Ազգային առաջադիմական ճակատի ստեղծումը Սիրիայում և, երրորդ, 1972 թ. ապրիլի 9-ին բարեկամության և համագործակցության պայմանագրի կնքումը ՍՍՀՄ-ի և Իրաքի միջև: Այս հարցերի մասին ավելի մանրամասն կխոսվի համապատասխան բաժիններում:

Մյուս կողմից, սակայն, արարական առաջադիմական շարժման ռիսերիմ թշնամիները շարունակում էին իրենց հանցափորձերը սովետա-արարական բարեկամության ջլատման ուղղությամբ: Արևմտյան ու արարական հետադիմական մամուլում երևացին այնպիսի անհիմն մեղադրանքներ, որ իբր Սովետական Միությունը պաշտպանում է «ոչ պատերազմ, ոչ

խաղաղություն» տիրող իրավիճակը, իբր նա չի ցանկանում, որ արարները շարունակեն իրենց ազատագրական պայքարը, իբր նա ձգտում է ռազմական բազաներ և առանձնաշնորհումներ ձեռք բերել արարական աշխարհում: Նման հերյուրանքների հերքման համար, մի կողմ թողնելով կոմունիստական մամուլի նյութերը, վկայակոչվեց 1972 թ. ապրիլի 30-ին հրատարակված սովետա-եգիպտական համատեղ պաշտոնական հայտարարությունը, որտեղ պարզորոշ ընդգծված է, որ խորայնական ագրեսիայի զոհը հանդիսացող արարական պետությունները լիիրավ են օգտագործելու պայքարի բոլոր մեթոդներն ու միջոցները՝ վերագարձնելու համար Իսրայելի կողմից զավթված արարական հողերը:

Իր հերթին հակահարված տալով ԱՄՆ-ի և Իսրայելի հերյուրանքներին Մադաթը 1972 թ. մայիսի 15-ին հայտարարում է. «Սովետական Միությունը երբեք չի պահանջել մեղանից որևէ բազա և նա այժմ էլ չունի նման բազա»³¹:

1972 թ. հունիսի 5-8-ը պաշտոնական այցելվ ՍՍՀՄ-ում էր գտնվում ՍԱՀ-ի պրեզիդենտ Հ. Ասադը: Անդրադառնալով մերձավորարևելյան պրոբլեմին, երկու կողմերը արձանագրեցին որ եթե չլիներ ամերիկյան իմպերիալիզմի սաղմահան ու նյութական օգնությունը, ապա Իսրայելը երբեք չէր կարողանա շարունակել իր արկածախնդրական կուրսը: «Ահա այս ամերիկյան աշակցությունն է, որ խոչընդոտում է կայուն և արդարացի խաղաղության հաստատմանը Մերձավոր արևելքում»³²:

Քաղաքական բեմահարթակում երկար քացակայությունից հետո, կրկին հայտնվեց Ռոշերսը, որի անվան հետ են կապված արարների դեմ նյութած մի շարք զավազրություններ: Հարկ է նշել, որ ամերիկյան դիվանագիտության ակտիվացումը կապված էր արարական աշակողմյան ուժերի աշխուժացման հետ հատկապես Եգիպտոսում: Անգամ մեծ հեղինակություն վայելող այնպիսի գործիչ ինչպիսին էր «ալ Ահրամ» թերթի գլխավոր խմբագիր Մ. Հեյքալը, փորձեց հայտնաբերության նշան դնել ՍՍՀՄ-ի և ԱՄՆ-ի քաղաքականության միջև: Նա Սովետական Միությանը «մեղսակից»

զարժրեց «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» տիրող վիճակի համար, քարոզում վերականգնել արաբա-ամերիկյան խզված գիվանագիտական հարաբերությունները:

Ավելի լիտիարար հանդես եկան բացահայտ աշակողմյան ուժերը Ա. Լ. Բաղդադիի գլխավորությունամբ, երբ Սադամին ներկայացրին իրենց հուշագիրը, սրում պարտություն ողջ պատասխանատվությունը բարդում էին արաբ-սովետական բարեկամության և նասերի վարած հակաիմպերիալիստական կուրսի վրա³³:

Այսպիսի պայմաններում, 1972 թ. հուլիսի 23-ին, Եգիպտոսի պրեզիդենտ Սադամը՝ հայտարարեց երկրում գտնվող սովետական զինվորական մասնագետների գործունեության ավարտը:

Արաբական առաջադիմական ուժերը, Իրաքի, Սիրիայի, Ալժիրի, ԵժՊՀ-ի և ՊԱԿ-ի ղեկավարները բացասական գիրք գրավեցին Սովետական Միության հետ հարաբերությունները վատթարացնելու Սադամի քաղաքականության նկատմամբ: Նրանք քաջ զիտակցում էին, որ դա վնաս է պատճառում ոչ միայն Եգիպտոսին, այլև ողջ արաբական ազգային-ազատագրական շարժմանը:

Ամիսներ շարունակ կիրանանի կոմունիստական մամուլը հետևողականորեն լուսաբանում էր սովետական մասնագետների հեռացման հարցը, տպագրում առաջադիմական կուսակցությունների ու հասարակական գործիչների կարծիքներն այս հարցի շուրջ:

Այդ մասին է վկայում նաև 1972 թ. օգոստոսի 10-ին «ալ Անուարի» թղթակցի հարցին Սիրիայի պրեզիդենտ Հ. Ասադի պատասխանը. «Մենք սովետական մասնագետների մեծ կարիք ենք զգում»³⁴:

Անպոտեմքերին Սիրիայի սոցիալիստական միության գլխավոր քարտուղար Ջ. ալ-Աթասին հայտարարեց, որ Սադամի որոշումը ոչ այլ ինչ է, եթե ոչ ղեմազոզիա, որ սովետական մասնագետներին նասերն էր հրավիրել՝ բավարարելու արաբների պայքարի պահանջներն ընդդեմ իմպերիալիզմի և Իսրայելի³⁵:

Սեպտեմբերի 29-ին՝ նասերի մահվան երրորդ տարելիցին՝ Լեբանանի առաջադիմական ուժերի կազմակերպած միտինգում ունեցած ելույթում ԼԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ք. Հաուին խստորեն դատապարտեց Սադաթի նահանջի քաղաքականությունը³⁶:

Նման դիրք զբաղեց նաև Լեբանանի Սոցիալիստական առաջադիմական կուսակցությունը³⁷:

Եզիպտոսի ղեկավարությունը, վարելով ԱՄՆ-ի հետ մերձեցման քաղաքականություն, սկսեց թշնամական վերաբերմունք ցուցաբերել անգամ արաբական մի շարք երկրների՝ Սիրիայի, Իրաքի, Ալժիրի և ԵՃԳՀ-ի նկատմամբ:

Այս լարված իրադրության պայմաններում հրամայական պահանջ էր դարձել Սիրիայի, Իրաքի, ՊԱԿ-ի և մնացած արաբական երկրների առաջադիմական ուժերի համատեղ պայքարի ճիշտ կազմակերպումը՝ դիմադրավելու համար սպառնացող վտանգը:

Այդ նպատակով 1973 թ. փետրվարին Բեյրութում գումարվեց ղեկնս 1972 թ. նոյեմբերին հիմնված «Պաղեստինյան հեղափոխության հետ արաբական համերաշխության ճակատ»-ի նստաշրջանը: Նրա ընդունած որոշումները մեծ արձագանք գտան արաբական աշխարհում: Գրանք կոչ էին անում ուժեղացնել արաբական առաջադիմական վարչակարգերի պայքարը ամերիկյան իմպերիալիզմի դեմ՝ օգտագործելով նալթը որպես կարևոր զինք և այդ պայքարում լիակատար նեցուկ կանգնել ՊԳԾ-ի արդար պայքարին և ամրապնդել սովետա-արաբական բարեկամությունն ու համագործակցությունը նստաշրջանը հանձնարարեց ՊԱԿ-ի գործկոմին մինչև աշուն նախապատրաստել հաջորդ հանդիպումը հետևյալ կարգախոսի ներքո. «Ոչնչացնել ամերիկյան իմպերիալիզմի շահերը արաբական աշխարհում»³⁸: Արաբական ժողովրդական զանգվածների ճնշման ներքո, Արաբական երկրների լիգան ապրիլի 5-ին որոշում ընդունեց ԱՄՆ-ի դիրքորոշման դատապարտման վերաբերյալ «ԱՄՆ-ի դիրքորոշումը, — ասված էր որոշման մեջ, — ամբողջովին հակասում է արաբական դատին և պաշտպանում Իսրայելի նվա-

Ճողական քաղաքականությունը»³⁰։ Այն միաժամանակ, պահաջում էր մշակել համաարարական քաղաքական-անտեսական ծրագիր՝ հակահարված տալու ԱՄՆ-ին, Իսրայելին և նրանց աջակցող պետություններին։

1973 թ. հունիսի 6-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննարկեց մերձավորարևելյան պրոբլեմը։ Հուլիսի 26-ին այն քննարկեց շմիացած երկրների բանաձևի նախագիծը, որը պահանջում էր հարգել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի և Գլխավոր ասամբլեայի բոլոր նախկին որոշումները մերձավորարևելյան կոնֆլիկտի վերաբերյալ, ընդգծելով, որ խաղաղության հաստատումը հնարավոր կլինի միայն ու միայն այն դեպքում, երբ հշարդով են բոլոր պետությունների ազգային սուվերենությունն ու տերիտորիալ ամբողջականությունը և բոլոր ժողովուրդների օրինական իրավունքները։ Հանձնարարվում էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին և նրա հատուկ ներկայացուցիչ-գեներալին Գ. Յարինգին՝ եռանդուն դործունեություն ծավալել նախագծի կենսազորման համար։ Միաժամանակ այն դատապարտում էր Իսրայելի զիրքավորումը։ Սակայն նախագիծը չընդունվեց, քանի որ ԱՄՆ-ը օգտվեց իր վետոյի իրավունքից։

Մաղաթն ընկավ քաղաքական ծանր վիճակի մեջ։ Նրա հույսերը շարդարացրին ո՞չ ԱՄՆ-ը և ո՞չ էլ արևմտյան տերությունները։ Նրանք որևէ կերպ չգտան մերձավորարևելյան պրոբլեմը փակուղուց դուրս բերելու համար։

Իրան պետք է գումարել նաև երկրի սոցիալ-անտեսական վիճակի վատթարացումը, ժողովրդական դանդվածների օրեցօր աճող դժգոհությունը, նրանց անհանգստությունը ձեռք բերած նվաճումների կորստի համար։ Ահա այսպիսի իրադրության մեջ սկսվեց արարա-իսրայելական նոր պատերազմը։

* * *

1973 թ. հոկտեմբերի 6-ին ծագած պատերազմը շոր-չորդն էր արաբական պետությունների և Իսրայելի միջև։

Անցրազառնալով հոկտեմբերյան պատերազմի պատճառները հարցին սինիստական շարժման տեսարան և հիմնադիրներին մեկը՝ Ն. Գուլզանը գրել է. «Հոկտեմբերյան պատերազմի պատասխանատվությունը գլխավորապես ընկնում է Միացյալ Նահանգների վրա»¹⁰:

Պատերազմական գործողությունները ծավալվում էին սիրիական (հյուսիսային) և եգիպտական (հարավային) ուղղմաճակատներում: Ապարդյուն անցան երրորդ՝ Նորզանանյան ուղղմաճակատը բացելու բոլոր ջանքերը: Հարկ է նշել, որ Նորզանանյան ճակատում կային 80 հազար զինվորներ, որոնց դիմաց կանգնած էին իսրայելական 10 հազար զինվորներ միայն¹¹: Հորզանանի պատերազմի մեջ շմտեկը Իսրայելին հնարավորություն տվեց իր զորքերը կենտրոնացնելու սիրիական ուղղմաճակատում:

Եվ սակայն ագրեսորը բախվեց վճռական դիմագրություն: Արաբական զորքերը, որոնց մարտական ուժին և ուղղմական վարպետությունը աճել էին, թշնամու կենդանի ուժերին ու տեխնիկային ծանր հարվածներ հասցրին:

Հոկտեմբերի 6-ին եգիպտական ցամաքային 3 հազարանոց զորամասերը մի քանի տեղով սրընթաց անցան Սուեզի ջրանցքը և 24 ժամվա ընթացքում գրավեցին «Բարլեի գիծը», որը համարվում էր հակատանկային անառիկ պատնեշ: Այդ գծի երկարությունը 160 էմ, իսկ բարձրությունը 20 մ էր: Գծում կային 36 ամբուսություններ¹²: Հարավային ուղղմաճակատում առաջին երեք օրերի հաղթանակները ձեռք բերվեցին, այսպես կոչված, կարճատև սլանի համաձայն: Ուստի, երբ եգիպտական զորքերն անցան Սուեզի արևելյան ափը, Սադամն շտապեց զինադադարի պայմանները հայտարարել և զրանով իսկ, ինչպես նշում է «ալ Ախբարը», նախաձեռնությունը զիջեց Իսրայելին¹³:

Սիրիական ուղղմաճակատում պատերազմական գործողություններն առաջին իսկ օրից խիստ բնույթ էին կրում: Սիրիական բանակի հերոսական մարտերի շնորհիվ ազատագրվեցին Գուլանի բարձունքների մեծ մասը, Հեբմոն լեռան վրա գտնվող խոշոր ստրատեգիական նշանակություն

ունեցող ամբուսթյունները, իսկ հոկտեմբերի 9-ին սիրիացիները շրջապատեցին ալ Քունեյտրա քաղաքը:

Հոկտեմբերի 9-ին աազմաճակատից ստացված ղեկուցադրերը անմիտիքաբ էին Իսրայելի համար, որը աազմական տեսակետից ծանր կացության էր մտանվել: Այդ իսկ պատճառով ԱՄՆ-ում Իսրայելի գեսպան Ս. Գինիցը դիմեց ԱՄՆ-ի պետական քարտուղար Հ. Քիսինջերին, խնդրելով զենք և աազմամթերք ուղարկել Իսրայել: Քիսինջերի հետ ունեցած զրույցի ժամանակ գեսպանը շոշափում էր հաս կրակի: զազարեցման հարցը և այն դերը, որ կարող էր ԱՄՆ-ը խաղալ այդ դործում: Իսրայելի կառավարության կարծիքով կրակը կարող էր զազարեցվել միայն այն պայմանով, որ եգիպտական ու սիրիական զորքերը ետ քաշվեն մինչև հոկտեմբերի 6-ը դոյություն ունեցած ծաճմանները⁴⁴:

ԱՄՆ-ից օգնություն խնդրելուց բացի, Իսրայելը եգիպտական աազմաճակատից 11 զրահատանկային զիվիզիա տեղափոխեց սիրիական աազմաճակատ, ուր վիճակն օրհասական էր: «Հրամայական խնդիր դաբձավ սիրիական զորքերի կասեցումը, թեկուզ զա պահանջի մեր ամբողջ ուժերի ներգըրումը»,—զրում էր Իսրայելի պաշտպանության մինիստր Մ. Գայանը⁴⁵: Իսրայելի այդ քայլին նպաստեց Սուեզն անցած եգիպտական զորքերի պատսիվությունը: Եգիպտոսի ղեկավարների հենց այդ տակտիկան էլ, «ալ Ախրար»-ի կարծիքով, Իսրայելին հնարավորություն տվեց իր ուժերի գերակըշոող մասը կենտրոնացնել Սիրիայի դեմ⁴⁶: Ավելին, լավատեղյակ զինվորական ռասնազեաների կարծիքով, «Եգիպտոսը զրանով իսկ կորցրեց հաղթանակի հնարավորությունը»⁴⁷:

Սովետական Միությունը պատերազմի առաջին օրվանից պաշտպան կանգնեց արարական ժողովուրդների արզարացի պայքարին: Սովետական կառավարության հոկտեմբերի 8-ի հայտարարության մեջ խիստ դաժապարտվում էր Իսրայելի ծավալապաշտական ու արկածախնդրական քաղաքականությունը: «Սովետական Միությունը,—ասված էր հայտարարության մեջ,—հավատարիմ ազատության ու անկախության ձըգ-

տող ժողովուրդներին զորավիզ լինելու իր սկզբունքային քաղաքականությունը: Հեանողականորեն հանդես է գալիս որպես արարական պետությունների հուսալի բարեկամ⁴⁸:

Իսրայելական զորքերը, օգտվելով ամերիկյան խմպերիալիզմի հովանավորությունից ու օժանդակությունից, կարողացան սիրիական աաղմաճակատում հասնել զգալի հաջողությունների: Այնուհետև՝ հոկտեմբերի 15-ին, իսրայելական զորքերը հակահարձակման անցան նաև եգիպտական աաղմաճակատում: Երանց հաջողվեց ճեղքել աաղմաճակատը և անցնել Սուեզի ջրանցքի արևմտյան ափը:

Սկզբնական շրջանում Սուեզի ջրանցքի արևմտյան ափն անցած իսրայելական զրահատանկային դիվիզիային դյուրությամբ կարելի էր ետ մղել, եթե եգիպտական բանակն ու Երան օդնող ալժիրյան զորքերը ժամանակին հակահարձակման անցնեին: Սակայն զա տեղի շունեցալ է մինչև հոկտեմբերի 22-ը Իսրայելը ջրանցքի արևմտյան ափ տեղափոխեց 12 հազար զորք և 200 տանկ ու հետազոյում բավականին ահաճություններ պատճառեց Եգիպտոսին⁴⁹:

Հոկտեմբերի 17-ին պարզ դարձավ, որ Եգիպտոսի աաղմական վիճակը սպառնալից է: Այդ պայմաններում Սովետական Միությունը վճռական քայլերի գիմեց իսրայելական ազրեսիան կասեցնելու և կրակը գաղաթեցնելու համար: Սովետական Միությունը կոնտակտներ հաստատեց ԱՄՆ-ի կառավարության հետ: Մոսկվա ժամանեց ԱՄՆ-ի պետական քարտուղար Քիսինջերը: Այդ բանակցությունների հիման վրա հոկտեմբերի 22-ին Սովետական Միության ու ԱՄՆ-ի առաջարկով հրավիրվեց ՄԱԿ-ի Անվտանգություն խորհրդի նիստ, որն ընդունեց № 338 բանաձևը: Այդ բանաձևով Անվտանգություն խորհուրդը կոչ էր անում որոշման ընդունումից ոչ ոչ քան 12 ժամ հետո գաղաթեցնել կրակը, զորքերը թողնելով իրենց դրաված դիրքերում: Բացի այդ, շահադրգուլված կողմերին կոչ էր արվում անհասպաղ սկսել ՄԱԿ-ի Անվտանգություն խորհրդի № 242 բանաձևի պահանջների կենսագործումը: Անվտանգության խորհուրդը միաժամանակ որոշեց շահադրգուլված կողմերի միջև բանակցություններ սկսել,

նպատակ ունենալով արդար ու կայուն խաղաղություն հաստատել Մերձավոր արևելքում⁵⁰։

Այդ ժամանակ արաբական ժողովրդական զանգվածները զենազորում էին պատերազմի առաջին օրերի հաղթանակներին խանդավառությունը և հույս ունեին, որ բաշար տրվելուց հետո ևս հաղթանակի համար Այդ իսկ պատճառով նրանք անակնկալի եկան Անվտանգության խորհրդի այս բանաձևից։

Աբարական այ հոսանքները փորձեցին վերահիշյալ բանաձևը ներկայացնել որպես սովետական նախաձեռնություն, որպես արաբներին պարտնջրված մի քայլ՝ Մերկացնելով այդ հերյուրանքները կրթանանի կոմկուսի օրգան «ալ Ախրար»-ը գրում էր, որ «Դա միանգամայն Եգիպտոսի խնդրանքով է կատարվել»⁵¹։

Եգիպտոսի կառավարությունն իր համաձայնությունը տվեց Անվտանգության խորհրդի 1973 թ. հոկտեմբերի 22-ի հայտնի բանաձևին։ Նույնպիսի դիրք զբաղեց նաև Միրիաձի կառավարությունը։ Հրապարակված սիրիական պաշտոնական հաղորդագրությունում ասված էր, որ «Առաջադիմական ազգային շահատի կենտրոնական զեկավարությունը քննարկեց Անվտանգության խորհրդի N 338 բանաձևը և որոշեց քննարկել այն։ քանի որ զա նախատեսում է իսրայելական զորքերի դուրսբերում արաբական օկուպացված տերիտորիաներից»⁵²։

Պաղեստինի աշատագրության կազմակերպության (ՊԱԿ) ներկայացուցիչը հայտարարեց, որ պաղեստինյան հեղափոխությունը ոչ մի առնչություն չունի այդ բանաձևի հետ։ Իրաքը նույնպես ժխտական դիրք զբաղեց Անվտանգության խորհրդի այդ բանաձևի հանդեպ⁵³։

Հոկտեմբերի 22-ին կրանանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քաղբյուրոն արտահերթ նիստ գումարեց՝ Անվտանգության խորհրդի որոշման լույսի տակ քննարկելու Մերձավոր արևելքի իրազրությունը։ Քաղբյուրոն կոչ արեց խուսափել արաբական առաջադիմական շարժման պառակտումից, որին ձգտում էին իմպերիալիզմն ու սիոնիզմը։

կէտի կենսագործումից, որով նախատեսւում էր իսրայիլ-լահան զորքերի հաքաշումը մինչև հոկտեմբերի 22-ը գրաված դիրքերը: Այդ պատճառով նոյեմբերի 30-ին Եգիպտոսի կառավարութիւնը որոշեց զազարեցնել բանակցութիւնները Իսրայիլի հետ:

Արարական անաշաղիմական ուժերը բաղմիցս նախազգուշացրել էին եգիպտական կառավարութիւնը և ԱՄՆ-ի միջև տեղի ունեցող մերձեցման հետևանքների մասին: Լիբանանի Անաշաղիմական սոցիալիստական կուսակցութիւնը XXIV համագումարում կուսակցութիւնը ղեկավար Քամալ Զումրլաթն ասաց. «Մենք պատերազմի և խաղաղութիւնը հարցում չպետք է համատանք քիսինչերէյան դիվանագիտութիւնը: Ամերիկյան ղեկավարութիւնը «խաղաղասիրական» ծրագիրը լոկ կեղծիք է, աչլապես նա կհրամարվէր Իսրայիլին զենք մատակարարելուց, կտախեր նրան նահանջել արաբական բռնազրաված հողերից և կնպաստեր պաղեստինցիների վերադարձին»⁵⁶: Սակայն, Սադաթը շարունակում էր համատալ Քիսինչերին, հայտարարելով. «Նս վստահում եմ նրան: Նա ինձ ճշմարտութիւնն է հայտնում»: Ի պատասխան նման հայտարարութիւն, ամերիկացի թղթակից էլեգրերով գրում էր. «Եթէ Սադաթը համատում է Քիսինչերին, ապա նա տխմար մարդ է»⁵⁷:

Հոկտեմբերյան պատերազմից հետո ստեղծված քաղաքական իրադրութիւնը պայմաններում խոշոր նշանակութիւն ունեցավ 16 արաբական պետութիւնների ղեկավարների՝ նոյեմբերի 26-ին, Ալժիրում գումարված ժողովը, որի օրակարգում դրված էին քաղաքական, տնտեսական և ռազմական բնույթի հարցեր և որին մասնակցում էին նաև ՄԱԿ-ի ներկայացուցիչները: Լիբիան և Իրաքը, որոնք ՄԱԿ-ի բանաձևերի նկատմամբ գրավել էին ժխտողական դիրք, ժողովին շմանակցեցին:

Ժողովն ընդունեց մի շարք որոշումներ, որոնցից ամենակարևորներն էին:

1. Ազատագրել Իսրայիլի բռնազրաված արաբական բո-

լոր տերիտորիաները, այդ թվում նաև՝ Երուսաղեմի արարական մասը:

2. Ծանաչել ՊԱԿ-ը որպես Պաղեստինի արար ժողովրդի օրինական և միակ ներկայացուցիչը: Այս հարցում Հորդանանը ձեռնպահ մնաց:

Սակայն ժողովը համաձայնություն չհանդես կալի՞ր որպես ղեկը օգտագործելու հարցում: Այստեղ Սաուդյան Աբաբիայի, Քուվեյթի և Թունիսի գիրքորոշումը հաղթանակ տարավ: Նրանք, ինչպես նշում է «ալ Ախբարը», գտնում էին, որ «նալիթի արտահանման արգելքը վնասում է եվրոպական որոշ բարեկամ երկրների, մի բան, որ Իսրայելը օգտագործում է որպես ղեկը՝ արարներին հակահարված տալու համար»⁵⁵:

Ժողովի մասնակիցները բարձր ղեակառարական տալով քաղաքական, ռազմական և տնտեսական այն օգնությունը, որ արարական երկրներին ցույց էին տալիս Սովետական Միությունն ու սոցիալիստական պետությունները, գատապարտեցին ԱՄՆ-ի քաղաքականությունը Մերձավոր արևելքում:

Ժողովը նպաստեց հանդուցային հարցերի վերաբերյալ արարների միացյալ գիրքորոշման հաստատմանը:

Մերձավոր արևելքում քաղաքական կլիմայի փոփոխությունները, ինչպես նաև զգալի շափով Սովետական Միության ջանքերի շնորհիվ միջազգային արևելքում արձանագրված զրահան տեղաշարժերը բարելավեցին Մերձավոր արևելքում ծագած ռազմական կոնֆլիկտի կարգավորման և Իսրայելական ազդեցության հետևանքների վերացման հեռանկարները: Դրա շնորհիվ էլ շահագրգռված կողմերը, ինչպես նաև Սովետական Միությունն ու ԱՄՆ-ը, համաձայնության եկան ժեկում հրավիրել հաշտության կոնֆերանս: Նրա ղուժարման կարևոր նախապայմանն այն էր, որ պատերազմող կողմերն իրենց զորքերը ետ քաշեին մինչև հոկտեմբերի 22-ը գոյություն ունեցած սահմանները: Իսրայելը համառում էր, այդ պատճառով էլ եղիպտական կառավարությունը բաղմիցս հայտարարել էր, որ չի մասնակցելու ժեկի հաշտության կոնֆերանսին, քանի ղեռ Իսրայելը չի կենսագործել զորքերի ետքաշման պահանջը:

Յաւոք, Եզրիպտոսի այդ դիրքորոշումը բացահայտորեն փոխվեց ղեկավարներին Քիսինշերի Եզրիպտոս կատարած երկրորդ այցից հետո։ Այն ժամանակ, երբ պատերազմական գործողությունները Գուանի բարձունքներում վերսկսվել էին, երբ արաբ կոմունիստներն ու այլ հայրենասիրական-առաջադիմական ուժեր Եզրիպտոսից պահանջում էին շինթարկվել ԱՄՆ-ի խարուսիկ քայլերին, եզրիպտական կառավարությունը գտնում էր, որ պետք է բանակցությունները տեղափոխել Փնե՝ ԱՄՆ-ի մտադրությունները «ստուգելու» համար։ «Այ Ախրաբը» իրավամբ նշում էր. «Եզրիպտոսի կառավարությունը չեղմեցանքը մենք ձգտում է բարելավել իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ։ Դա անավոր վտանգ է ներկայացնում, որի հետևանքով մենք խաղաղ պայմաններում կարող ենք կորցնել այն, ինչ ձեռք ենք բերել արյան դնով։ Զիջումների քաղաքականություն հետևանքով մենք կվերադառնանք նախապատերազմյան, եթե շատ ենք առավել վատթար վիճակի՝ անցադիր շնորհել ամերիկյան կարգավորման ծրագրերին»⁵⁹։

1973 թ. ղեկավարների 21-ին ժնևում սկսվեցին Մերձավոր արևելքին նվիրված հաշտության կոնֆերանսի աշխատանքները։ Կոնֆերանսի առաջին փուլին մասնակցում էին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կ. Վալդհայմը, ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոն, ԱՄՆ-ի պետական քարտուղար Հ. Քիսինշերը, Եզրիպտոսի արտաքին գործերի մինիստր Ի. Ֆահմին, Հորդանանի արտաքին գործերի մինիստր Զ. առ-Ռիֆաին և Իսրայելի արտաքին գործերի մինիստր Ա. էրանը։

Միջին հրաժարվեց մասնակցել Փնեի կոնֆերանսին, պատճառարանելով, որ «մեր երկրի շփումները Եզրիպտոսի և ԱՄՆ-ի հետ համոզեցին մեզ, որ կոնֆերանսը քննարկելու է մասնակի հարցեր։ Տվյալ պայմաններում այն ի վիճակի չէ հասնել հարցի կարգավորմանը Մերձավոր արևելքում, ուստի որոշեցինք շմասնակցել կոնֆերանսի աշխատանքներին»⁶⁰։

ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Գրոմիկոն իր ելույթում ավելի ոչ միայն Մերձավոր արևելքի իրադրության սեռել գնահատականը, այլև կոնստրուկտիվ առաջարկ արեց

այդ շրջանում կայուն և արդարացի խաղաղություն հաստատելու համար, որը հնարավոր կլինի միաձեռն այն ժամանակ, երբ Խորաշխարհը նահանջի 1967 թ. ապրիլի հետևանքով օկուպացրած արարական բոլոր հողերից և վերականգնվեն Պաղեստինի արար ժողովրդի օրինական իրավունքները: Այնուհետև Ա. Գրոմիչևն հայտարարեց, որ «Սովետական Միությունը պաշտպանել է և կպաշտպանի արարական ժողովուրդների շահերը՝ հօդուտ Մերձավոր արևելքի շրջանում կայուն և արդարացի խաղաղության հաստատման»⁶¹:

Ազգայոսի արտաքին գործերի մինիստր Ե. Յահմին իր ելույթում խոսեց 1967 թ. բռնագրավված արարական հողերի ազատագրության, երուսաղեմի արարական մասի հարյի կարգավորման, Պաղեստինի արար ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրավանցման, շրջանի բոլոր պետությունների տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության հարգման, խոշոր տերությունների կամ ՄԱԿ-ի երաշխիքների մասին: Սակայն նա բոլորովին շշուշոսեց խորաշխարհյան գործերի կազմման հարցը մինչև հսկանքների 22-ի սահմանները⁶²:

Խորաշխարհի արտաքին գործերի մինիստր Ա. Էրանը հայտարարեց, որ 1949 և 1967 թթ. գինազադարի գծերին վերադարձ չի կարող լինել: Այդ իսկ պատճառով ժնեի հաշտության կոնֆերանսը կանգնեց փակուղու առջև: Սակայն հետագայում տեղի ունեցան եզրույտա-խորաշխարհյան գաղտնի բանակցություններ, որոնց նպատակն էր հասնել զորքերի տարանջատմանը Սինայում: Եվ իրոք, 1974 թ. հունվարի 18-ին, ԱՄՆ-ի միջնորդությամբ, ստորագրվեց եզրույտա-խորաշխարհյան սազմանակատում զորքերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիրը, որով խորաշխարհյան գործերը դուրս բերվեցին Սուեզի շրանցքի արևմտյան ափից և կա քաշվեցին մոտ 20 կմ⁶³:

Այսպիսով, ժնեի հաշտության կոնֆերանսում առաջադրված խորաշխարհյան գործերի «լիակատար դուրսբերման» հիմնադրույթը փոխարինվեց «զորքերի տարանջատման» գրույթով, որն իր հերթին ճանապարհ հարթեց մերձավորու-

րեւելչան պրոֆրլեմի մասնակի ու փուլային և ոչ թե լիակատար կարգավորման համար:

Արարական կոմեունիստների կարծիքով, եզրպտա-խորանջելական համաձայնագիրը ոչ այլ ինչ էր, եթե ոչ Ետարանշատում եզրպտոսի ու արարական ազգային-ազատագրական շարժման միջև, սերտ միացում արարական հետադիմութան հետ, արարա-սովետական բարեկամութան պառակտում և ամերիկյան իմպերիալիզմի վերադարձ Մերձավոր արեւելք, այն էլ ամենալայն դանից»⁶⁵:

Եզրպտոսի կողմից զորքերի տարանջատման համաձայնագիրը ստորագրվելուց հետո Միրիան կանգնեց դժվարին ու բարձր կացության առաջ: Սակայն, արարական առաջագիմական ուժերն ամեն շանք զործադրեցին, որպեսզի Միրիան մենակ շմնար: Միրիայի պաշտպանութամբ հանդես էին գալիս Աւմիրը և Իրաքը: Նրա կողքին, ինչպես նշում էր Եալ Ախրարը», կանգնած էին նաև Սովետական Միութունը, սոցիալիստական մյուս երկրները և աշխարհի բոլոր խաղաղասեր ուժերը⁶⁵:

Միրիական ռազմաճակատում զորքերի տարանջատումը այլ բնույթ կրեց, քան եզրպտականում: 1974 թ. մարտին Իսրայելի նախահարձակման հետևանքով պատերազմական դործողությունները Միրիայի և Իսրայելի միջև վերսկսվեցին:

Ամերիկա-խորանջելական զիվանագիտությունը Գոլանի պրոֆրլեմի կարգավորման ուղղությամբ առաջադրում էր իսրայելական զորքերի դուրս բերումը միայն այն հողերից, որոնք գրավվել էին հոկտեմբերյան պատերազմի ժամանակ⁶⁶: Սակայն Միրիան մերժեց այդ առաջարկությունը և պահանջեց Գոլանի բարձունքների մեծ մասի, ալ-Քունեյթբայի և 1973 թ. գրավված հողերի ազատագրումը⁶⁷:

Սովետական Միությունը լիովին պաշտպանեց Միրիայի դիրքորոշումը: Սովետական Միության և Միրիայի տեսակետների լիակատար համընկնումը այդ հարցում հստակորեն դրսևորվեց, երբ ապրիլին պաշտոնական այցով Մոսկվա ժամանեց սիրիական կուսակցական-կառավարական պատվիրակությունը՝ Չ. Ասադի ղլխավորությամբ: Բանակցություն-

ների ընթացքում հանդամանորեն կարծիքներ փոխանակվեցին Մերձավոր արևելքի, ինչպես նաև միջազգային հրատապ այլ պրոբլեմների շուրջը: Կողմերը հավաստեցին Իսրայելի կողմից օկուպացրած արաբական բոլոր հողերի ազատագրման ըստ ամենայնի նպատակու իրենց վճռականությունը⁶⁵:

1974 թ. մայիսին ՍՍՀՄ արտաքին գործերի մինիստր Ա. Գրոմիչևն այցելեց Սիրիա: Բանակցությունների ժամանակ սիրիական կողմը հավաստեց իր դիրքորոշումը այն կապակցությամբ, որ «Սովետական Միությունը պետք է մասնակցի Մերձավոր արևելքում արգար ու կայուն խաղաղության հաստատման նպատակին ուղղված կարգավորման բոլոր փուլերին և բոլոր բնագավառներին»⁶⁶:

1974 թ. մարտի 11-ից մինչև մայիսի 31-ը սիրիական ճակատում ծավալված պատերազմական գործողությունները Իսրայելի համար ունեցան հյուսիշ բնույթ: Սիրիական բանակի տեղումության, ՍՍՀՄ-ի ցույց տված ռազմական, տնտեսական ու քաղաքական օժանդակության և արաբական առաջադիմական ուժերի քաջարի պայքարի շնորհիվ, Սիրիան դիմացավ իսրայելական ճնշմանը և ազդեցորը շկարողացավ որևէ հաջողության հասնել: Այս ամենի շնորհիվ, Սիրիայի համար բարենպաստ պայմաններում ժնեում բանակցություններ սկսվեցին Սիրիայի և Իսրայելի միջև: Մայիսի 31-ին ստորագրվեց սիրիա-իսրայելական զորքերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիր, որի հետևանքով իսրայելական զորքերը դուրս բերվեցին սիրիական այն հողերից, որ նրանք գրավել էին 1973 թ. (551 քկմ), ինչպես նաև 1967 թ. գրավածի մի մասից (162 քկմ), այդ թվում գաղառական կենտրոն ալ Քունեյթրայից, 50 հազար սիրիացիներ վերադարձան իրենց տները: Երկու կողմերի բուֆերային գոտում հաստատվեցին ՄԱԿ-ի զորքերը (1250 մարդ)⁷⁰:

Սիրիայի պրեզիդենտ Լ. Ասադին ՍՄԿԿ կենտկոմի հզած նամակում ընդգծված է, որ «զորքերի տարանջատումը լոկ մի քայլ է մերձավորարևելյան կոնֆլիկտի վերջնական կարգավորման ճանապարհին, որի առանցքը պետք է լինեն իսրա-

յևևական զորքերի գույքերումը 1967 թ. սկուպացված բուր արարական տերիտորիաներից և Պաղեստինի արար ժողովրդի օրինական ազգային իրավունքների ապահովումը: Այնուհետև ընդգծվում է համաձայնագրի նշանակությունը, որպես սիրիական ժողովրդի քաշարի պայքարի արգասիք⁷¹:

1974 թ. նոյեմբերին, Միրիայի կոմկուսի հիմնադրման 50-րդ տարեգարձի տոնակատարության առթիվ կայացած հանդիսավոր միտինգում, կուսակցության ղլխավոր քարտուղար և. Բազդաշը, անդրադառնալով զորքերի տարանջատման համաձայնագրին, այն զիտեց որպես սիրիական ժողովրդի խիզախ պայքարի արդյունք: Միաժամանակ նա ընդգծեց, որ «ԵՒԵ շիներ Սովետական Միությունը, սպա Միրիայի ազգային զրոշը չէր ծածանվի ազատագրված Քուենեյթրայի երկնրում»⁷²:

Գրանով ավարտվեց եզիպտա-իսրայելական և սիրիա-իսրայելական զորքերի տարանջատման առաջին փուլը:

Արարական առաջադիմական ուժերը, Սովետական Միությունը, սոցիալիստական երկրները և առաջադեմ մարդկությունը բազմիցս նախազգուշացրել են տվյալ համաձայնագրերը որպես մերձավորարևելյան պրոբլեմի վերջնական կարգավորում ներկայացնելու վտանգի մասին:

1975 թ. ապրիլի սկզբներին Միրիայի, Իրաքի, Լիբանանի, Հորդանանի, Քունիսի, Սուդանի, Ալժիրի և Մարոկկոյի կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդածողովը բննարկեց արարական աշխարհի իրադրությունը, հատկապես արարական բռնագրավված հողերի ազատագրման, արարական առաջադիմական կարգերի ամրապնդման և Պաղեստինի արար ժողովրդի իրավունքների վերականգնման հարցերը:

Խորհրդածողովի հրապարակած ղլխավոր ղեկարացիայում սահմանված էին արարական առաջադիմական ուժերի առջև ծառայած խնդիրները: Անդրադառնալով արարական առաջադիմական կարգերի ամրապնդման հարցին, խորհրդածողովը կոշ էր անում ամրապնդել այդ կարգերը Միրիայում, Իրաքում, Ալժիրում և Ժողովրդական-ղեմոկրատա-

կան Եմենում, աշակցել Եգիպտոսի առաջադիմական աշխատիչն ուժերին՝ հանուն առաջադիմական կուրսի կիրառման, կապիտալիզացիոն լուծումների մերժման, դեմոկրատական ազատությունների ապահովման և առաջադիմական ուժերի դեմ կիրառվող հալածանքների կանխմանը⁷²։

* * *

Այն բանից հետո, երբ Եգիպտոսը Իսրայելի հետ ստորագրեց զորքերի տարանջատման առաջին համաձայնագիրը, արաբական առաջադիմական ուժերն անհանգստացան, որ այն կվերածվի մերձավորարևելյան կոնֆլիկտի մասնակի և անշատ կարգավորման, այլ խոսքով այն կզատնա նաև տարանջատում Եգիպտոսի և Արաբական արևելքի երկրների միջև։

Արաբական կոմունիստական կուսակցություններն ու առաջադիմական շրջանները իրավամբ եգիպտական անակրզբունքային զիրքորոշմանը հակադրում էին սիրիական սկրզբունքայնութունը։ Նրանց ուշադրությունից չէր վրիպում, որ տվյալ ժամանակաշրջանում սովետա-սիրիական համագործակցությունն այնքան էր ուժեղացել, որ կարժես թե մերձավորարևելյան պրոբլեմի կարգավորման հարցում գոյացել էին իրարամերձ երկու ճակատներ՝ սովետա-սիրիական և եգիպտա-ամերիկյան։ «Վերջին տարիներին լավ փոքրմբռնում հաստատվեց մեր և Սիրիայի միջև Մենք համաձայնեցված ենք գործում միջազգային շատ պրոբլեմների և, ամենից առաջ, մերձավորարևելյան պրոբլեմի կապակցությամբ»⁷³, ասված է սովետա-սիրիական համատեղ հայտարարության մեջ։

Սիրիան կտրականապես մերժում էր պրոբլեմի կարգավորման «քալ առ քալ»-ի քաղաքականությունը և կոչ էր անում անհապաղ հրավիրել ժնեի հաշտության խորհրդածոյովը։ Մինչդեռ Եգիպտոսի ղեկավար շրջանները շարունակում էին վարել հենց այդպիսի՝ զիջողական քաղաքականություն իմպերիալիզմի գլխավոր պատվար ԱՄՆ-ի նկատմամբ, 48

Նրան ներկայացնելով որպես միակ ուժը, որն ի վիճակի է կարգավորել արաբա-խորաշխարհի կոնֆլիկտը: Իսկ իրականում ինչպե՞ս էր լուծելու ԱՄՆ-ը այս կնճոռա հարցը: Պետական քարտուղար Քիսինձերը Իսրայելին խորհուրդ էր տալիս զիջել Սինայի ստրատեգիական լեռնանցքերը՝ ժամանակամիջոց շահելու միտումով, որովհետև «իրադրության ստանդուրդը կստիպի Եգիպտոսին միանալու ծայրահեղ արաբների համբարին և հարցականի տակ կզ՞ի ԱՄՆ-ի աճող ազդեցությունը»⁷⁶:

1975 թ. հունվարին, Եգիպտոսի պրեզիդենտ Սադատը հայտարարեց, որ ինքը համաձայն է ամերիկյան կարգավորմանը և շի քաջատուժ էզիպտա-սովետական բարեկամության և համադործակցության պաշտանագրի խղումը⁷⁶:

Արաբական կոմունիստական կուսակցություններն ու առաջադիմական ուժերը խիստ դատապարտեցին ամերիկյան իմպերիալիզմի մեքենայությունները: Նրանք կոչ էին անում արաբ ղեկավարներին շխարվել ամերիկյան քաղցրավուն խոստումներով: Այդ առթիվ ՊԱԿ-ը նախազգուշացրեց, որ «Արաբ ղեկավարներից որևէ մեկի կողմից այս ծրագրի ընդունումը կնշանակի խայտառակ դավաճանություն»⁷⁷:

Արաբական աշխարհում հակաամերիկյան բողոքի ալիքի բարձրացման հետ մեկտեղ, Վաշինգտոնում հորինվեց և արաբական հետադիմական ուժերի կողմից փողհարվեց այն ստահոգ լուրը, որ իբր թե նիքսոնին փոխարինած պրեզիդենտ Զ. Ֆորդը հիմնովին վերանայելու է իր քաղաքականությունը մերձավորարևելյան պրոբլեմի հարցում:

«Ալ Ախբար»-ը շտապեց լուսաբանել իրերի վիճակը, մերկացնելով ամերիկյան նոր տակտիկայի շարանները նպատակները, որոնք, թերթի կարծիքով, ոչ այլ ինչ էին, եթե ոչ՝ «ի դերև դարձնել հոկտեմբերյան պատերազմի զրական արդյունքները, Եգիպտոսին մղել երկկողմանի համաձայնության, մեկուսացնել Սիրիային, ծնկի բերել ՊԱԿ-ին, հարվածել արաբա-սովետական բարեկամությանը և, վերջապես, հանդիսա խզով թելադրել ամերիկյան իմպերիալիստական լուծումները»⁷⁸:

Այդ օրերին «ալ Ախարը» տպագրեց լիբանանցի հրատարակատու Ալբեր Ֆարհաթի «Ամերիկյան լուծում՝ Յորդի անունով» հոդվածը։ Հեղինակը մերկացնում էր ֆարգյան լուծման էությունը, որն իրականում նախորդից տարբերվում էր միայն խաղաքառերով։ «Եթե մինչ այդ Իսրայելը Եզրայտոսից պահանջում էր հաշտության պայմանագրի կնքում, ապա այժմ բավարարվում է եզրայտական «ռազմադաշտային երաշխիքներով», այսինքն՝ շորքերի տարանջատման շրջանում համատեղ պահակախմբեր կազմել, թուլացնել հակաիսրայելական պրոպագանդան և թույլ տալ իսրայելական նավերին անցնել Սուեզի ջրանցքով»⁵⁷։

Հունիսի 25-ին Իսրայելի վարչապետ Թարինը հայտարարեց, որ Իսրայելը պատրաստ է ստորագրելու անջատ պայմանագիր Սինայի վերաբերյալ։ Նա միաժամանակ նշեց, որ նման բան չի կարող լինել Գոլանի բարձունքների հարցում։ Նույն օրերին սիրիական «ալ Բասս» թերթը վտահեցնում էր, որ Սիրիայի զիբքորոշումը բխում է համազգային խնդրի անբաժանելիության ու միասնականության սկզբունքներից։ Խիստ դատապարտելով ամերիկյան «բայլ առ քայլ» քաղաքականությունը, թերթը այն բնութագրում էր որպես «Նոր մասեր հօգուտ Իսրայելի, որի արդյունքն է քաշշուկն ու ձգձգումը՝ ժամանակամիջոց շահելու միտումով»⁵⁸։

1975 թ. օգոստոսի 18—19-ը լիբանանի կոմկուսի Կենտկոմի պլենումը քննելով արաբական աշխարհի առջև ծառայած պրոբլեմները, իրավամբ ցույց էր տալիս, որ խմբերիալիզմի ձևոք բերած որոշ հաշտություններն արդյունք են արաբական աշխարհում, հակապակս Եզրայտոսում, աշակողմյան միտումների ուժեղացման։ «Եզրայտական ղեկավարության ցուցարբերած անհիմն զիշումները՝ հասնելու երկկողմանի անջատ հաշտության՝ Սինայի վերաբերյալ, աստահարում են Եզրայտոսի ազգային սուվերենությունը, հանդեցնում են Սիրիայի մեկուսացմանը, անտեսում են ՊԱԿ-ի գոյությունը և փորձում են Պաղեստինի արաբ ժողովրդի դատը հանձնել Հորդանանի խնամակալությանը»⁵⁹։

Արաբական աշխարհի հրատապ խնդիրների և, մասնա-

վորապես, պաղեստինյան ցամառ հարցի լուսարանման ուղ-
ղությամբ «ալ Ախրար»-ը ձեռնամուխ եղավ շնորհաշատ
աշխատանքի: Թերթը մի քանի ամիս շարունակ տպագրեց
ՊԱԿ-ի ղեկավարների հետ բովանդակալից հարցազրույցներ:
ՊԱԿ-ի ինֆորմացիայի ղեկավարամեկնաթի վարիչ Յասիր Աբդ
Ռաբույի հետ հարցազրույցի միջոցով «ալ Ախրարը» առաջին
անգամ բացահայտեց ու մերկայացրեց Սինայի վերաբերյալ
կնքվելիք համաձայնագրի քաղաքական գործարքի բնույթը:
այն ղեկպրծմ, երբ եգիպտական ղեկավարությունը պնդում էր,
թե պայմանագիրն իրր սոսկ ռազմական բնույթ է կրում:
«Մեր բոլոր տեղեկությունները հակառակն են փաստում, մա-
նավանդ որ եգիպտական ղեկավարությունը հայտարարում է,
թե կարծիքների համընդհանրությունն արդեն նվաճվել է»⁸²,—
պնդում էր Աբդ Ռաբուն:

1975 թ. սեպտեմբերի 1-ին ստորագրվեց Սինայի վերա-
բերյալ եգիպտա-իսրայելական զորքերի տարանջատման
երկրորդ համաձայնագիրը:

Ըստ այդ համաձայնագրի, եգիպտոսը, փաստորեն, ան-
ջատվից Արաբական արևելքից՝ Սիրիային և ՊԱԿ-ին մենակ
թողնելով թշնամու գեմ, այլ խոսքով, իրականություն դար-
ձավ իմպերիալիզմի վաղեմի երազանքը: Այն ապահովեց
ԱՄՆ-ի ներկայությունը Սինայում, որը խոչընդոտելու էր
արաբական ազգային-ազատագրական պայքարին:

Իսրայելն այն համարեց «լավագույն համաձայնություն
արարների հետ», այսինքն ավելի լավ, քան նույնիսկ 1948-ի
համաձայնագիրը, որը ռեակցիայի իշխանության պայման-
ներում փաթաթվեց արաբների վզին:

Այդ համաձայնագիրը նոր բարդությունների առաջ կանգ-
նեցրեց Պաղեստինի արաբ ժողովրդի ազատագրական պայ-
քարը, անտեսեց նաև 1974 թ. ՄԱԿ-ի բանաձևը, որը ճանաչեց
պաղեստինյան ժողովրդի անկապտելի իրավունքները, նե-
րառյալ նրա ինքնորոշման, սեփական պետություն ստեղծելու
իրավունքը:

Միաժամանակ ժնեի հաշտության կոնֆերանսի գումա-
րումը մատնվեց բախտի անիվին և, հետևաբար, խափանվե-

ցին մերձավորարևելյան կոնֆլիկտի համապարփակ կարգա-
վորման հնարավորությունները:

Սինայի համաձայնությունը ողջ արաբական աշխարհում
լուրջ տագնապ առաջացրեց: Տեղի ունեցան ժողովրդական
զանգվածների ցասման ցույցեր Սիրիայում, Իրաքում, Լիբա-
նանում, Լիբիայում, Ալժիրում և այլուր: Ի նշան բողոքի հրա-
պարակվում էին պաշտոնական հաղորդագրություններ, արա-
բական առաջադիմական կուսակցությունների, կազմակեր-
պությունների և հասարակական ու քաղաքական գործիչների
գատապարտիչ հայտարարություններ:

Այսպես, Լիբանանի կոմկուսի Կենտկոմի քաղքյուրոյի
հայտարարության մեջ ընդգծված էր. «Մենք վստահ ենք, որ
արաբ ժողովրդական ռանգվածները ատակ են ձախողելու այդ
զավազրություն-համաձայնությունը, տապալելու զատաճան-
ներին ու դասայլերներին»⁵⁵, ՊԱԿ-ի գործկոմի հայտարարու-
թյունը ևս խիստ գատապարտեց գործարքը, այն համարելով
արաբ ժողովրդական զանգվածների կամքին հակառակ. «Հա-
մաձայնությունը քաղաքական է իր բնույթով, որովհետև այն
զաղարեցնում է պատերազմը թշնամու դեմ: Այն խոր վերք է
պատճառում եգիպտական ժողովրդին ու բանակին, ինչպես
նաև ողջ արաբ ազգին»⁵⁶:

Ուշադրով էր Սիրիայի Բաաս կուսակցության համազ-
գային ղեկավարության անդամ Աբդուլլա ալ Ահմարի բաց
նամակը Սադաթին, որում նա մերկացնում էր այն հերյու-
րանքը, թե Սիրիան իբր արտաքուստ խաշակրաց արշավանք
էր մղում Եգիպտոսի դեմ, իսկ ներքուստ ձգտում էր համանը-
ման համաձայնության: Նամակի եզրափակիչ մասում ալ Ահ-
մարը Սադաթին դիմում էր հետևյալ բառերով. «Վստահ եղե՛ք,
որ ԱՄՆ-ին հաշտվեց կոտրել սրի կեսը միայն, իսկ նրա
բռնակը մնում է արաբ աննկուն մարտիկի ձեռքում»⁵⁷:

1975 թ. սեպտեմբերի 4-ին Իրաքը նույնպես գատա-
պարտեց եգիպտա-խորաչեխական համաձայնությունը:

Արաբական աշխարհում բարձր դրվատանքի արժանա-
ցավ Սինայի համաձայնության նկատմամբ Սովետական

Միության սկզբունքային դիրքը: ՊԱԿ-ի նախագահ Արաֆատին հղած ուղերձում սովետական ղեկավարությունը նշում էր, որ սովետական պատվիրակությունը մերժեց զնալ ժնե, որպեսզի չհովանավորեր երկկողմանի անջատ համաձայնագիրը:

Կոմունիստական ու ղեմնկրատական մամուլն այդ օրերին ընթանում էր պայքարի առաջին շարքերում: Տպագրվում էին հրապարակախոսական բողոքունը հողվածներ, ծաղրանկարներ և խոսույն խորագրեր. «Ո՞րք ուժերը ի սպաս զենք զիմադրավելու համար անձնատվությունը», «Ո՞չ ամերիկյան լուծմանը», «Մեր հողը ամերիկյան աճուրդի շի գրված», «Դավադրություն-համաձայնություն», «Համաձայնությունը կանաչ լույս է սիոնիստներին»:

1976 թ. գումարված արարական կոմունիստական երանվորական կուսակցությունների խորհրդակցության ուշադրության կենտրոնում էր գտնվում արաբա-իսրայելական կոնֆլիկտի հանգուցային պրոբլեմը: Հրապարակված հայտարարությունը ընդհանրացնում էր իմպերիալիզմի, սիոնիզմի և ներքին արաբական հետադիմության ղեմ հեղափոխական ուժերի համախմբան համար մղված պայքարի հարուստ փորձը: Խորհրդակցությունում վճռական հակահարված տրվեց աչ և ձախ օպորտունիստական ու նեղ-ազգայնական միտումներին, որոնք երևան էին Եկեղ արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ: Եզրիպտա-իսրայելական պայմանագիրը բնութագրելով որպես հոկտեմբերյան պատերազմին հաջորդող կոպիտուլյանտական ամենախայտառակ ակտ, խորհրդակցության մասնակիցները միաժամանակ ընդգծում էին, որ ամերիկյան սեպարատ ու փուլային կարգավորումները իսրայելական օկուպացման հավերժացման և իմպերիալիզմի նկրտումների իրականացման համար գործարար միջոցներ են պարզապես»⁸⁶:

Այդ կապիտուլյանտական դժի տրամաբանական վախճանը եղավ 1978 թ. հուլիսի 17-ին Քեմպդեյվիդում ԱՄՆ-ի, Քսրայելի և Եզրիպտոսի միջև ստորագրված համաձայնա-

գրեւը, որոնց մենք ավելի հանգամանորեն կանդրադառնանք աշխատութեան հաջորդ մասերում:

Այսպիսով, ամերիկյան իմպերիալիզմը, սիոնիզմը և արաբական հետադիմական ուժերը փորձում էին հարված հասցնել Մերձավոր արևելքում հակաիմպերիալիստական հեղափոխական ուժերին, այստեղ պահպանել և ամրապնդել իրենց դիրքերը: Իմպերիալիզմը բռնել էր արաբների միջև երկպառակտչական կոնֆլիկտներ հրահրելու ուղին:

Մյուս կողմից, արաբական առաջադիմական վարչակարգերը, ազգային հայրենասիրական ուժերը, նրանց կազմակերպութեանները և առաջին հերթին՝ կոմունիստական կուսակցութեանները մորիլիզացնում են արաբական ժողովրդական զանգվածներին և պայքարում իմպերիալիզմի, սիոնիզմի ու արաբական հետադիմութեան ծրագրերը ձախողելու և արաբական երկրների զարգացումը առաջադիմութեան ուղիով տանելու համար:

Գ Լ Ո Ւ Ե Ե Բ Կ Բ Ո Ր Դ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱԳԻՄԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՐԱՅՈՒՄ

1961 թ. սեպտեմբերի 28-ին Սիրիան անշատվեց Եզիպ-տոսից և դուրս եկավ Արաբական Միացյալ Հանրապետու-թյան կազմից: Երկրում հաստատվեց բուրժուա-կալվածա-տիրական ուժեր, որը, սակայն, անկարող եղավ լուծել երկրի առջև կանգնած քաղաքական և սոցիալ-տնտեսական խնդիր-ները:

1963 թ. մարտի 8-ին պետական հեղաշրջման հետևան-քով իշխանությունը պարտադրեց ամբողջով մանրբուրժուական Բաաս կուսակցությունը, որի վարած քաղաքականությունը իր բնույ-թով հակասական էր Մի կողմից այն դեմ էր խոշոր բուր-ժուակալվածատերերին, իսկ մյուս կողմից հակադեմոկրա-տական ու հակակոմունիստական քաղաքականություն էր վարում:

Բաասի ներկուսակցական պայքարում դրսևորվեց երկու ուղղություն. նախ, աչ թեք, որը քողարկված գաղափարական կեղծ ֆրազներով, շէր կարողանում կողմնորոշվել՝ նախա-պատվությունը արաբական միասնականությանը՝ տալ թե՛ սոցիալիզմին: Այդ թեք համախմբվելով հետադիմական ուժերի հետ 1965 թ. վերջերին կազմեց աշակողմյան կա-ռավարություն: Երկրորդը, ձախ թեք, որը ինչպես նշված է Սիրիայի կոմունիստական կուսակցության (ՍԿԿ) IV համա-գումարի փաստաթղթերում, գիտակցում էր խոշոր բուր-ժուազիայի դեմ պայքարի անհրաժեշտությունը՝ հենվելով

բանվորներին, գյուղացիներին և աշխատավորների աջակցության և կոմունիստական ու այլ առաջադիմական ուժերի համագործակցության վրա՝

Բաասի ներսում եղած հակասությունների առաջին և ուժգին պայթյունը տեղի ունեցավ 1966 թ. փետրվարի 23-ին, երբ կուսակցությունից վտարվեց Աֆլակ-Բիտար աջ օպորտունիստական թևը: Իշխանության գլուխ անցավ Բաաս կուսակցության ձախ թևը: Հենց այդ ժամանակ էլ կոմունիստների և բասականների միջև համագործակցության հիմք դրվեց: Գրա առաջին և ամենախոշոր արդյունքն եղավ կոմկուսի ընդգրկումը կառավարության կազմում: Նրա ներկայացուցչին հատկացվեց մինիստրական մեկ պորտֆել:

1969 թ. հունիսին Դամասկոսում գումարվեց ՍԿԿ III համագումարը, որն անցկացվեց հետևյալ լողունգի ներքո. «Պայքար հանուն արարական երկրների դեմ խորայնլակական ազրեսիայի հետևանքների վերացման, Սիրիայի ազգային-առաջադիմական վարչակարգի ամրապնդման, սոցիալիզմի ու արարական միասնականության»:

Համագումարը քննարկեց կոմունիստներին, բասականների և այլ առաջադիմական ուժերի համագործակցության, ազգային-հայրենասիրական վարչակարգի ամրապնդման, սոցիալ-տնտեսական վերափոխությունների խորացման, դեմոկրատական ազատությունների ընդլայնման, խորայնլակական ազրեսիայի հետևանքների վերացման, արարական միասնականության, սովետա-արարական բարեկամության ու համագործակցության և այլ հարցեր: III համագումարը, լսելով և քննարկելով ՍԿԿ Կենտկոմի զլխավոր քարտուղար Խ. Բագդաշի ղեկուցումը, լիովին հավանություն տվեց Կենտկոմի լեներինյան կուրսին և պրակտիկ գործունեությանը, հաստատեց կուսակցության տնտեսական ու ազրարային ծրագրերը և կուսակցության կանոնադրությունը:

Երրորդ համագումարի զլխավոր հարցերից մեկը միասնական ճակատի ստեղծման հարցն էր: Եներևով դասակարգային սկզբունքային դիրքից կոմկուսը գտնում էր, որ «Աֆլակ-Բիտար աջ թևի վտարումը (Բաաս կուսակցությունից—Պ. Ս.)

ինքնին կարևոր գործոն է, սակայն դա բնավ չի նշանակում, որ Բաասը համաձայն ու միախմբված ուժ է: Չինվելով համբերատար ու ճկուն քաղաքականություն, կոմունիստները վստահ էին, որ համագործակցությունը բաասականների հետ «կամրապնդի ձախակողմյան միտումները, ձեռք կրերի տասանվեց տարրերի վստահությունը և կմեկուսացնի աշակղմյան ուժերին»:

Բաաս կուսակցության ներքին քաղաքականությունը, կոմունիստների կարծիքով, թույլ էր տալիս նշելու, որ Սիրիան սպրում է առանձնահատուկ պատմական փուլ, որին հատուկ է սազզային ղեմնկրատիայի հեղափոխության խնդիրների համառոտումը, այն նախադրյալների հետ, որոնք անհրաժեշտ են սոցիալիզմին անցնելու համար: Սակայն կոմկուսը զսնում էր, որ այդ «խնդիրների իրականացումն անհնար է առանց ազգային-առաջադիմական կազմակերպված ուլայն ճակատի»⁶, — ասված է III համագումարի նյութերում:

Հարկ է նշել, որ 1966—1970 թթ. Բաասի իշխանության տարիներին բավականաչափ սխալներ թույլ տրվեցին: Բաասը պաշտոնապես շճանաչեց կոմկուսին, մերժեց ազգային-առաջադիմական ճակատի և ժողովրդական ժողովի կազմավորման առաջարկը, սահմանափակեց ղեմնկրատական ազատությունները, իսկ նրա անհեռատես արտաքին քաղաքականությունը հետևանքով Սիրիան միջազգային ասպարեղում սպրեց լիակատար մեկուսացում:

Ներկուսակցական պայքարը Բաասի շարքերում կրկին սրվեց: Այսպիսի պայմաններում, 1970 թ. հոկտեմբերի 30-ին հրավիրվեց Բաաս կուսակցության համարաբարական X արտահերթ կոնֆերանսը: Ներկուսակցական պայքարն ընթանում էր մի կողմից հանրապետության պրեմիեր մինիստր Ն. Աթաթի և կուսակցության ղեկավարության անդամ, ղինվորական Ս. Ջադիդի, իսկ մյուս կողմից՝ պաշտպանության մինիստր զեներալ Հ. Ասադի և նրա ղինակիցների միջև: 1970 թ. նոյեմբերի 13-ին Բաաս կուսակցության ղինվորական ղեկավարությունը Հ. Ասադի գլխավորությամբ վերցրեց իշխանությունը Սիրիայում և կազմեց ժամանակա-

վոր կառավարությունն: Ասազը Հայտարարեց, որ նրա նպատակն է ուղղել թույլ արված սխալները: Այստեղից էլ՝ «Ուղղել շարժում» անվանումը:

Բաաս կուսակցության ժամանակավոր անդիտնալ ղեկավարությունը Հրապարակեց «Նոյեմբերի 16-ի Հայտարարությունը», որտեղ խոսվում էր այն մասին, որ «ուղղել շարժումը» նպատակ ունեւր մեկ միասնական ճակատում միավորել բոլոր առաջադիմական ուժերը, երեք մասվա ընթացքում կազմել ժողովրդական ժողով, մշակել երկրի մշտական սահմանադրություն, ուժեղացնել երկրի պաշտպանունակությունը, խորացնել սոցիալ-տնտեսական վերափոխությունները, ամրապնդել սովետա-արաբական բարեկամությունը և շարունակել պայքարը Հանուն արաբական գրավված հողերի ազատագրման: Այդ Հայտարարությունը հանդիսացավ Բաաս կուսակցության հետագա գործունեության ծրագիրը⁷:

Մերիայում կատարված քաղաքական իրազարձաւթյունների գնահատականը արված է ՄԿԿ Կենտկոմի 1970 թ. նոյեմբերյան պիւնեումում: Անդրազատնալով Բաաս կուսակցության հետ համադործակցության հարցին, կոմկուսի Հայտարարության մեջ նշված էր, որ Բաասի նոր ծրագիրը իրենից ներկայացնում է հաջող ծրագիր, որի շուրջ կարելի է համախմբել Մերիայի ազգային-առաջադիմական բոլոր ուժերը⁸:

Հայտնի է, որ Մերիայի ժամանակակից պատմության մեջ վճռական դեր է խաղացել բանակը: Պետական գինիորական հեղաշրջումների մեծ մասը կատարել է կրտսեր և միջին ստախճանի սպայությունը, որն իր սոցիալական ծագումով պատկանում է մանր և միջին բուրժուազիայի խավերին: Այդ սպայությունը, ինչպես նշում է կրտսեանի կոմկուսի Կենտկոմի անգամ Փարիս Մրուվեն, «աշքի է ընկնում իր հայրենասիրությամբ և իմպերիալիզմի հանդեպ իր ունեցած ատելությամբ»⁹: Նույն միտքն է զարգացնում սովետական հայտնի արևելագետ Գ. Միրսկին, երբ գրում է. «Առաջադեմ սպայությունը Բաասին մղեց դեպի ձախ և փոխեց նրա բնույթը և ուղղությունը»¹⁰: Բաաս կուսակցությունը «գինվելով հեղափոխական-գեմեկրատական բարեփոխումների ծրագրով, երկր-

ըր տանում է զարգացման ոչ կապիտալիստական ուղիով»⁹:

Սիրիայի նոր ղեկավարությունը բավականաչափ ընդլայնեց համազորժակցությունը կոմունիստների հետ, որոնք 1970 թ. ընդգրկվեցին ժամանակավոր կառավարության կազմում: ՍԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անգամ Զահիր Աբդ սամաւիլը զարձավ պետական մինիստր, իսկ Կենտկոմի անգամ Օմար աւ-Սիրբաահին՝ հաղորդակցության մինիստր: Բացի բասականներից ու կոմունիստներից կառավարության մեջ մտան Արաբական սոցիալիստական միության (ԱՍՄ), Արաբական սոցիալիստական շարժման և Սոցիալիստ-յունիոնիստների շարժման նրեկայացուցիչները: Այդ առթիվ ՍԿԿ-ի հրապարակած հայտարարության մեջ նշվում էր, որ «սույն կառավարությունը իրենից ներկայացնում է սղգային-սոաւազաղիմական ուժերի բլոկ»¹⁰:

Սիրիայի հասարակական-քաղաքական կյանքում կարեւոր իրադարձություն էր 1971 թ. փետրվարի 17-ի ղեկընտով խորհրդարանի՝ ժողովրդական ժողովի կազմավորումը: Այն բաղկացած էր 173 ղեկուսատաններից, որոնք ներկայացնում էին բոլոր առաւաղիմական ուժերը: Ժողովրդական ժողովում Բասս կուսակցությունն ուներ 87, իսկ կոմկուաը՝ 8 ներկայացուցիչ¹¹:

ՍԿԿ քաղբյուրոյի անգամ, հետադալում պետական մինիստր Յուսեֆ Ֆայսալը «ալ Ախբար» շաբաթաթերթի թրդթակցի հետ ունեցած զրույցի ժամանակ նշեց, որ «ժողովրդական ժողովի մեծամասնությունը կազմում են առաւաղիմական ուժերը, ուժեր, որոնք հանգես են զալիս իմպերիալիզմի դեմ, պայքարում առաւաղիմական կորգի ամբապընդման համար, բարձրացնում սոցիալիզմի գրոշը, ձգտում արաբական առաւաղիմական միասնության և կոչ են անում արաբ-սովետական բարեկամության ու սերտ համազորժակցության»¹²:

1971 թ. մարտի 2-ին ժողովրդական ժողովը համանություն տվեց Բասս կուսակցության զլխավոր քարտուղար Հ. Ասադի թեկնածությունը՝ Սիրիայի պրեզիդենտի պաշտոնի

Համար և որոշում ընդունեց Համապատասխան Հանրաքվե անցկացնելու մասին:

1971 թ. մարտի 5-ին ՍԿԿ Կենտկոմը քննարկեց Ասազի Թեկնածություն Հարցը, «եննելով ՍԿԿ-ի սահմանած քաղաքականությունից և Ասազի խաղաղած դրական գերի գնահատումից, Կենտկոմը որոշում է պաշտպանել նրա Թեկնածությունը և կօչ է անում կոմունիստներին ու նրանց Համակիրներին քվեարկել զեներալ Ասազի օգտին»¹³:



Միրիայի բոլոր առաջադիմական կուսակցությունների և խմբերի Համագործակցությունը, լայն ժողովրդական ճակատի ստեղծումը դարձել էր Հրամայական պահանջ: Հայտնի է, որ Միրիայի կոմունիստական կուսակցությունը երկրում քաղաքական առաջին կազմակերպությունն էր, որ բարձրացրեց ազգային ճակատի լողունը: Այդ լողունը ՍԿԿ-ի ափսիս քան կեղտարյա անխոնջ պայքարի նպատակակետն է: 1936 թվականից սկսած ՍԿԿ-ն առաջ քաշեց ֆրանսիական դադումարարների դեմ և երկրի ազգային անկախության նվաճման ու ամրապնդման Համար մղված մարտերում ազգային ճակատ ստեղծելու գաղափարը: Նա ազգային ճակատի քաղաքականությունը շարունակեց նաև անկախության հռչակումից հետո՝ ընդգնեմ «Մեծ Միրիայի», «Արգասաբեր Մահելի», «Էյլեն-Հատերյան վարդապետության» իմպերիալիստական ծրագրերի և հանուն զեմսկրատական ազատությունների ապահովման:

Սակայն ազգային ճակատ ստեղծելու առաջին չորս փորձը կատարվել է 1956—1957 թթ., երբ Միրիայի խորհրդարանում Համախմբվեցին կոմկուսի և Բաաս կուսակցության ներկայացուցիչները, ինչպես նաև ազգային բուրժուազիայի Հակաիմպերիալիստական տարրերը: 1957 թ. հուլիսին ՍԿԿ կոնֆերանսը, անդրադառնալով ազգային ճակատի Հարցին, նկատի ունենալով Բաասի Հակաիմպերիալիստական և Հա-

կաֆեռոզալական բնույթը, առաջնահերթ խնդիր էր համարում ումեզացնել կոմունիստների և բաստականների համադորձակցությունը: Միաժամանակ, կոմկուսը իր հետևորդներին խորհուրդ էր տալիս հաշվի առնել այն հանգամանքը, որ Բասար ոչ բանվորական կուսակցություն է և չի ընդունում մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը, ուստի և անխուսափելիորեն սխալներ թույլ կտա իր գործունեության ընթացքում¹⁰:

Իսկ 1966 թ. ՍԿԿ-ն բարձրացրեց «ազգային ճակատից» դեպի «ազգային-առաջադիմական ճակատ» (ԱԱՃ) լուղունգր: Բացատրելով նոր լուղունգի էությունը ՍԿԿ գլխավոր քարտուղար Խ. Բազդաշը գրում էր. «ճակատը ազգային է, որովհետև այն ուղղված է իմպերիալիզմի և նրա զաշնակից ֆեոդալիզմի դեմ: Առաջադիմական է, որովհետև այն ուղղված է խոշոր կապիտալիզմի դեմ և նպատակ ունի ընթանալ հասարակական առաջադիմության ուղիով, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել սոցիալիզմին անցնելու»¹⁵:

ՍԿԿ քաղաքականությունը վերահիշյալ փուլում ձգտում էր հետևել նպատակներին. համադորձակցել ձախ բաստականների և մյուս առաջադիմական ուժերի հետ, անդուլ պայքար մղել հանուն բանվորների, գյուղացիների և աշխատավորների շահերի, պահպանել կոմկուսի անկախ դեմքը գաղափարական և սկզբունքային հարցերում¹⁶:

Արարական կոմունիստական և բանվորական կուսակցությունների 1967 թ. մայիսյան խորհրդաժողովը իր հիմնական փաստաթղթերում ընդգծեց ազգային-առաջադիմական ճակատների ստեղծման անհրաժեշտությունը. «Նշենով արարական շրջանում եղած գլխավոր հակասությունից, որի մի կողմում գտնվում են արարական առաջադիմական ուժերը, իսկ մյուս կողմում՝ իմպերիալիզմը, սիոնիզմը և արարական հետադիմականությունը, կոմունիստական կուսակցությունները դառնում են, որ ազգային առաջադիմական ուժերի միասնությունն ու համագործակցությունը միակ էլըն են գիմարավելու սպառնացող վտանգը»¹⁷:

Միրիայի կոմկուսի կարևորագույն խնդիրն էր՝ պահպանել և ամրապնդել կապերը ժողովրդական զանգվածների

Հետո Այս էր Երաշխիքը այն բանի, որ Երկրի զարգացումը կընթանա ոչ թե հետադիմական, այլ Հեղափոխական ուղիով: Իսկ զրա համար հարկավոր էր օգտագործել մասսաների մեջ կատարվող աշխատանքի բուլոք հնարավորությունները, ամեն մի լնգաչ կոլան: Կոմունիստ զեկուստաա Երբահիմ Բարբին ժողովրդական ժողովում Ելույթ ունենալով նշեց, որ առաջադիմական ուժերի ու անձնավորութունների մասնակցությունը միևնույնիստ խորհրդում և ժողովրդական ժողովում օգնում է կառավարման բաղխի ընդլայնմանը: Այնուհետև նա ընդգծեց ճակատի ստեղծման անհրաժեշտությունը, համարելով, որ այն «հրամայական պահանջ է Միրիայի հետագա զարգացման ու բարգավաճման համար»¹⁸:

1971 թ. մայիսի 22-ին նորընտիր պրեզիդենտ Ասադի հրամանագրով կազմվեց հանձնաժողով, որը ստանձնեց Միրիայի ազգային-առաջադիմական ճակատի ստեղծման նախապատրաստական աշխատանքների կազմակերպումը:

Միրիայի քաղաքական կարգը, ինչպես նշված է ՍԿԿ փաստաթղթերում, իրենից ներկայացնում է ազգային ղեմոկրատիայի պետություն, որի մարքս-լենինյան սահմանումը գտնում ենք ՍՄԿԿ ծրագրում. «Ազգային ղեմոկրատիայի հիմքը այն բուլոք առաջադեմ, հայրենասիրական ուժերի բլուկն է, որոնք պայքարում են ազգային լրիվ անկախության, լայն ղեմոկրատիայի համար, հակակապիտալիստական, հակաֆեոդալական, ղեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար»¹⁹:

1972 թ. մարտի 7-ին ստեղծվեց Միրիայի ազգային-առաջադիմական ճակատը (ԱԱՃ) և հրապարակվեց նրա կանոնադրությունն ու ծրագիրը: Այդ առթիվ հանրապետության պրեզիդենտ Ասադն ասաց. «Ուղղիչ շարժումից» հետո բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Բաաա կուսակցության և ազգային-առաջադիմական ուժերի համագործակցության համար, որը և պատշաճ հիմք հանդիսացավ ազգային-առաջադիմական ճակատի ստեղծմանը»²⁰:

Միրիայի ազգային-առաջադիմական ճակատի ստեղծ-

ման կապակցությունները հանրապետության պրեզիդենտ Ասադին և կոմկուսին սովետական ղեկավարություն հրաժարված շնորհակցության հետագրերում ընդգծված էր, որ ճակատի ստեղծումը կօգնի բանվորներին, գյուղացիներին և Սիրիայի բոլոր աշխատավորներին համախմբելու իրենց ուժերը՝ դիմագրավելու Իսրայելի իմպերիալիստական ագրեսիան և աղատագրելու նրա ավազակային հարձկման հետևանքով զավթված արաբական տերիտորիաները²¹։

Ճակատն ունի ծրագրային փաստաթուղթ հանդիսացող խարտիա, ինչպես նաև՝ նրա կազմակերպական կառուցվածքը սահմանող կանոնադրություն։ Խարտիան բաղկացած է առաջարանից, երեք գլուխներից՝ և վերջաբանից։ Առաջարանում խոսվում է այն մասին, որ ճակատը առաջին քայլն է արաբական հեղափոխական ջոկատների միասնության ճանապարհին, նպատակ ունենալով այն վերածել արաբական սոցիալիստական հասարակարգ կառուցող քաղաքական միասնական կազմակերպության։

Այնուհետև խոսվում է Բաասի ղեկավար զերի մասին, որն արտահայտվելու է նրա ներկայացուցչական մեծամասնությամբ՝ ճակատի բոլոր մարմիններում, և որ Բաասի ծրագրերը, համազումարի որոշումները վճռական զեր են խաղալու ճակատի ընդհանուր քաղաքականության մշակման և պլանների իրականացման գործում²²։

Խարտիայի երեք գլուխները նվիրված են ներքին, համաարաբական և միջազգային ասպարեզներում ԱԱԾ-ի խնդիրներին։

Ներքին ասպարեզում ամենից ավելի կարևոր են հետևյալ խնդիրները.

— 1967 թ. Իսրայելի գրաված արաբական հողերի ազատագրումը,

— խաղաղության և պատերազմի մասին որոշումների ընդունումը,

— հնգամյա պլանների հաստատումը և տնտեսական քաղաքականության խնդիրներին քննարկումը,

— ճակատի մեջ մտնող բոլոր ոչ բաասական կողմերը

պարտավոր են շտեղծել ոչ մի խմբավորում, բանակում և զինված ուժերում ֆրակցիոն և կուսակցական աշխատանք շտանել:

—Ճակատի ոչ բաասական ուժերը պարտավոր են զարեցնել ամեն տեսակ պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանք ուսանողների մեջ, և ուսանողներին իրենց կազմակերպութուններում շքնդունել²³:

Խորախան Համարարական Հարաբերությունների ասպարեզում առաջ է քաշում Հետևյալ խնդիրները.

1. Եննելով այժմյան արարական իրականություն պայմաններից և հաշվի առնելով անցյալի դասերը՝ իրականացնել արարական միասնականությունը:

2. Արարական նավթի պրոբլեմը չի կարող լինել այս կամ այն երկրի ներքին հարցը: Նավթի պրոբլեմը համազգային է:

3. Արարական ազգային-առաջադիմական ուժերի միասնությունը ստրատեգիական նպատակ է հանդիսանում:

4. Պաղեստինյան հարցում ճակատի քաղաքականությունը հենվում է Հետևյալ սկզբունքների վրա.

ա) մտրիլիզացյնել ամբողջ ուժերն ու կարողությունները ազատագրության պայքարի համար.

բ) Պաղեստինի արար ժողովրդի ազգային իրավունքները իր հայրենի հողի վրա որբազան են.

գ) ոչ մի հաշտություն սիոնիստական պետության Հետ: ոչ մի զիջում, նույնիսկ մեկ թիզ, արարական գրավված հողերի հարցում,

դ) լիովին պաշտպանել պաղեստինյան զիմադրությունը, որը արարական ազգային-ազատագրական շոկատներից մեկն է²⁴:

Միջազգային ասպարեզում Ա.Ա.Ը-ի հիմնական խնդիրները ենում են Հետևյալ սկզբունքներից.

1. Համաշխարհային սիոնիզմը և նրա դրածո Բուրայելը արար ազգի հիմնական ու անմիջական թշնամիներ են, իսկ զլխավոր հակասությունը արար ազգի կոնֆլիկտն է սիոնիզմի, Բուրայելի և ԱՄՆ-ի կողմից զլխավորվող համաշխարհային իմպերիալիզմի հետ:

2. Սոցիալիստական բարեկամ երկրները, ՄՍՀՄ-ի ղեկավարություններ, գլխավոր միջազգային ուժն են, որ կանգնած են արարներէի կողքին: Այդ երկրները արաբ ժողովրդին ցույց են տալիս տարբեր տեսակի ռազմական, քաղաքական և տնտեսական օգնություն: Այդ պատճառով էլ ԱԱԸ-ը հանդես է գալիս հանուն սոցիալիստական երկրների հետ ամենասերտ համագործակցության ու բարեկամության, հանուն համատեղ պայքարի՝ ազատության և սոցիալիզմի կառուցման համար:

3. Ընդդէմ է ամբապնդել կապերը իսլամական և «երրորդ աշխարհի» ժողովուրդների ու պետությունների հետ:

4. Օգտագործել նպաստավոր պահերը արևմտանկլորական և ամբողջ աշխարհի երկրների հետ կապերը զարգացնելու համար:

5. Հաստատել ամենասերտ հարաբերություններ աշխարհի առաջադիմական և ազգային-ազատագրական շարժումների հետ²⁵:

Խարտիայի վերջաբանում, խտակով այն մասին, որ Սիրիայի ԱԱԸ-ի փորձը առաջինն է արաբական աշխարհում, հույս է հայտնվում, որ այն մյուս երկրներում արաբական ազգային-առաջադիմական ուժերի միասնության համար կհանդիսանա վառ օրինակ՝ ստեղծելու մեկ միասնական հեղափոխական ճակատ, որը արարներին կհասցնի միասնականության, ազատության ու սոցիալիզմի հաղթանակին²⁶:

Ազգային-առաջադիմական ճակատի կանոնադրության առաջին հոդվածում նշված է, որ Սիրիայում ստեղծվել է ճակատ, որի մեջ մտել են հետևյալ կուսակցություններն ու կազմակերպությունները. Արաբական սոցիալիստական վերածնության (Բասս) կուսակցությունը, Սիրիայի կոմունիստական կուսակցությունը, Արաբ սոցիալիստների շարժումը, Սոցիալիստ-յունիոնիստների կազմակերպությունը և Արաբական սոցիալիստական միությունը:

Սիրիայում քաղաքական պաշտոնական որոշումները Ազգային-առաջադիմական ճակատի և Բասս կուսակցության որոշումներն են:

Ճակատի մասնակիցները ծափալուծ են ընդհանուր քա-

զարական զործունեությունն ճակատի շրջանակներում և ժողովրդական զանգվածներին դիմում են միացյալ դիրեկտիվներով:

Ճակատն իրավունք ունի հրապարակել իր թերթը, ինչպես նաև տեղեկագրեր, պարբերականներ և տպագիր այլ հրատարակություններ:

Ճակատի մասնակիցներն իրենց կազմակերպությունները շրջանակներում օգտվում են զործունեության ազատությունից:

Ճակատի ղեկավար մարմիններն են՝ կենտրոնական ղեկավարություն, նահանգային մարմիններ, բյուրոներ և կոմիտեներ:

Ճակատի կենտրոնական ղեկավարությունը կազմված է նախագահից և 17 անդամներից, ըստ որում Բաասը ներկայացնում է 9 հոգի, իսկ ճակատի մնացած մասնակիցները՝ 8 հոգի, այսինքն երկու ներկայացուցիչ յուրաքանչյուր կազմակերպությունից: Կենտրոնական ղեկավարությունում ՍԿԿ-ն ներկայացնում են Բազդաշը և Գանիել՝ նախմեմ: Ճակատի նախագահն է հանրապետության պրեզիդենտը և Արաբական սոցիալիստական վերածնության կուսակցության գլխավոր քարտուղարը: Կենտրոնական ղեկավարության նիստերը գումարվում են ամիսը երկու անգամ: Նիստերը ղոնփակ են: Որոշումները ընդունվում են ներկաների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների դեպքում նախագահի ձայնը վճռական է: Կենտրոնական ղեկավարության որոշումները պարտադիր են բոլորի համար²⁷:

1972 թ. հուլիսի 5—8-ը պաշտոնական այցով Սովետական Միությունում էր գտնվում ՍԱՀ պրեզիդենտ Ասադը: Սիրիայի ԱԱԾ-ի ստեղծման հարցին անդրադառնալով, սովետական կողմը նշեց, որ առաջադիմական ուժերի համախրմբման սիրիական փորձը մեծ նշանակություն ունի ոչ միայն սիրիական պետության, այլև մյուս ժողովուրդները համար, որոնք թևակոխել են անկախության և սոցիալիստական վերափոխումների ուղին²⁸:

1972 թ. օգոստոսի 10-ին «ալ Անուար» բեյրության

Քերթի թղթակցի այն հարցին, թե որն է կապ կա՞րդյոք, սիրիա-սովետական բարեկամության և Սիրիայի կոմկուսի ազատ զործունեության միջև, Ասադն ասաց. «Կոմկուսի հետ մեր համագործակցությունը բխում է մեր ներքին քաղաքականության էությունից և ոչ մի կապ չի կարող ունենալ սովետա-սիրիական բարեկամության հետ»²⁹:

1973 թ. ապրիլի 2-ին Սիրիայի մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մահմուդ Հալաբը, անդրադառնալով Սիրիայի ԱԱՀ-ի դերին ու նշանակությունը, ընդգծեց, որ ճակատի ստեղծումը «Բաաս կուսակցության ոչ թե տակտիկական լողունը, այլ ստրատեգիական նպատակն է, որն ընկած է կուսակցության որոշումների և կառավարության քաղաքականության հիմքում»³⁰:

* * *

Սիրիայի սոցիալ-քաղաքական կյանքում խոշոր նշանակություն ունեցավ 1973 թ. մարտի 12-ին երկրի մշտական սահմանադրության ընդունումը, որը արժանացավ համաժողովրդական հանրաքվեի հավանության:

Սահմանադրության նախագծի հրատարակումից անմիջապես հետո ներքին հետադիմությունը գլուխ բարձրացրեց: Խոշոր առևտրականները և հոգևորականությունը, որոնց ոգևշնչում և պաշտպանում էին իմպերիալիստական և արաբական հետադիմական շրջանները, հակակառավարական նոր խողովություն բարձրացրին Համայում: Ելույթի համար որպես պատրվակ օգտագործվեց այն հանգամանքը, որ նախագծում շեշտված չէր, թե իսլամը պետական կրոն է, թեպետ նախագծի 3-րդ հոդվածում ասված էր. «Ելումը օրենսդրության գլխավոր աղբյուրն է»³¹, նրանք հույս ունեին իրենց ելույթով երկրում անկարգություններ և խուճապ առաջացնել, վարչակարգին ստիպել հրաժարվելու սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխություններից³²:

Ճիշտ է, այդ պրոֆոկացիոն ելույթը, առաջագիմական բուլբու ուժերի անմիջական մասնակցությունը, իշխանությունների կողմից արագորեն ճնշվեց, բայց և այնպես ԱԽՆԻ-ի բուլբու կողմերի համաձայնությունը նախագծում մտցվեց փոփոխություն, որն իր արտահայտությունը գտավ մշտական սահմանադրության 3-րդ հոդվածի ա կետի ավելացմամբ՝ «Հանրապետության պրեզիդենտը պետք է մահմեդական լինի»³³:

Սահմանադրության նախագծին ընդհանուր առմամբ հավանություն տալով, ժողովրդական ժողովի կոմունիստ ղեկուսատները, ոչ բաասական ուժերի հետ միասին որոշ դիտողություններ արեցին, հատկապես 8-րդ հոդվածի վերաբերյալ, որն ընդգծում էր միայն Բասս կուսակցության ղեկավար ղերը և ճիշտ չէր արտացոլում ճակատի նշանակությունը Սիրիայի քաղաքական կյանքում: Կոմունիստ ղեկուսատ Մ. Սալիբին իր ելույթում ասաց. «Սահմանադրության որոշ հոդվածների վերանայումը թույլ կտա մեզ հպարտորեն ասելու, որ մեր ժողովրդական ժողովը հաստատեց իսլամական ժողովրդա-դեմոկրատական սահմանադրություն, որի վերջնական նպատակն է սոցիալիստական հասարակարգի կառուցումը»³⁴:

Սահմանադրությունը կոչված էր ապահովելու և բարելավելու պետական հիմնարկների ու աշխատավորական լայն զանգվածների գործուն մասնակցությունը երկրի ղեկավարման գործին: Նորից կյանքի կոչվեցին այնպիսի մասսայական կազմակերպություններ, ինչպիսիք են բանվորների արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, որի կազմի մեջ մտնում էին 193 արհմիություններ՝ մոտ 200 հազար բանվորով, գյուղացիական համընդհանուր ֆեդերացիան միավորում էր 1729 կոոպերատիվ տնտեսություններ՝ ավելի քան 113 հազար անդամով, Ուսանողական ազգային միությունը՝ հեղափոխական երիտասարդական միությունը, Կանանց համընդհանուր ֆեդերացիան, ազատ արհեստավորների կազմակերպությունները:

Սահմանադրության հիմամբ Սիրիայում 1973 թ. մայիսի 25-ին անցակացվեցին ժողովրդական ժողովի ընտրություն:

Ներք, որոնց ժամանակ ճակատի մասնակից ուժերը հանդես եկան միասնական բնութեան ցուցակներով: Ընտրվեցին 186 զեպուսատներ, որոնցից 95-ը՝ բանվորներ և գյուղացիներ, 91-ը՝ ժողովրդի մնացած խավերից: Ծակատի թեկնածուները կազմեցին ժողովրդական ժողովի ղեպուսատների $2\frac{1}{2}$ մասը: ՍԿԿ-ն ուներ 5 զեպուսատներ²⁵:



1973 թ. հոկտեմբերյան պատերազմի վտանգավոր իրադարձությունների ընթացքում իմպերիալիստական ուժերն իրենց հույսերը չէին կորուստ տապալելու Միրիայի առաջադիմական վարչակարգը: Սակայն Միրիայի սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխությունները երկրի բոլոր հայրենասիրական ուժերի համախմբվածությունը թույլ շարժին, որ ագրեսորը հասներ հաջողության: Պատերազմի ընթացքում ակնհայտորեն զբսեորվեց ԱԼԸ-ի ղեկը երկրի պաշտպանության ճիշտ կազմակերպման, զժվարին պահելին խելամիտ քաղաքականության մշակման գործում:

Միրիայի ԱԼԸ-ի ամբապնդմանը նպաստեց նաև 1974 թ. մայիսի 30-ից մինչև հունիսի 13-ը զամարված Բասս կուսակցությունից մարզային V արտահերթ համաժողովը, որի որոշումները կոչ էին անում շարունակել երկրի սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխումների կուրսը: Համաժողովը ընդգծեց Սովետական Միության գլխավորությունը սոցիալիստական երկրների հետ բարեկամության ամրապնդման և համագործակցությունից զարգացման անհրաժեշտությունը:

Միրիայի կոմկուսի համագումարների մեջ իր արժանի տեղն ունի IV համագումարը, որը կայացավ 1974 թ. սեպտեմբերի 26—28-ը: Համագումարում խորը վերլուծության ենթարկվեցին երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխությունների, սիրիական հասարակության դասակարգային շեր-

տաժորման հարցերը, դարդացման ոչ կապիտալիստական ուղին և պայքարը հանուն սոցիալիզմի, կուսակցության անհետաձգելի խնդիրները սոցիալ-բազարական և երկրի պաշտպանության ամբաստանման ուղորտներում, արաբական ազգային-ազատագրական շարժման հիմնական խնդիրները, պաղեստինյան հարցը, արաբական միասնականության պրոբլեմը, ինչպես նաև կուսակցության կազմակերպական ու գաղափարական գործունեության արմատական պրոբլեմները:

Չորրորդ համագումարը ընդունեց կուսակցության մարտական ծրագիրը: Նոր ծրագիրը որոշում էր կուսակցության խնդիրները ազգային-դեմոկրատական կարգից սոցիալիզմին անցնելու ամբողջ ժամանակաշրջանի համար: «Բասսի, կոմկուսի և այլ առաջադեմ ուժերի համագործակցության ամբաստանման ու խորացումը կարևոր խթան են Միբիայի ոչ կապիտալիստական ուղիով դեպի սոցիալիզմ երթին» նշված էր կոմկուսի ծրագրում³⁶:

Այնուհետև, ծրագիրն ամփոփում էր կոմունիստների և հեղափոխական-դեմոկրատների փոխհարաբերությունների փորձը, ընդգծելով, որ «առաջադեմ ուժերի համագործակցությունը տակտիկական քայլ չէ, այլ՝ ստրատեգիական, ունի օբյեկտիվ հիմքեր ոչ միայն դարդացման ոչ կապիտալիստական, այլև սոցիալիստական շինարարության ժամանակ»³⁷:

Միբիայի կոմկուսը միշտ էլ օբյեկտիվորեն է գնահատել Ա.Աճ-ի հարցը, սկզբից եեթ որոշ վերապահումներ կատարելով թե՛ Խարտիայի և թե՛ կանոնադրության նկատմամբ: Սղել են պահեր, երբ այն անգործություն է մտանվել: Այս կապակցությամբ Խ. Բազդաշը պարզաբանում է. «Մեր ճակատը կարևոր է և այն պետք է հաճախականացնի իր ժողովները՝ կարգավորելու երկրի առջև դրված խնդիրները»³⁸: Այս ելույթը ընկալվեց մի կողմից որպես քննադատություն, իսկ մյուս կողմից որպես կոշ՝ բարեկամելու ճակատի աշխատանքները:

Հայտնի է, որ կոմկուսի ճակատի հետ կապված գործունեությունը չի սահմանափակվում կենտրոնական ղեկավարությունում, նահանգային մարմինների և բյուրոների ու կոմիտեների շրջանակներում միայն, այլ ընդգրկում է կոմկու-

սի ներկայացուցիչներին աշխատանքը կառավարության կազմում, ժողովրդական ժողովում, տեղական իշխանության խորհուրդներում և արհմիություններում: Կոմկուսն այդ բոլոր ամբիոնները օգտագործում է բանվոր դասակարգին կազմակերպելու և քաղաքականապես լուսավորելու համար:

Միրիայի կոմկուսը գտնում էր, որ օտարերկրյա կապիտալը կնահանջի միայն հակաիմպերիալիստական քաղաքականություն իրականացնող հայրենասիրական, դեմոկրատական ուժերի լայն միավորման առջև:

Սկզբնական ստրադեգիան անվերապահորեն պաշտպանում էր Բասսի կողմից իրականացվող առաջադիմական վերափոխությունները, սակայն խիստ քննադատության էր ենթարկում թույլ տված սխալները:

Այսպես, 1975 թ. հունիսի 3-ին Միրիայի ժողովրդական ժողովում լուրջ քննարկման առարկա դարձավ նավթային շրջանների հետադուրման վերաբերյալ սիրիա-ամերիկյան շրջանառության հարցը. դեպուտատներից շատերը, այդ թվում նաև կոմունիստները, դեմ արտահայտվեցին այդ պայմանագրին: Պայմանագրին ըստ արժանվույնի գնահատելուց հետո և՛ Բազդաշն իր ելույթը եզրափակեց հետևյալ խոսքերով. «Մենք դեմ ենք սույն պայմանագրին: Մեր այս դիրքորոշումը չի հետապնդում ո՛չ կուսակցական, ո՛չ էլ ինքնավարության դանդամանակներ, այլ մենք հակված ենք երկրի քաղաքական ու տնտեսական շահերի ապահովման և արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ Միրիայի ավանդաբազմին դերի պահպանման»³⁹:

Սկզբնական ստրադեգիան Միրիայի կյանքի վրա գնալով դառնում է ավելի ու ավելի ակնհայտ: Գործնականորեն ստեղծվել է աջակիսի դրություն, որ կառավարող Բասս կուսակցությունը խոշորագույն ազգային պրոբլեմների լուծման ժամանակ հաշվի է առնում կոմունիստների կարծիքը: Անշուշտ միշտ չէ, որ կոմունիստներին հաջողվում է հաղթահարել այն բոլոր զրգովաբույսները, որ ծնում է կյանքը: Սակայն ակնհայտ փաստ է, որ կոմկուսը բոլոր արգելքների միջով անշեղորեն

առաջ է ընթանում: Կոմունիստների ազդեցությունն աճի մասին է վկայում 1974 թ. նոյեմբերի 1-ին, ՍԿԿ Հիմնադրման 50-րդ տարեդարձի տոնակատարության հանդիսավոր միտինգում, կուսակցության գլխավոր քարտուղար Խ. Բազդաշի արտասանած ճառը, որտեղ ասվում էր. «Համեատորեն ու հարատորեն կարող ենք ասել մեր ժողովրդին՝ այո, մենք կոմունիստ ենք: Մենք ձգտում ենք սոցիալիստական հասարակության, որի համար երկու նախապայման է հարկավոր. նախ և առաջ, ազգային առաջադիմական ճակատի ամրապնդումը և երկրորդ, Սովետական Միության և սոցիալիստական երկրների հետ մեր բարեկամության ու համագործակցության հզորացումը»⁴⁰:

1975 թ. ապրիլին հրավիրվեց արաբական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների խորհրդածողովը, որը Իշարա ալլ հարցերի քննարկեց ազգային-առաջադիմական ճակատների ստեղծման հարցը: Ընդհանրացնելով ճակատների փորձը և ցույց տալով նրանց ուժեղ և թույլ կողմերը, խորհրդածողովը դրանք գնահատեց որպես «օրչեկտիվ անհրաժեշտություն», որ ծագեց պատմական զարգացման պրոցեսում: Այն արտահայտում է շանազան դասակարգերի ու հասարակական խավերի շահերը, գործարար միջոց է դիմակայելու իմպերիալիզմին, սինոիզմին ու հեռադիմությանը և ընթանալու ազգային զարգացման և սոցիալական առաջադիմության ուղիով»⁴¹:

«Պրորբլեմի միբա ի սոցիալիզմա» ամսագրի նախաձեռնությամբ Կոմինտերնի VII կոնգրեսի 40-ամյակին նվիրված գիտական նստաշրջանում (Պրագա) Միրխայի կոմիտուսի գլխավոր քարտուղար Խ. Բազդաշը իր ելույթում ճիշտ գնահատեց ԱՍՃ-ի նշանակությունը. «Հիրավի, ԱՍՃ-ի նարտիան լայն իրավունքներ ունի, բայց և այնպես շպետք է գերազնահատել ճակատի դերը երկրի կառավարման, քաղաքական ու տնտեսական կյանքում: Իհարկե, դա չի նշանակում, որ ճակատը ոչ մի դեր չի խաղում երկրի կառավարման գործում»:

Այնուամենայնիվ, ճակատի ազդեցությունը բարոյական ու
քաղաքական խորը խմաստ ունի:
...Անշուշտ, դա էլ քիչ բան չէ»⁴²:

* * *

1975 թ. սեպտեմբերի 1-ին ստորագրվեց եզրույթա-խո-
րայելական զորքերի տարանջատման երկրորդ համաձայնա-
գիրը, որն «օրհնվեց» ԱՄՆ-ի, սիոնիզմի և արաբական հե-
տադիմական ուժերի և գատապարտվեց Սիրիայի, ՊԱԿ-ի
ՍՍՀՄ-ի և ամբողջ առաջադեմ մարզկուսյան կողմից: Սի-
րիայի ԱԱԸ-ը գատապարտեց Սինայի համաձայնագիրը, այն
համարելով լուրջ հարված արաբների համընդհանուր գործին:
«Մենք թշնամու թույլ չենք տա մեզ զցել նման ծուղակը,
որը մեր ազգին կրերի դառն պարտություններ ու անհաջո-
ղություններ»⁴³, — ասված է ԱԱԸ-ի հրապարակած հայտա-
բարության մեջ: Համանման զնահատական տվեց Սիրիայի
կոմկուսի գլխավոր քարտուղար Խ. Բազդաշը Ժողովրդական
ժողովում: Համաձայնագիրը մանրամասն քննության առնե-
լուց հետո նա հայտարարեց, «Եթե իմպերիալիզմին հաջողվեց
պաշտանական Եզրույթախոսին դուրս մղել արաբական ազգային-
ազատագրական պայքարից, ապա նա անկարող է դուրս մղե-
լու ժողովրդական Եզրույթախոսին»⁴⁴:

Մերձավորարևելյան պրոբլեմի քաղաքադաշտներից է
1975 թ. Լիբանանում ծագած քաղաքացիական պատերազմը:
Ամերիկյան իմպերիալիզմը, Իսրայելը և արաբական հետա-
դիմությունը այդ արյունահեղությունը հրահրեցին, որպեսզի
արաբական ժողովրդական զանգվածների ուշադրությունը շե-
ղեն եզրույթա-խորայելական գործարքից, թուլացնեն երկրում
ուժեղացող առաջադիմական հայրենասիրական շարժումը և
հուժկու հարված հասցնեն ՊԳԵ-ին:

1976 թ. հունիսին սիրիական բանակը մուտք գործեց Լի-
բանան՝ կարգուկանոն հաստատելու նպատակով: Տեղեկանա-
լով այդ մտադրության մասին, Սիրիայի կոմկուսի քաղաքու-

բոյի պատվիրակութիւնը նախազգուշացրեց Բաասի ղեկավարութեանը այդ բայի ծանր Հետեանքների մասին: Այդ ժամանակ կոմկուսը ենթարկվեց բազմաթիվ ճնշումների, որ պետքի դուրս դար ԱԱԸ-ից և անցներ ընդդիմադրութեան դիրքերին⁴⁵:

Կոմկուսը կարահանապես մերժեց այդ պահանջները ընդգծելով, որ լիբանանյան իրադարձութիւնները չեն կարող որոշիչ լինել կուսակցութեան ողջ քաղաքական գծի, ինչպէս և կոմունիստների ու բասսականների համագործակցութեան համար⁴⁶:

Հարկ է ընդգծել, որ 1979—1982 թթ. Սիրիան զանգում էր քաղաքական և սոցիալ-տնտեսական զժվարին կացութեան մեջ, որի օրյակտիվ և սուրյակտիվ արձատները զալիս էին ոչ հետու անցյալից: Միևնույն ժամանակ զեպքերի զարգացումը համառորեն առաջ էր քաշում Երկրի ներքաղաքական կյանքում իսլամի զերի ակտիվացման հետ կապված Երկու կարեւոր պրոբլեմ: Առաջինը, ընդհանրապես ընակչութեան լայն զանգվածների կրոնասիրութեան նշանակալից ուժեղացումը և ներքին հետադիմական ուժերի, զլիսավորապես «մուսուլման Եզբայների» կրոնական գործոնը հակակառավարական խռովութեան կազմակերպման համար օգտագործելու փորձեր էին: Երկրորդ պրոբլեմն այն է, որ նշված շրջանում զգայիորեն սրվեցին միջհամայնքային հարաբերութիւնները ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմող սուննիների և ընգամենը 10% կազմող ալաուիների (նուսէյրիների) միջև: Սխալված չենք լինի, Եթե ասենք, որ ճգնաժամը այնքան սրվեց, որ հարցականի տակ զրեց վարչակարգի գոյութիւնն իսկ: Եվ իրօր, Եթե մինչ այդ սիրիական վարչակարգը համարվում էր արարական աշխարհում ամենակալուններից մեկը, ապա թշնամու ընդհատակէա հարաճուն խմբակների զեմ հլուծի: պայքարը խարխիւց այդ հավասարակշռութիւնը:

Սիրիայում տազնապը ծնած ներքին հակասութիւնների և օրյեկտիվ զրգապատճառների բարդ հանգույցը միշտ էլ առկա է Եզել սիրիական իրականութեան մեջ, սակայն անցյալում զա Երբեէ չէր հանգեցրել իշխանութիւնների և կրոնա-

կան քողի տակ հանդես եկող «մուսուլման եղբայրների» միջև բուռն դինյալ առճակատման, հետևաբար քաղաքական ընդհանուր հզնաժամն էլ երբևէ չէր կրել այնքան սուր բնույթ, ինչպես 1979—1982 թթ.:

Մեր թվարկած օրվեկտիվ գործոնների վրա իրենց հերթին զգալի շափով ազդում էին ինչպես դասակարգային խմբերի, այնպես էլ առանձին խոշոր քաղաքական գործիչների կամ մի խումբ ազգեցիկ անձանց հետ կապված սուբյեկտիվ գործոնները: Կանգ առնենք դրանց բացահայտման վրա:

Միրիալում կատարված սոցիալ-տնտեսական վերափոխությունները խոշոր ազդեցություն ունեցան սիրիական հասարակության դասակարգային կառուցվածքի վրա: Նշված ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկը Միրիայի հայրենասիրական ղեմավարտական ուժերի, նրանց քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների զիրքերի ամբաստանումը, հասարակական-քաղաքական կյանքում նրանց դերի ու կշռի բարձրացումն էր:

Միաժամանակ հասարակական-դասակարգային որակական փոփոխություններ տեղի էին ունենում իշխանության ղեկավար կանգնած Բաաս կուսակցության ներսում: Նրա շարքերում ներկայացված էին մանրբուրժուական տարրեր խավեր: Առաջինը առաջագնի խավն էր, որը կազմում էր հեղափոխական ղեմավարտների կորիզը և հետզհետե մոտենում էր բանվոր դասակարգի զիրքերին: Երկրորդն այն խավն էր, որ անցել էր ազգային բուրժուազիայի զիրքերին, կազմելով պահպանողական-բուրժուական նորատիպ բուրժուազիա, որը զաղաթել էր մանրբուրժուական լայն խավերի ներկայացուցիչը լինելուց և երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական կուրսը փորձում էր տանել աջ ուղղությամբ: Երրորդը տատանվող խավն էր, որը մերթ մերձենում էր ազգային բուրժուազիայի, մերթ՝ սրբախառն զիրքերին: Միրիայի կոմունիստները Բաասի հետ համագործակցելիս ղեկավարվում են վ. Բ. Լենինի այն դրույթով, որն ասում է. «զիջումներ անել այն տարրերին, այն ժամանակ և այն

շափով, որոնք, երբ և ինչ շափով գիմազարձ են լինում
զեպի պրոչեաարիատը, միաժամանակ պայքարելով նրանց
զեմ, ովքեր գիմազարձ են լինում զեպի բուրժուազիան»⁴⁷:

Մյուս կողմից զեռես Սիրիայում գոյություն ունեին
շահագործող հետազեմ ու պահպանողական ուժեր, որոնք
ազգայնացումներից թեպեաև հուճու հարված էին ստացել,
սակայն շարունակում էին մահու և կենաց պայքար մղել՝ Սի-
րիային շեղելու առաջադիմական ուղուց: Դրանցից ամենա-
վտանգավորը հասարակական այն շերտն է, որ կազմված է
պորտարույծ բուրժուազիայի, խոշոր միջնորդ առևտրական-
ների, վաշխառուների և մաքսանենդների ներկայացուցիչնե-
րից: Հիշատակված ուժերի լեզալ և անլեզալ քաղաքական ու
արհեստակցական կազմակերպությունները, ինչպես, օրինակ,
«մուսուլման եղբայրները», Սիրիայի առաջադիմության զըլ-
խավոր խոշրնդուան էին:

Իսկ ինչո՞ւ, այնուհանդերձ, սիրիական քաղաքական
համընդհանուր ճգնաժամը կրոնական գունավորում ընդու-
նեց, թեպետ այն ուներ գասակարգային սրոշակի հիմք:

Անհրաժեշտ է նախ և առաջ կանգ առնել զեմոկրատիայի
հարցի վրա: Բանն այն է, որ իշխանության կողմից զեմո-
կրատիայի որոշ սկզբունքների խախտումներն առաջ բերե-
ցին ժողովրդական զանգվածների դժգոհությունը, այդ թվում
նաև՝ կառավարմանը մասնակցող առաջադիմական ուժերի
թեկուզ կրավորական հակաազգեցությունը: Բայց քանի որ
կրոնական ընդդիմադրությունը, իր արամադրության տակ
մղկիթներն ունենալով որպես հավաքատեղի, համեմատաբար
ավելի շատ էր օգտվում ազատ գործելու իրավունքից, ապա
նա սկսեց արտահայտել սիրիական ազգարնակչության լայն
խավերի դժգոհությունները: Այսպիսով, կրոնական քոչի տակ
թաքնված «մուսուլման եղբայրները» ավելի ու ավելի սկսե-
ցին հանգես դալ որպես ինքնուրույն ընդդիմադիր ճակատ,
Բասսի հետ կազմելով քաղաքական բեռնացման երկու զըլ-
խավոր կողմերը, մինչդեռ քաղաքական մեացած ուժերը հա-
րում էին այս կամ այն կողմին:

Երկրորդ հերթին նշենք, որ արտաքին գործոնների ներազդելը կապված էր Մերձավոր արևելքում ԱՄՆ-ի սազմասարատեղիական դժի, Իսրայելի ծավալապաշտական նկրտումների և արաբական հետադիմական պետությունների քաղաքականության հետ:

1979 թ. մարտի 26-ին ԱՄՆ-ի հովանու ներքո Քեմպ-Դեյդում կնքված եգիպտա-իսրայելական «հաշտության» պայմանագիրը հակասում էր արաբական բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև՝ Եգիպտոսի ազգային շահերին: Ամերիկյան այդ զավազրությունը առաջ բերեց արաբական ազգային-հայրենասիրական ուժերի հակազդեցությունը: Արաբական ժողովուրդների հակաիմպերիալիստական պայքարի վառ գրսեորումներ էին «Տսկունության և հակազդեցության հակառի» ստեղծումը և «Արաբական ժողովրդի կոնգրեսի» կազմավորումը, նրանց բնգունած բազմաթիվ որոշումները, որոնք էսլ էին անում ուժեղացնել պայքարը եգիպտա-իսրայելա-ամերիկյան եռյակ գաշխնքի դեմ և ամրապնդել համադործակցությունն ու բարեկամությունը ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ:

Հակաիմպերիալիստական պայքարի ավանգարդում կանգնած Սիրիայի բարոյա-քաղաքական ազդեցությունն ավելի հզորացավ, երբ նա դիմահայեց քեմպեյթիզյան գործարքին: Անխուսապիելի դարձավ առճակատումը Սիրիայի հայրենասիրական առաջադիմական դիրքի և ԱՄՆ-ի, Իսրայելի և արաբական հետադիմության նենգ ծրագրի միջև: Սիրիայի դեմ բազում արտաքին ճնշամիջոցներ գործադրվեցին ԱՄՆ-ի կողմից՝ հարկադրելու նրան Իսրայելի հետ որևէ մասնակի համաձայնություն հասնելու Արևմուտքում, մասնավորապես ԱՄՆ-ում, մասսայական ինֆորմացիայի միջոցները հերյուրանքներ էին տարածում, թե իբր Սիրիան պատրաստ էր բեմպդեկիզյան համանման պայմանագիր կնքելու և համալափորեն քայլելու ամերիկյան կարգավորման հետ: Եվ սաչատարակուսելի էր, որ ԱՄՆ-ի հնարամտությունները դատապարտված էին ձախողման: Պրեզիդենտ Զ. Ասադը,

քննարկելով Պենտագոնի և ԱՄՆ-ի կենտրոնական հետախուզական վարչության ղեկավարներով պատրաստված ամերիկյան կարգավորումը, Պաղեստինի ազգային խորհրդի XV նըստաշրջանում ընդգծում էր. «1973-ից սկսած Սիրիային առաջարկեց (Ամերիկայի Միացյալ Նահանգները—Պ. Ս.) անջատ պայմանագիր կնքել և առանց բանակցությունների մեղ վերադարձնել Գոլանի բարձունքները: Սակայն մենք մերժեցինք, որովհետև նրանք այդ մասնակի կարգավորումներով ձգտում են լուծարքի ենթարկել պաղեստինյան հարցը»²⁸:

Նշված ժամանակաշրջանում ուժեղանում էր նաև արաբական հետադիմական վարչակարգերի՝ Մաուդյան Արաբիայի, Հորդանանի, Քուվեյթի, Եգիպտոսի, Պարսից ծոցի էմիրությունների ներազդեցությունն ու միջամտությունը Սիրիայի ներքին գործերին: Նրանք, երկրի ներսում ունենալով իրենց համախոհները, ի ղեմս գեոևս իրենց գոյությունը պահպանող խոշոր հողատերերի և բուրժուազիայի զանազան խավերի, փորձում էին հարուցել սոցիալ-ստեղծական դժվարություններ, սեղ խրել հայրենասիրական առաջադիմական ուժերի միջև, թուլացնել ազգային միասնությունը և, վերջապես, հրահրել կրոնահամայնքային թշնամություններ: Այդ անպատվարեր «առաքելությունը» հանձնարարվեց իմպերիալիզմի և տեղական հետադիմության ղլխավոր հարվածային ուժը հանդիսացող «մուսուլման եղբայրների» կազմակերպությանը:

1979—1982 թթ. Սիրիայում «մուսուլման եղբայրներ» հետադիմական կազմակերպության անվան ներքո գործում էին երեք խմբակներ 1. «Իսլամական ազատագրական շարժումը»՝ Մաուդյան Արաբիայում ապրող շեյխ Աբու Ղիզզայի ղլխավորությամբ: Նյութական և ռազմական օժանդակությունն ապահովում էր սիրիացի նախկին բուրժուական քաղաքական գործիչ Մաառոֆ Գավալիբին, որը սաուդյան արքունիքում զբաղեցնում էր խորհրդականի պաշտոն: 2. «Մուհամեդի զնդեր» խմբակը, որը ղեկավարում էր Մըռվան Հադիդը: Կենտրոնը գտնվում էր Հորդանանում: 1977 թ., Հադիդի մահից հետո, ղեկավարությունն անցավ Աբդել Սաթթառ

Ջաաիրմին: 3. «Իսլամական ազատագրական կուսակցությունը», որի կենտրոնը նույնպես Հորդանանում էր:

Հարկ է նշել, որ էական տարբերություն չկա վերահիշյալ երկր խմբակների միջև, որովհետև դրանք ներկայացնում են սիրիական ազանդական բուրժուազիան, որի գլխավոր ներկայացուցիչներն են այնպիսի անհատներ, ինչպիսիք են Մ. Դավալիիրին, Ի. Սաթթաուր և Աբու Ղիզզան (սաուդյան մասնաճյուղը) և Ջաաիրմն ու Հազիզը (Հորդանանյան խմբակը)՝:

Քննարկվող ժամանակաշրջանում «մուսուլման եզրայրները» երկրի առջև ծառայած սոցիալ-անտեսական և քաղաքական խնդիրները լուծելու որևէ հատուկ ծրագիր չէին առաջադրել: Նրանց հակակառավարական ելույթները սահմանափակվեցին կրոնահամայնքային մեղադրանքով և ահաբեկչական անմարդկային գործողություններով, անգամ այնպիսի շահանկ մարդկանց նկատմամբ, որոնք ոչ մի կապ չուներին իշխանության կամ կառավարող կուսակցության հետ:

Միանգամայն պարզ է, թե իրականում ինչ էր թաքնված «եզրայրների» սանձադերժած ահաբեկությունների ևտեսնեթանի որ սոցիալական արդարությունը հաղթանակած տեսնեթանու ցանկությունը չէր, որ նրանք ձգտում էին տիրող վարչապարզը տապալել և նորը հաստատել, այլ պարզապես նպակատակ ուներին արագացնել Սիրիայի կապիտալիստական, աշատակ ուներին արագացնել իմպերիալիստական կողմյան զարգացումը, վերականգնել իմպերիալիստական տերությունների, մասնավորապես ԱՄՆ-ի ռազմատարատեթիական դիրքերը և հուժկու հարված հասցնել սովետաարթական բարեկամությունը:

Այսպիսով, սեփական քաղաքական հատուկ ծրագրի բացակայությունը և արարական հետադիմական երկրների ու իմպերիալիստական տերությունների հետ դավակցությունը ապացուցում են, որ «եզրայրները» մեծ վտանգ էին ներկատակացնում աշխատավոր զանգվածների շահերի, ձգտումների և նպատակների համար, իսկ նրանց կրոնական քողը պարզանպատակ ուներ ապակողմնորոշել ժողովրդական զանգպես նպատակ ուներ ապակողմնորոշել ժողովրդական զանգպ-

վածներին, նրանք մերժում էին բոլոր տեսակի ազատատենչ ուսմունքները:

«Մուսուլման եղբայրները» գաշնակցեցին ծայրահեղ աշակողմյան «լիբանանյան ճակատի» հետ, որի գլխավոր հարվածային ուժն է Փաթաիրների կուսակցությունը: Լիբանանյան «ալ Լուտիա» թերթը հաղորդել է «մուսուլման եղբայրներին» և Փաթաիրների միջև համաձայնագրի ստորագրման մասին, որով «կոորդինացվում են ռազմաքաղաքական գործողությունները»: Փաթաիրներն իրենց վրա վերցրին «եղբայրներին» խմբակների զինավարժեցումը, անհրաժեշտ դեպքի և զինամթերքի ապահովումը և Սիրիայի դեմ զինվերսիսն գործողությունների կազմակերպումը:

Մղձավանջային օր էր 1979-ի հունիսի 16-ը, երբ իսկական շարժ կազմակերպվեց Հալեպի հրետանային ուսումնարանում: Ժողով հրավիրելու պատրվակով հերթապահ կապիտան Իբրահիմ ալ-Յուսուֆիի հրամանով ճաշարանում հավաքվեցին ավելի քան հարյուր, մեծամասամբ աչտուի կուրսանտները: Ալ Յուսուֆին ու իր երկու մեղսակիցները դռները փակելով զնդացիրներից կրակ բացեցին և նոնակներ նետեցին խուճապահար կուրսանտների վրա: Սպանվեց ավելի քան 60 մարդ, իսկ հանցագործներին հաջողվեց փախչել:

Կուրսանտների կոտորածը երկրի առաջադիմական բոլոր ուժերի, այդ թվում նաև հայրենասեր կրոնապետերի ղեկավարությունն ու ատելությունն առաջացրեց «եղբայրներին» հանդեպ: Լայն արձագանք գտավ Սիրիայի կոմկուսի հրապարակած հայտարարությունը, որը կոչ էր անում «հուժկու հարված հասցնել իմպերիալիզմի և սիոնիզմի գործակալ՝ «ոչ-մուսուլման» և «ոչ-եղբայրներին» կազմակերպությունը»⁵⁰:

Քաջ գիտակցելով հանդերձ, թե ինչի կարող էր հանգել կրքերի բորբոքումը, ահաբեկիչները շարունակեցին ոճրագործությունները, որպեսզի անվստահության մթնոլորտ ստեղծվեր վարչակարգի հանդեպ: Բացահայտ զինված ելույթներն ուղեկցվում էին անհրաժեշտ պրոպագանդիստական քողարկումով: «Մուսուլման եղբայրներին» ղեկավարությունը մրդկիթներում սպանված ահաբեկիչներին հայտարարեց «հանուն

Հավատքի նահատակ-հերոսներ»։ Հավատացյալների շրջանակներում տարածվում էին վտարանդի ղեկավարների ձայնադրույթյունները, բնակչության մեջ՝ թերթիկներ՝ պաշտոնական անձանց և անձամբ պրեզիդենտ Հ. Ասադի դեմ կազմակերպված մահափորձերի և հարձակումների վերաբերյալ։

Ի պատասխան իմպերիալիստական-հետադիմական ուղեւորությունների՝ Միրիայի առաջադիմական ուժերը գիմեցին գործնական քայլերի։ Այդ գծվարին պահերին ակնառու կերպով գրասերվեց ԱԱԸ-ի մորիլիզացնող գերը, երբ 1979-ի սեպտեմբերի 26-ին սոցիալ-տնտեսական վերափոխումների հետագա խորացման ուղիով բնթանալու վերաբերյալ վճահական որոշումներ բնգոնվեցին։ Ուշագրավն այն է, որ կառավարող Բաաս կուսակցությունն առաջին անգամ ճակատի պաշտունական փաստաթղթով իրեն սուր ինքնաքննադատության ենթարկեց։ Հայտարարությունը պահանջում էր ներքին իրադրության կայունացման ուղղությունը լուրջ միջոցառումներ ձեռնարկել, անդուլ պայքար մղել պորտաբույծ բուրժուազիայի, բյուրոկրատիայի, կաշտակերության, ինչպես նաև առ բացասական երևույթների դեմ, որոնք պարարտ հող էին նախապատրաստում «եղբայրների» ակտիվացման համար։ ԱԱԸ-ի նախաձեռնությունամբ ամբողջ երկրով մեկ կազմակերպվեցին բանվորագյուղացիական, ուսանողական և հեղափոխական մտավորականների գինված շոկատներ։ Այդ առթիվ ճակատի հայտարարությունը ժողովրդին հավաստիացնում էր, որ նրա «մարտնչող աշխարհազորականները արմատախիլ են անելու «մուսուլման եղբայրների» ոճրագործներին՝ ի պաշտպանություն ձեռք բերված սոցիալ-տնտեսական նվաճումների»⁵¹։

Ճակատի որոշումներն իրենց տրամաբանական արտացոլումը գտան Բաաս կուսակցության մարզային VII կոնֆերանսի (1979 թ. դեկտեմբեր—1980 թ. հունվար) բանաձևերում ու հանձնարարականներում։ Կոնֆերանսը հատկանշական է նրանով, որ նրա բացմանը առաջին անգամ ներկա էին ԱԱԸ-ի անգամ կուսակցությունների ղեկավարները։ Կոնֆե-

բանսում ելույթ ունենալով Միրիայի կոմկուսի գլխավոր քարտուղար Խ. Բաղդաշը նշեց, որ «ԱԱԸ-ի որոշումների կենսագործումը մեծ երաշխիք է ժողովրդական զանգվածների նպատակների ու ձգտումների մարմնավորման համար»: Այնուհետև նա ընդգծեց, թե «որքան հիմքից զուրկ է այն պնդումը, որ գոյամարտը Միրիայում կրոնական բնույթ ունի: Սա պայքար է ընդդեմ իմպերիալիզմի, հետադիմության և բոլոր շահագործողների, ինչպիսի կրոնական համոզմունքների տեր էլ լինեն»⁵²:

Միրիայում ստեղծված ծանր կացության պայմաններում 1980-ի մարտի 18-ին Միրիայի կոմկուսի հրապարակած հայտարարությունը նշում էր, որ երկիրը ներսից պայթեցնելու նպատակով Ամերիկայի Միացյալ Նահանգները հրահրեց իր գործակալ «մուսուլման եղբայրներին»: Դավադրության հակաժողովրդական գարշելի բնույթը բողոքելու միտումով «մուսուլման եղբայրները» կողմնորոշվեցին զեպի կրոնը, որը նրանց հնարավորություն էր բնձնատմ ներգրավել կիսազրագետ, բայց խիստ հավատացյալ մարդկանց: Սակայն մեր ժողովրդական զանգվածները ավելի քան համոզված են, որ ներկա գոյամարտն բնթանում է հայրենասեր և հայրենադավուծների, «առաջադիմության և հետադիմության միջև»⁵³, —ասված էր հայտարարության մեջ:

Երկրի հայրենասիրական-առաջադիմական բոլոր ուժերը պարտավորվեցին արմատախիլ անել հրոսակախմբի զաղափարաքաղաքական հենակետերը, մորթիլիզացնել ժողովրդական զանգվածների պայքարը ամեն տեսակի հետադիմական ուժերի դեմ: Այդ ուղղությամբ լայն արձագանք գտան պրեզիդենտ Ն. Ասադի բազում հանդիպումները ՍԿԿ ղեկավարների հետ: Երկու կողմերը բարձր գնահատեցին երկրի առաջադիմական ուժերի միասնությունն ու համախմբվածությունը՝ վճռական հակահարված տալու գործակալներին, որոնց վրա մեծ հույս էին դնում Ամերիկայի Միացյալ Նահանգներն ու Իսրայելը, որպեսզի Միրիայի վզին փաթաթեն Քեմպ-Դեիդի գործարքը⁵⁴:

1980 թ. մայիսին Գամասկոսում տեղի ունեցավ ՍԿԿ V Համագումարը: Գումարվելով ներքին, արարական և միջազգային բարդ իրադրություն պայմաններում, Համագումարի գլխավոր լուղունգը դարձավ՝ «Միբիան ծնկի շի գա, նա պաշտպանելու և ամրապնդելու է իր ազգային անկախությունը»: Համագումարի խնդիրներն ու առաջադրանքներն էին.

— անգույ պայքար մղել ձախողելու քննադեմոկրատիայի դարձարբը և ԱՄՆ-ի, սիոնիզմի, սազաթյան զավաճան վարչակարգի և արարական հետադիմության ծրագրերը.

— աշակցել և պաշտպանել «Տոկունության և հակազգեցության ճակատը», մորիլիզացնել արարական երկրների բոլոր հնարավորություններն ընդգեմ իմպերիալիզմի և սիոնիզմի.

— շարունակել պայքարը ամրապնդելու և է՛լ ավելի կատարելագործելու Համար ԱՄՆ-ի դերը երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում՝ 1979 թ. սեպտեմբերյան կարևոր որոշումների կենսագործման ուղղությամբ.

— Միբիան վերագործնել սոցիալական առաջադիմության ուղուն՝ անհրաժեշտ սոցիալ-տնտեսական նախադրյալներ ստեղծելու և սոցիալիստական շինարարության անցնելու հեռանկարով:

Համագումարի կենտրոնական հարցերից էին՝ կուսակցության վերաբերմունքը Ամերիկայի Միացյալ Նահանգների նկատմամբ, կրանանի իրագործությունները, տնտեսական զարգացման հիմնական ուղղությունը, «սոցիալիստական կողմնորոշման» և «սոցիալական առաջադիմության» հասկացողությունների մասին արված դիտողությունները, արարական ազգային-ազատագրական շարժման բնորոշ գծերը, կուսակցության IV Համագումարում ընդունված ծրագրի որոշ ճշգրտումները, պայքարը Ռ. Թուրքի և Մ. Յուսեֆի խմբակայնության դեմ և այլ կաղմակերպական հարցեր:

Կենտկոմի հաշվետու ղեկուցման մեջ Խ. Բագդաշը ընդգծեց, որ Համաշխարհային կոմունիստական շարժումը հրաժարվել է ոչ կապիտալիստական զարգացման հասկացություն-

նից, նրա փոխարեն օգտագործելով «սոցիալական առաջադիմություն» կամ «սոցիալիստական կողմնորոշում» դարձվածքը: Կենտկոմը որոշեց կուսակցության ծրագրի տերմինից վերացնել «ոչ հնարալիստական» դարգացման ուղու վերաբերյալ տերմինը, բացատրելով, որ այն կրքեր փոփոխության չի ենթարկի ծրագրի գրած խնդիրներն ու առաջադրանքները:

Խ. Բազդաշը միաժամանակ նշեց, որ վերջին տարիներին ներքին և արտաքին գործունեւորի ազդեցություն տակ Միրիայում տեղի է ունեցել հեղափոխական պրոցեսի սրուչ ընդհատում: Անդրադառնալով երկրի զարգացման ներկա փուլի հարցին, նա շեշտեց, որ «Միրիայում տիրող վարչակարգը բնավ սոցիալիստական չէ: Մենք չենք էլ սպասում նրանից իրականացնել այն, ինչ կարելի է սպասել պրոլետարիատի իշխանությունից: Սակայն, մեր կուսակցությունը չի ցանկանում, որ Միրիան հտընթաց շարժում ապրի, այլ ուղում ենք շարունակել ու խորացնել սոցիալական առաջադիմությունը: Կենսագործել սոցիալիստական բնույթի միջոցառումներ և ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ անցնելու սոցիալիստական շինարարությանը»⁵⁵:

Բննարկելով ներքին հետադիմական ուժերի գործունեության ակտիվացման հարցը, համագումարը նախազգուշացրեց այն վտանգավոր հետևանքների մասին, որ կարող են առաջացնել «մոսուլման եղբայրների» հանցավոր ելույթները, մատնանշելով, որ «հենց դրա վրա են հույս դնում խմպերիալիզմը, Իսրայելը, Սադամի վարչակարգը և արաբական հետադիմությունը»⁵⁶: Համագումարը բարձր գնահատեց կուսակցության գերը «եղբայրների» դեմ ծավալված մարտերում, որոնց ընթացքում նահատակվել են շատ կոմունիստներ:

Այդ պայմաններում, 1980-ի հուլիսի կեսերին, Միրիայի կոմկուսը նորից դիմեց ժողովրդական զանգվածներին: Վերլուծելով երկրում ստեղծված իրադրությունը, կոմկուսը նշեց, որ զավաղիրները փորձեցին օգտվել տնտեսական գծվարությունների առկայությունից, պետական հատվածի և աշխատավորական զանգվածների վրա չհենվելով՝ ղեկավարության

Յույլ ալիւմ սխալներէց: Սակայն, ընդգծում էր կոմկուսը, այլ բան է պայքարել սխալները վերացնելու համար, այլ բան՝ անմեղ քաղաքացիների սպանութիւնը: Մանր կացութիւնից զուրս դալու համար կոմկուսը հրատապ խնդիր էր համարում «հենվել ժողովրդական զանգվածների վիակատար պաշտպանութեան վրա՝ իրականացնելու Ա.Ա.Ճ-ի, Բասս կուսակցութեան մարզային VII կոնֆերանսի որոշումներն ու պրեզիդենտ Շ. Ասադի ելույթներում առաջ քաշված խնդիրները»⁵⁷:

Հուլիս-օգոստոսին Գամալեոսում կայացած Բասս կուսակցութեան համազգային XIII համագումարը, վերլուծելով երկրում ստեղծված դրութիւնը, համագումարը նշեց, որ հիմնադրման օրվանից Բասսը եղել է հողեր-կրօնական հետադիմութեան զլխավոր ւխտյանը, նրա մեջ տեսնելով արարական քաղաքակրթութեան ամենաոխերիմ թշնամուն և իմպերիալիզմի զլխավոր հարվածային ուժը: Ներքին քաղաքակրթութեան բնագավառում ընդունված որոշումների նպատակն էր՝ էլ ալելի ուժեղացնել պայքարը «մուսուլման եզրայրների» թափփուկների դեմ, խորացնել և զարգացնել սոցիալ-տնտեսական վերափոխութիւնները, իրագործել երկիրը տնտեսապես ուղիով զարգացնելու վերաբերյալ կուսակցութեան մշակած ծրագիրը, ժողովրդական զանգվածներին ներգրավել կառավարման մեջ, գեմեկրատական լայն ազատութիւններ տալ առաջադիմական քաղաքական կուսակցութիւններին ու հասարակական կազմակերպութիւններին, ամրապնդել Ա.Ա.Ճ-ի դերը քաղաքական կյանքում, քննադատութիւն և ինքնաքննադատութեան միջոցով վերացնել Յույլ տրված բացթողումներն ու թերութիւնները»⁵⁸:

Սիրիական կառավարութեանը վճռական աջակցութիւն ցուց տվին բանվորները, զյուզացիները, հեղափոխական մտավորականութիւնը և այլ առաջադիմական ուժեր: Երկրով մեկ տեղի էին ունենում բազմամարդ ցույցեր ու միտինգներ՝ ի պաշտպանութիւն իշխանութեան ձեռնարկած միջոցառումների, ընդունվեցին մի շարք նոր օրենքներ և զեկրետներ՝ աշխատավարձի բարձրացման և կենսաթոշակների ապահովման վերաբերյալ, լուրջ փոփոխութիւններ մտցվե-

ցին դատավարութեան համակարգում, կանոնավորվեցին գնեթի կաշտնացման և օրինագանց շահութարեքութեան գնեթ պայքարող հանձնաժողովների աշխատանքները:

Միբիայի գնեթ հյուսված դավադրութեան ձախողման դորժում նշանակալից գեր խաղացին նաև արարական առաջադիմական ուժերը, ընդհանրապես կոմունիստական ու բանվորական կուսակցութեաններն ու Պաղեստինի ազատագրական կազմակերպութեան դանազան շեկատները, մասնավորապես «Մուսուլման եղբայրների» ոճրագործութեանները դատապարտվեցին նաև արարական աշխարհի մուսուլմանական ու քրիստոնեական կրոնապետների կողմից:

Մերձավոր արևելքի, մասնավորապես Միբիայի առաջադիմական վարչակարգի գնեթ իմպերիալիստական շքաների և հետադիմական ուժերի մեքենայութեանների ուժեղացման պայմաններում, առանձնահատուկ նշանակություն ունեն արարական ազգային հայրենասիրական ուժերի փոխհարարեքութեանները Մովետական Միութեան հետ Այգ իսկ տեսակետից պատմական խոշոր իրադարձություն հանդիսացավ 1980 թ. կնքված սովետա-սիրիական բարեկամութեան և համագործակցութեան պայմանագիրը: Միբիական ժողովուրդը և արարական առաջադիմական բոլոր ուժերը մեծ գոհունակութեամբ ու երախտագիտութեամբ զիմավորեցին պայմանագրի վավերացումը, քանզի այն նեցուկ է Միբիայի հակաիմպերիալիստական պայքարին և ստրատեգիական հավասարակշռութեան ստեղծեց ընդդէմ ԱՄՆ—Իսրայել—նզիպտոս առանցքի ի խնդիր Մերձավոր արևելքում արգարացի ու կաշտնային խաղաղութեան հաստատման:

Սակայն իմպերիալիստական տերութեաններին ծախու կամակատարները ազմուկ բարձրացրին Միբիայի գնեթ, սրը, իբր կնքելով պայմանագիրը, հրամարվեց դրական շեղորթութեան սկզբունքներից, իբր այն ահավոր «սպառնալիք» էր ողջ Մերձավոր արևելքում:

1981 թ. մարտի 21-ին էլույթ ունենալով «Արարական բանվորական արհմիութեանների միջազգային ֆեդերացիայի» 25-րդ տարեգարձի առթիվ, Հ. Ասադը անարգանքի սյունին

զամեց իմպերիալիզմի դորձակալներին և ըստ արձանագրույն զնահատեց սովետա-սիրիական պայմանագրի նշանակու-թյունը: Նա ընդգծեց, որ «Սովետական Միությունը Սիրիային ցույց է տալու մեծարժեք ուղղմարագաքական ու տնտեսական օգնություն: ...Իսկ նրանք, ովքեր վարկաբեկում են բարեկա-մություն պայմանագիրը, խղճամանանք կենքեն Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ»⁵⁹:

1981 թ. մայիսի 9-ին կայացած խորհրդակցությունյան ժա-մանակ արարական երկրների կոմունիստական ու բանվորա-կան կուսակցություններն անհրաժեշտ համարեցին համաշ-խարհային հասարակայնության ուշադրությունը հրավիրել աչն փաստի վրա, որ ամերիկյան իմպերիալիզմն Իսրայելին օգտագործում էր արարական ազատագրական շարժման, Մի-օրիայի, կիրանանի և ՊՐՇ-ի դեմ, այն՝ ժամանակ, երբ չիրա-նանյան ճգնաժամի կարգավորման որոշակի գրական գոր-ծունեք երևան եկան, - երբ ձախողվեցին ներքին դավադրա-կան գործունեությունները թե Սիրիայի և թե կիրանանի դեմ և, վերջապես, երբ ուժեղացավ համագործակցությունը արա-նների և ՍՍՀՄ-ի միջև: Կոմունիստները դիմեցին իրենց եր-կրների հայրենասիրական-առաջադիմական բոլոր ուժերին՝ համախմբվել մեկ միասնական ճակատում, ընդդեմ իմպե-րիալիզմի, Իսրայելի և հետադիմության, ի պաշտպանություն սիրիա-չիրանանյան-պաղեստինյան դաշինքի տոկունության⁶⁰:

Ի պաշտպանություն Սիրիայի, 1981-ի հունիսի 22-ին Գա-մաալիսում գումարվեց համերաշխության միջազգային կոն-ֆերանսը: Սովետական կառավարության անունից ընթերցվեց կոնֆերանսի մասնակիցներին հղված նամակը, որտեղ ասված էր, որ Մերձավոր արևելքում ամերիկյան իմպերիալիզմի և նրա դորձակալների մեթենայությունները պահանջում էին արարական աշխարհի բոլոր հայրենասիրական ուժերի միաս-նություն, նրանց հակաիմպերիալիստական պայքարի ուժե-ղացում և արարական ժողովուրդների արգաբացի պայքարի համաշխարհային պաշտպանություն: Նամակը միաժամանակ խիստ նախադգուշացնում էր Իսրայելին, որ Սիրիայի դեմ

ուղղված ամեն մի ազրեւիա դիմադրութեան կհանդիպի Սո-վետական Միութեան և բոլոր խաղաղասեր պետութիւնները կողմից: Սիրիայի նկատմամբ ձեռնարկած արկածախնդրութեանը, սակայն, ձախողվեց հենց սաղմի մեջ, այն բանից հետո, երբ սովետական կառավարութիւնը լրջորեն զգուշացրեց ազրեւորին⁶¹,

Սիրիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը շարունակում է մնալ անկայուն և տաղնապալից:

Եզնածամից դուրս դալու համար իրական ծրագիր է առաջադրում Սիրիայի կոմկուսը: Պաշտպանելով սիրիական կառավարութեան հակաիմպերիալիստական արտաքին կուրսը և ձեռք բերած նվաճումները, կոմկուսը միաժամանակ շատում է կարճ ժամանակամիջոցում հասնել հետեւյալ կենսական խնդիրների իրագործմանը. ամրապնդել բոլոր հայրենասիրիական-առաջադիմական ուժերի միասնութիւնը և լայն ղեմակրատական ազատութիւններ տալ, որպէսզի ամուր հիմքերի վրա զրգին Ա.Ա.Ճ-ի աշխատանքները, առավելագույն շահով խորացնել և ամրապնդել սոցիալ-տնտեսական վերափոխութիւնները, նախ՝ ապահովելու համար Սիրիայի վերադարձը սոցիալական առաջադիմութեան ուղուն, և ապա՝ բնթանալու սոցիալիստական շինարարութեան հետագա զարգացման ուղիով, ուժեղացնել համագործակցութիւնն ու բարեկամութիւնը ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների հետ⁶²,

* * *

Խնդրո առարկա ժամանակաշրջանում Սիրիայի առաջադիմական վարչակարգը իրականացրեց սոցիալ-տնտեսական վերափոխութիւնների մի ամբողջ կոմպլեքս: Սիրիայի ազգային ղեմակրատական հեղափոխութեան շնորհիվ նախադրելիներ ստեղծվեցին երկրի տնտեսութեան հետամնացութեան վերացման համար:

Երկրի զեկափար Հեղափոխական դեմոկրատները, սկզբից
ևնք մերձելով զարգացման կապիտալիստական ուղին, հան-
գես ևկան ազգային-դեմոկրատական Հեղափոխությունը մին-
չև վերջ հասցնելու և սոցիալիզմի ուղիով ընթանալու օգտին:
Սիրիայի մշտական սահմանադրության առաջին հոդվածն
այսպես է բնութագրում երկրի քաղաքական կարգը. «Սիրիա-
յի Արաբական Հանրապետությունը ժողովրդագեմոկրատա-
կան և սոցիալիստական սովերեն պետություն է»⁶³:

Սոցիալական առաջադիմության համար մղված պայ-
քարն ուղեկցվում էր դասակարգային սուր պայքարով: Հողա-
յին բարեփոխությունների կիրառման հետևանքով հուժկու
հարված հասցվեց խոշոր կալվածատիրությունը: Կատարվե-
ցին մի շարք ազգայնացումներ արդյունաբերության, արտա-
քին առևտրի, բանկային համակարգի, ապահովագրական
ընկերությունների և սպասարկման բնագավառներում: Այդ
ընկերությունները հատվածի զարգացմանը և ազ-
գային անկախ տնտեսության ամրապնդմանը:

Պետական հատվածը 1980-ի տվյալներով ընդգրկում էր
արդյունաբերական ձեռնարկությունների ավելի քան 80%-ը,
արտաքին առևտրի 70%-ը և ներքին առևտրի 40%-ը: Տարեց-
տարի աճում էին պետական հատվածին հատկացվող կապի-
տալ ներդրումները: 1976—1980 թթ., 4-րդ հնգամյակում,
օրինակ, զբանք կազմում էին 44, 777, 521 հազար սիրիական
լիրա (82,7%), մինչդեռ մասնավոր և համախառն հատված-
ներին հատկացվել էր 9,388,479 հազար լիրա (17,3%)⁶⁴:

Պետական հատվածի ակտիվ գործունեությանը են պայ-
մանավորված առևտրա-տնտեսական բացասական հաշվե-
կշռի ծածկումը, գյուղատնտեսության, արդյունաբերության,
և տնտեսության այլ ճյուղերի զարգացման տեմպերի արա-
գացումը, երկրի պաշտպանության համար հսկայական ծախ-
սերի փոխհատուցումը և ժողովրդական զանգվածների կեն-
սամակարդակի նկատելի բարելավումը:

Պետական հատվածը համարվում էր կուտակման ֆոնդի
զլխավոր աղբյուրը: Պաշտոնական տվյալների համաձայն,
1968—1973 թթ. ազգային ևկամախ տարեկան միջին աճը

կազմել էր 9,6%, մինչդեռ ազգային խոշոր բուրժուազիայի իշխանությունների տարիներին՝ 1954—1958 թթ. այն չի անցել 4,5%-ից⁶⁵: Բարձրացել էր նաև բնակչության մեկ շնչին բնկրնոզ/միջին եկամուտը, եթե այն 1967 թ. կազմում էր 670⁶⁶, ապա 1975 թ.՝ 1825 սիրիական լիրա⁶⁷:

Արիւրայի տնտեսության զլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Այն ապահովում է ազգային եկամտի 37—43%՝ նրանում ընդգրկված է երկրի աշխատուժի 60—70%-ը, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմում է երկրի արտահանումների 70—80%-ը⁶⁸: Եթե նրա բաժինն ազգային եկամտում 1967 թ. կազմում էր 1093 մլն սիրիական լիրա⁶⁹, ապա 1975 թ. հասավ 2014,2 մլն սիրիական լիրայի⁷⁰:

Արիւրայի հողային տարածությունը կազմում է 18,373,872 հեկտար: Ամբողջ երկրում մշակման համար պիտանի 8,632,452 հա հողատարածությունից մշակվում է 6,096,768 հա, որից ընդամենը 538,003 հեկտարն է ոռոգվող⁷¹:

Արիւրայում մինչև 1958 թ. հողը հիմնականում էկենտրոնացված էր խոշոր կալվածատեր-ֆեոդալների ձեռքում: Ամբողջ մշակելի հողատարածությունից 3 մլն հա պատկանում էր 7 հազար ֆեոդալական ընտանիքների, իսկ ոռոգվող հողատարածության $\frac{3}{4}$ մասին՝ 400 հազար հա, տիրում էր 1600 կալվածատեր⁷²:

1958 թ. սեպտեմբերի 28-ին հրապարակվեց հողային բարեփոխությունների մասին № 161 օրենքը, որ սահմանեց կալվածատերերի ու գյուղացիների հողակտորների շափը՝ 3ուրաքանչյուր կալվածատեր իրավունք ուներ իր ձեռքում պահել 300 հա անչրդի և 80 հա ոռոգվող, ինչպես նաև ժառանգել 160 հա անչրդի և 40 հա ոռոգվող հող, այլ խոտրով տիրել 460 հա անչրդի և 120 հա ոռոգվող հողատարածության⁷³: Անշուշտ դա մեծ տարածություն էր: Օրենքը նախատեսում էր կալվածատերերից վերցված հողերը գյուղացիներին բաժանել, սակայն ոչ սեփականատիրական իրավունքով: Ֆեոդալները բռնազրավված հողերի համար պետք է

փոխհասուցում ստանալին: Այն որոշ շափով սահմանափակեց խոշոր կալվածատերերի սոցիալ-տնտեսական հզորությունը և քաղաքական ազդեցությունը, նպաստեց գյուղում կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացմանը և հողազուրկ գյուղացիների մի մասին ապահովեց հողով:

Սիրիայի կոմկուսը և մյուս առաջադիմական ուժերը անզույ պայքար էին մղում հողային բարեփոխությունների օրենքն ավելի արմատական դարձնելու համար: Նրանց ճընշման ներքո Սիրիայի իրար հաջորդող կառավարությունները ստիպված եղան նոր կամ լրացուցիչ օրենքներ հրապարակելու: Այսպես, 1963 թ. և 1966 թ. հողատիրության առավելագույն շափը սահմանվեց 40-ից մինչև 324 հա անչրդի և 16-ից մինչև 60 հա սոսոզիտը հողատարածություն⁷⁵:

1959—1968 թթ. ընթացքում հողային բարեփոխությունների օրենքի կենսագործման շնորհիվ 65 հազար հողազուրկ և սակավահող գյուղացիներ ստացան 672,337 հա, այսինքն ստարված հողատարածություն՝ 1,356,188 հա, միայն 49,8%-ը⁷⁵: Իսկ մինչ 1974 թվականը գյուղացիներին բաժանվեց 1,5 մլն հա կալվածատիրական և 600 հազար հա պետական հողատարածություն⁷⁶:

Հողային վերափոխությունների քաղաքականությունը չուրջ հարված հասցրեց ֆեոդալական կալվածատիրական ուժերի դիրքերին, վերացրեց ֆեոդալական արտադրահարաբերություններին բնորոշ դժերը (ինչպիսիք են աշխատանքային պարհակները և դանազան հարկեր), սրեց դասակարգային պայքարը գյուղում և բարձրացրեց գյուղացիության դասակարգային գիտակցությունը: Սակայն հողային հարցը զեռես չի ստացել իր արմատական լուծումը: Գեռես գոյություն ունի հողազուրկ գյուղացիների մի հստ վանգված, իսկ հող ստացող հողազուրկները մեծ մասը, զրկված լինելով նյութական միջուղացիների մեծ մասը, զրկված լինելով նյութական բուրջոցներից, իր հողակտորը վարձով է տալիս գյուղական բուրջուագրայի ներկայացուցիչներին, որոնք, օգտագործելով ժամանակակից տեխնիկան, ստեղծում են կապիտալիստական համեմատաբար խոշոր տնտեսություններ: Մոտ 4600 խոշոր

Հողատերեր, որոնց վրա բլե տարածվում էր բարեփոխությունների օրենքը, շարունակում էին օգտագործել ինչ-որ ձևով պահպանած իրենց լայն Հողատարածությունները և Հագործել նրանց վրա աշխատող գյուղացիներին⁷⁷:

Միրիայում լայն թափ ստացավ գյուղատնտեսական կոոպերատիվ շարժումը: Մինչև 1974 թ. երկրում կային 1725 մատակարարող, վաճառող կոոպերատիվներ, որոնք ընդգրկում էին 135 Հազար գյուղացիական քնտանիք և որոնց անօրինություն տակ էր գտնվում մշակելի Հողատարածության $\frac{1}{3}$ մասը⁷⁸, Իսկ 1979 թ. կոոպերատիվների թիվը Հասավ 3501-ի, որոնք ընդգրկում էին 304844 մարդ և գրադեցնում 1564 Հազար Հեկտար Հողատարածություն⁷⁹:

Վարկերի, սերմացուի, պարարտանյութի, գյուղատնտեսական գործիքների, ժամանակակից տեխնիկայի և ռոտոման միջոցների ապահովման գործում պետությունը զգալի օգնություն է ցուցաբերում կոոպերատիվներին: Գյուղատնտեսական կոոպերատիվ բանկի արամագրած վարկերը տարեցտարի նկատելիորեն աճում են: Եթև 1967 թ. դրանք կազմում էին 20,598,736 սիր. լիրա⁸⁰, ապա 1979 թ.՝ 609,9 մլն լիրա⁸¹: Սակայն կոոպերատիվները կանգնած են դժվարությունների առջև. ղեռնա անբավարար է շրավոր և մանր գյուղացիության գերը կոոպերատիվների վարչության ղեկավարման գործում, որ Հարուստ գյուղացիները փորձում են պետական միջոցները օգտագործել անձնական նպատակների համար, ղեկավար մարմիններում բացակայում են ղեմնկրատական սկզբունքները, երբեմն էլ պետական մարմինների միջամտությունը խոչընդոտում է նրանց բնականոն զարգացումը, Հատուկ ուշադրություն չի դարձվում կոոպերատիվների անդամների մասնազիտական որակավորմանը և շուկայում գյուղատնտեսական մթերքների իրացմանը:

Հողային բարեփոխությունների օրենքը նախատեսում է պետական տնտեսությունների ստեղծում: Մինչև 1975 թ. երկրում Հիմնվել են 15 փորձնական և արտադրական պետական տնտեսություններ, որոնք ընդգրկում էին 6100 Հա գոտվող և 127000 Հա անջրգի Հողատարածություն⁸²: Սակայն բարե-

նպաստ սպառմաններն առկա էին պետական տնտեսություն-
ների բաղաձայման և գյուղատնտեսական կոոպերացիաների
ստարածման համար, հատկապես պետության կողմից նոր
լուրացված հողատարածություններում:

Միրիայի գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման նը-
պասակով տարեցտարի աճում են նրան հատկացվող կապիտալ
ներդրումները, և՛ 1967 թ. դրանք կազմում էին 436,315 հա-
զար սիր. լիրա⁸³, ապա 1975 թ.՝ 1254 մլն, իսկ 1979 թ.՝ 1611
մլն սիր. լիրա⁸⁴: Գյուղատնտեսական համախառն արտա-
դրանքը այդ թվականներին համապատասխանաբար կազմում
էր 1039,3⁸⁵, 2014,2, 2170,2 մլն սիր. լիրա⁸⁶: Այսինքն՝ գյու-
ղատնտեսական արտադրանքը 1967 թ. համեմատությամբ
1975 և 1977 թվականներին աճել էր համապատասխանաբար
93.8 և 108,8% -ով:

Քանի որ գյուղատնտեսությունը հիմնականում համար-
վում է մասնավոր հատված, ուստի բացի պետության հատ-
կացրած կապիտալ ներդրումներից, մասնավոր հատվածը
նույնպես հսկայական գումարներ է ներդնում: Այսուհանդերձ
գյուղատնտեսական արտադրանքի աճը ևս է մնում աճող
պահանջարկից: Գրա մասին է վկայում այն փաստը, որ
1976 թ. Միրիան ներմուծեց 1,5 մլրդ սիր. լիրայի գյու-
ղատնտեսական զանազան մթերքներ⁸⁷:

Այս բոլորը խոսում են այն մասին, որ Միրիայի գյուղա-
տնտեսության առջև լուրջ խնդիրներ են կանգնած, և սիրիա-
կան կառավարությունը շատ անելիքներ ունի այդ ուղղու-
թյամբ:

Քաջ գիտակցելով հանդերձ, որ հողային բարեփոխու-
թյունների մասին վերը նշված օրենքները լիովին չեն լուծի
ագրարային հարցը, Միրիայի առաջադիմական-հայրենա-
սիրական ուժերը, այնուամենայնիվ պաշտպանում են այդ
օրենքները և ողջ ուժերը ներդնում դրանք կենսադործելու և
խորացնելու համար:

Ագրարային հարցը լուծելու առավել հետևողական ծրա-
ցրով հանդես է գալիս ՍԿԿ-ը: 1969 թ. կուսակցության III

Համագումարը առաջ քաշեց ազդարային նոր ծրագիր, որը գյուղացիական զանգվածներին կոչ էր անում պայքարել հանուն ազգային-դեմոկրատական հեղափոխության խնդիրներին իրականացման: Համագումարը մասնավորապես բնոյզծում էր, որ արմատական բարեփոխությունները պետք է ուղղված լինեն կալվածատիրական հողատիրության մնացորդները ոչնչացնելուն⁵⁵:

1974 թ. կոմկուսի IV համագումարը սահմանեց կուսակցության զլխավոր գիծը գյուղացիական հարցում: Ծրագրում արտացոլված էին փոխադարձաբար կապված երկու գաղափար, այն է՝ «կալվածատիրական սեփականության մնացորդները վերացնելու» լոզունգով գյուղացիներին ազգային-դեմոկրատական հեղափոխության մեջ ներգրավել և «գյուղում հանուն սոցիալիստական վերափոխությունների հաղթանակի» մղվելիք պայքարի համար համապատասխան սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններ նախապատրաստել: Ըստ որում բանվոր դասակարգը պետք է մճուկանորեն պաշտպանի գյուղացիների պահանջները: Միրայի կոմունիստական կուսակցությունը հանդես եկավ ազգային-դեմոկրատական հեղափոխության մեջ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման պահանջով:

Կոմկուսը կարևորագույն խնդիր էր համարում.

— բռնազրավել խոշոր կալվածատեր-ֆեոդալների մնացած հողերը, սահմանափակել հողատիրության և հողօգտագործման առավելագույն չափը:

— շարունակել բռնազրավված և պետական հողերի բաժանումը ընչազուրկ և ազքատ գյուղացիներին.

— դեմոկրատական հիմունքներով վարկ տալ կուլանտեսային կարգի տարածմանը, որը թույլ է տալիս ուսցիտնալ կերպով օգտագործել աշխատանքային ռեսուրսները, կիրառել նոր տեխնիկան, լայն հնարավորություններ է ստեղծում գյուղացիների եկամուտների ու բարեկեցության բարձրացման համար.

— ընդլայնել գյուղատնտեսական հանրային հատվածը, շարունակելով խոպան հողերի յուրացումը և պետական արն-

սեռութունների ստեղծումը, հատկապես նփրատի ալազանում.

—կատարելագործել գյուղատնտեսության համակողմանի զարգացման պլանավորումը, որպեսզի ապահովվի հողագործության, անասնապահության և արդյունաբերական կուլտուրաների արտադրանքի բարձրացումը.

—բարելավել գյուղատնտեսական բանկի գործունեությունը, վարկ տալ միայն ընչազուրկ, աղքատ և միջին դաշայիններին, կոտակերատիվներին ու կոլտնտեսություններին.

—հիմնել պետական մասնագիտացված հիմնարկներ գյուղատնտեսական միերքների վաճառքի համար⁸⁰;

1980 թ. դումարված Միրիայի կոմկուսի V համագումարում նույնպես աչքի ընկնող տեղ գրավեց ազրարային հարցը: Հաշվետու զեկուցման մեջ նշվում էր, որ գյուղում հարկավոր է երկաթյա ձեռքով ճեշել գյուղական բուրժուազիայի (կուլակության) աճող դիմադրությունը: Կուլակները վարձակալում էին հողերն ու գյուղատնտեսական մեքենաները, նեղում շրջվորությունը: Կուսակցությունը անհրաժեշտ էր համարում շարունակել պայքարը հողային բարեփոխությունների լիակատար խորացման ու կատարելագործման համար, իրագործել կոմունիստների առաջ քաշած «հողը՝ մշակողին» հեղափոխական լուղուցք և ծրագրել սոցիալիստական հողագործության կազմակերպման նպատակին ուղղված միջոցառումներ⁸⁰:

Միրիայի սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխությունների համակարգում նշանակալից տեղ է գրավում ազգային արդյունաբերությունը: Միրիայում արդյունաբերության առավել զարգացած ճյուղերից են թեթև, նավթաֆոսֆորական, մետաղամշակման, էլեկտրաէներգիայի և շինանյութերի արդյունաբերությունը:

Մինչև 1979 թ. երկրում հաշվվում էր պետական հատվածի՝ 1071 խոշոր և մասնավոր հատվածի 43460 մանր, ընդամենը 44531 արդյունաբերական ձեռնարկություն⁸¹, 1979 թ. սովյալներով միայն պետական հատվածում աշխատում էր

96856 քանվոր⁹², Տարեցտարի աճում են պետական հատվածին հատկացվող կապիտալ ներդրումները, որոնց մասին պատկերացում է տալիս աղյուսակ 1-ը:

Սիրիայի արդյունաբերական պետական հատվածի կապիտալ ներդրումները		Աղյուսակ 1
Տարեթիվ	Կապիտալ ներդրումները (մլն. սիր. լիրա)	Տոկոսներով նախորդ տարվա համեմատությամբ
1972	320,3	—
1973	436,3	29
1974	560,4	125
1975	1593,1	63,8
1976	1572,2	86,0

Հարկ է նշել, որ դրանք 1979 թ. կազմեցին 3636194 հազար սիր. լիրա⁹⁴:

Այս միջոցառումները, անշուշտ, առաջադիմական բրնույթ էին կրում, քանի որ բարենպաստ պայմաններ էին բացահղում ազգային արդյունաբերության համար: Սակայն պետք է նշել, որ սեղի էր ունենում այդ ներդրումների զգալի վատնում և շարաշահում՝ պետական բյուրոկրատական ապարատի որոշ ծառայողների, ինչպես նաև մասնավոր հատվածի կողմից: Բանն այն է, որ Սիրիայում դեռևս գոյություն ունի կապիտալիստական մասնավոր հատված, որն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում տնտեսության մի շարք ճյուղերում, հատկապես Վերամշակող արդյունաբերության, սպասարկման, շինարարության և ներքին մեծածախ առևտրի ոլորտներում: Այսպես, 1970 թ. արդյունաբերական արտադրանքի ընդհանուր արժեքը կազմում էր 2,621 մլն լիրա, որից 855 մլն, այսինքն 32,6%⁹⁵ պատկանում էր մասնավոր հատվածին:

Սիրիայի արդյունաբերության արդիականացման գոր-

ձում նշանակալից էր ՍՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների ցույց տված տնտեսական ու տեխնիկական օգնությունը: 1957—1973 թթ. ՍՍՀՄ-ի օժանդակությամբ Սիրիայում շարք մտան ավելի քան 23 օբյեկտներ, այդ թվում՝ արդյունաբերական 9 խոշոր ձեռնարկություններ: Կառուցման ընթացքում են գտնվում 25-ից ավելի օբյեկտներ⁶⁰: Տնտեսության համար կապես, էներգետիկ բալանսի հետագա զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ Սովետական Միության օգնությամբ նփրատի ամբարտակի և ջրաէլեկտրակայանի կառուցումը, որը տալիս է երկրի էլեկտրաէներգիայի 80%-ը և ավելացրել է մշակելի հողատարածությունը 600 հազար հա-ոգ⁶¹:

Սովետական Միությունը Սիրիային ցույց է տալիս բազմակողմանի օգնություն, որն առաջին հերթին նպաստում է երկրում արդյունաբերության նոր շրջանի ստեղծմանը, գյուղատնտեսության հետագա զարգացմանը, պետական հատվածի ամրապնդմանը: Սիրիայի կոմկուսը բարձր է գնահատում Սովետական Միության անշահախնդիր օգնությունը, որը կարևոր դեր է խաղում երկրի տնտեսական անկախության նվաճման և քաղաքական անկախության ամրապնդման գործում: Ահա, թե այդ մասին ինչ է գրում «Գիրասսաթ իշթիրակի» ամսագիրը. «Սովետական Միության տնտեսական-տեխնիկական օգնությունը մեր աշխատավորական զանգվածները գնահատում են որպես եզրայրական օգնություն, որն արտահայտում է մարտնչող ժողովուրդների հանդեպ Սովետական Միության քաղաքականության ինտերնացիոնալիստական բնույթը: Մեր ժողովուրդը քաջ գիտակցում է, որ ՍՍՀՄ-ն ու սոցիալիստական մյուս երկրները շունեն ավելորդ կապիտալներ՝ արտահանելու և ներգնելու զարգացող երկրներում բնական ուսուցանելու և ներգնելու թալանելու, ինչպես այդ անում են իմպերիալիստական մոնոպոլիաները»⁶²:

Սիրիայի կոմկուսը գտնում է, որ արդյունաբերական պետական հատվածի հետագա զարգացման համար անհրաժեշտ է այն ազատել պորտաբույծ մասնավոր հատվածի շահագործումից, վերածել տնտեսության գլխավոր օղակի, ազատել

բյուրոկրատիզմի քաշքշուկներից, ափեւացնել կապիտալ ներգրքումները, ապահովել անհրաժեշտ որակյալ կազմերով և արտադրութեան մեջ կենսադործել նյութական և բարոյական խթանները, բարեխափել աշխատավորութեան սոցիալական ապահովագրութեան, կրթութեան, առողջապահութեան, կուլտուրական հանգստի պայմանները: Կոմկուսը նաև անհրաժեշտ է համարում կազմակերպել արտադրական բանվորական կոմիտեներ, որոնք կմասնակցեն և կվերահսկեն արտադրութեան զեկավարումը, չութարանջուր ձեռնարկութեանում և հիմնարկում ստեղծել ազգային առաջադիմական ճակատի մասնաճյուղեր⁹⁹:

Սիրիայի տնտեսութեան մեջ կարևոր դեր է խաղում առևտուրը: Նա տալիս է ազգային եկամտի 15% -ը: Մանգատի ժամանակ Սիրիայի առևտուրը ամբողջովին կախված էր օտարերկրյա՝ ֆրանսիական, անգլիական և ամերիկյան կապիտալից: Քաղաքական անկախութեան ձեռք բերելուց հետո ազգային իշխանութեանը ձգտում էր ամեն կերպ ազատել կապիտալիստական մոնոպոլիաների գերիշխանութեանից: 1965 թվականից սկսած սիրիական կառավարութեանները կիրառած ազգայնացումների շնորհիվ, ուժեղացավ պետական հատվածի դերը նաև առևտրի բնագավառում: Բաաս կուսակցութեան մարզային IV (1968 թ.), V (1971) և VI (1975 թ.) համագումարները հատուկ ուշադրութեան նվիրեցին արտաքին առևտրի լիակատար ազգայնացման հարցին: Պաշտոնական տվյալների համաձայն 1976 թ. արտաքին առևտրի պետական հատվածի ձեռքում էր կենտրոնացված եկեմուտքի 68,7% -ը:

Սակայն մասնավոր հատվածի գոյութեանը մեծ վտանգ է ներկայացնում, հատկապես ներմուծումների ներքին առևտրի ասպարեզում, ուր այն տնօրինում է ապրանքաշրջանառութեան 80% -ը:

Ստորև բերված աղյուսակը (աղ. 2) ցույց է տալիս ներմուծումների բաշխումը պետական և մասնավոր հատվածների միջև (մլն. սիր. լիրայով):

Սերբիայի ներմուծումների բաշխումը պետական և մասնավոր հաս-
վածներին միջև

Տարեթիվ	1972	1974	1975	1976
Պետ. հասված	1611	3462	4511	5771
Մասնավոր հասված	731	1108	1724	3632

Նշված թվերը փաստում են, որ ներմուծումները պետական հասվածում աճել էին ընդամենը 3,6 անգամ, իսկ մասնավոր հասվածում՝ մոտ 5 անգամ: 1973—1976 թթ. խոշոր առևտրականների զուտ շահույթը արտաքին առևտրից կազմել է 2 միլիարդ սիր. լիրա¹⁰¹:

Ի կատարումն ազգային առաջադիմական ճակատի 1979 թ. որոշումների, սիրիական կառավարությունը ձեռնամուխ եղավ մի շարք օրենքների հրապարակման: Պետական ապարատը հետադիմական և կաշառակեր տարրերից մաքրելու նպատակով կազմակերպվեց հատուկ կոմիտե: Խիստ հակոդություն սահմանվեց վալյուտային գործողությունների նկատմամբ. վերացվեց սև շուկան և ստեղծվեց նրան համարժեք պետական շուկա, որը սկսեց կարգավորել վալյուտային ընթացակարգերը: Վերստին գործադրվեցին մի շարք սահմանափակումներ արտաքին առևտրի մասնավոր հասվածի նկատմամբ: Այդ միջոցառումների շնորհիվ զգալիորեն բարձրացավ առևտրի պետական հասվածի դերը: 1979 թ. ավյալներով, պետական հասվածի կողմից արտահանվել է 5931,9 մլն դոլար, պետական հասվածի կողմից նմանապատասխանը, մինչդեռ մասնավոր հասվածի կողմից համապատասխանաբար՝ 3621,1 և 521,4 մլն սիր. լիրայի¹⁰², Դա նշանակում է, որ 1976 թ. համեմատությամբ պետական հասվածի ներմուծումներն աճել են 1,6 անգամ, այնինչ մասնավորինը նվազել է:

Սիրիան հիմնականում ներմուծում է ավտոմեքենաներ,

սարքավորումներ, գյուղատնտեսական մեքենաներ, բիմիական նյութեր, սննդամթերք, հումք, կիսամշակված արդյունաբերական ապրանքներ, Թանկարժեք բաբեր և մեծադներ: 1967 թ. նրա ներմուծումները կազմեցին 1069 մլն. սիրւիրա¹⁰³, իսկ 1975 թ.՝ 6236 մլն լիրա¹⁰⁴, այլ խոսքով՝ աճեցին ազնիւի քան 6 անգամ, մինչ արտածումները համապատասխանաբար կազմեցին 599¹⁰⁵ և 3440, 9 մլն սիրւիրա¹⁰⁵, այսինքն՝ աճեցին 5,7 անգամ: Հարկ է նշել, սակայն, որ ԼՍԽ 1967 թ. արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը կազմել է 410 մլն լիրա¹⁰⁷, ապա 1975 թ. այն հասավ աճավճշափերի՝ 2795,1 մլն սիրւիրա¹⁰⁸: Բացասական հաշվեկշիռը 1976, 1977, 1978 թվականներին համապատասխանաբար՝ կազմեց 5062¹⁰⁹, 6250 և 5500 մլն սիրւիրա¹¹⁰:

Սիրիայի արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը արդյունք է ԱՄՆ-ի և արեւմտյան իմպերիալիստական պետութւունների հետ կնքված անիրավահավասար առևտրական համաձայնագրերի, որոնք ամեն կերպ ջանում են ազնիւի շատ արտահանել, քան ներմուծել, Սիրիային մշտապես կախման մեջ պահել համաշխարհային կապիտալիստական տնտեսութւնից, անընդհատ բարձրացնել արդյունաբերական և կիսամշակված ապրանքների գները՝ կապված կապիտալիստական աշխարհի տնտեսական ճգնաժամի հետ:

Սիրիայի ներմուծումները կապիտալիստական երկրներից 1976 թ. կազմեցին 6283144 հազար սիրւիրա, այսինքն ընդհանուր ներմուծումների 68,2%-ը, մինչդեռ նրա արտահանումները կազմեցին ընդամենը 2437373 հազար սիրւիրա, այսինքն՝ ընդհանուր ծավալի 58,8%-ը¹¹¹: Դա նշանակում է, որ Սիրիայի առևտրական բացասական հաշվեկշիռը կապիտալիստական երկրների հետ 1976 թ. կազմեց 3,845,771 հազար սիրւիրա: Եվ 1979 թ. ձեռնարկված միջոցառումներին շնորհիվ այն իջավ 3015452 հազար լիրայի¹¹²: Իմպերիալիստական շրջանները աշխատում են Սիրիայից ներմուծել իրենց համար անհրաժեշտ հումքը (բամբակ, նավթ, հացահատիկ), դրա փոխարեն Սիրիա արտահանել միջին կամ ցածր

տեխնոլոգիական մակարդակ ունեցող գործարաններ, որոնց արժեքը բարձր է, իսկ արտադրողականությունը՝ ցածր: Սիրիացի առաջադեմ անասագետ գոկտոր Ռիչլի Ալլա Հիլանը երազացիորեն նշում էր. «Մեր արտաքին առևտուրը մեծ մասամբ կախված է կապիտալիստական մոնոպոլիստական ընկերություններից, որոնք պարտադրում են մեզ վաճառել մեր արտահանումները ցածր գներով, փոխարենը ներմուծելով բարձր գներով սպառողական ապրանքներ»¹¹³:

Ընդհանրապես, Սիրիայի Հեռ ՄՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների առևտրա-տնտեսական հարաբերությունները խարսխված են համահավասարության և փոխհաստատության սկզբունքների վրա: Ի տարբերություն կապիտալիստական երկրների, սոցիալիզմի երկրների ընկերակցության Հեռ Սիրիայի առևտրաշահ հաշվեկշիռը հաճախ ակախվ էր, իսկ եթե որևէ բացասական հաշվեմեացորդ էր դրանում, ապա այն շնչին էր առաջինի համեմատությամբ: Սոցիալիստական երկրների Հեռ առևտրի առանձնահատկություններին մեկն էլ այն է, որ վերջիններս, արտահանում են Սիրիայի անասությունից զարգացման համար խիստ անհրաժեշտ ապրանքներ, փոխարենը գնելով սիրիական ավանդական ապրանքները: Ավելին, Սովետական Միությունը վճարումները ընդունում է ազգային վալյուտայով՝ սիրիական լիրայով, մի բան, որ ուղղակի օգնություն է Սիրիայի տնտեսության զարգացմանը:

Սովետա-սիրիական առևտրական հարաբերությունների զարգացման համար մեծ նշանակություն ունեցան 1965 թ., 1970 թ. և 1976 թ. կնքված առևտրական պայմանագրերը:

Սիրիայի ներածումները Սովետական Միությունից 1967—1975 թթ. բարձրացել են 30,8-ից մինչև 99 մլն ուրլի, այսինքն 221,4%-ով, իսկ արտահանումները՝ 16,4-ից մինչև 66,8 մլն ուրլի, այսինքն աճել են 319,5%-ով¹¹⁴:

Չնայած առևտրական միջնորդ բուրժուազիայի գործունեության սահմանափակման ուղղությամբ սիրիական կառավարության բազում ջանքերին ու միջոցառումներին, Հեռավազում շրջաններին հաճախ հաջողվում էր կրճատել սոցիա-

լիստահան երկրների հետ Սիրիայի առևտրատնտեսական կապերը կապիտալիստական երկրների հետ կապերի ընդլայնման հաշվին: Եվ որքան ընդլայնվում էին այդ կապերը, նույնքան մեծանում էին արտաքին առևտրի դեֆիցիտը: Ինֆլյացիոն երևույթները, բարձրանում գները և նվազում աշխատավորության ուսուցումը:

Սիրիական կառավարության և Ա.Ա.Ճ-ի 1979 թ. որոշումներից բխող միջոցառումներն ըստ էության կտրուկ փայլեք էին բարելավելու երկրի տնտեսական վիճակը, սակայն դրանց կենսագործումը թերի մնաց: Այս հարցում Սիրիայի կոմկուսի մշակած տնտեսական ծրագիրը պահանջում էր արմատական վերափոխություններ իրագործել առևտրի ոլորտում.

— բոլոր հիմնական ապրանքների ելևմուտք կենտրոնացնել առևտրական պետական հատվածի ձեռքում.

— սահմանափակել պերճանքի առարկաների ներմուծումը, կամ էլ դրանց ներմուծումը կապել տեղական արդյունաբերական արտադրանքի արտահանման հետ.

— ապահովել արտաքին առևտրի դրական հաշվեկշիռը:

— օգտվել սոցիալիստական երկրների առաջարկած երկարաժամկետ վարկերից և տնտեսության զարգացման տեմպերը արագացնելու նպատակով նրանցից ներմուծել անհրաժեշտ ապրանքներն ու տեխնիկան.

— խիստ միջոցներ ձեռնարկել մաքսանենցների, միջնորդների, կաշառակերների և կապալառուների նկատմամբ:

— հիմնել արտաքին առևտրի բանկ, որը պետք է զբաղվի ֆինանսավորման, վարկավորման և արտաքին փոխառությունների կարգավորման հարցերով.

— բոլոր երկրների հետ համեմատական հավասարակշռություն ապահովելու նպատակով վերագառնալ վճարային պայմանագրերի եղանակին և պարտագրել նրանց գնել սիրիական արտադրանքը.

— ընդլայնել ներքին առևտրի պետական հատվածը, բացել բաշխման ու վաճառման կետեր, որպեսզի վերջ արվի մասնավոր հատվածի միջնորդությունը.

— ստեղծել ծովային առևտրական նավատորմ.

— ուժեղացնել ժողովրդական վերահսկողությունը՝ ապահովելու կենսական անհրաժեշտություն ներկայացնող մթերքների զննրի կայունացումը¹¹⁵;

Այլ էր պատկերը շինարարության, վերանորոգման, տրանսպորտի տուրիզմի ոլորտներում, որոնք գլխավորապես կենտրոնացված էին մասնավոր հատվածի ձեռքում: 1971—1975 թթ. 3-րդ հնգամյա պլանը նախատեսում էր կառուցել 229421 բնակարան, որից շահագործման հանձնվեց 98974 բնակարան, այսինքն՝ 43%-ը միայն¹¹⁶: Չնայած երկրում կային պետշին 16 բնկերություններ և կոոպչին 296 միություններ, սակայն շինարարական կառույցների մեծ մասը կենտրոնացված էր մասնավոր կապալառու բնկերությունների ձեռքում: Այսպես, պետական հատվածի կողմից 1970—1978 թթ. կառուցվել էին 7444 բնակելի տներ, կոոպերատիվ շինարարությունում՝ ավելի քիչ, իսկ մասնավոր հատվածի կողմից երեք տարվա ընթացքում (1976—1978)՝ 120000 բնակարան¹¹⁷, 1975 թվականին, 1970 թ. համեմատությամբ, շինարարությունը աճել էր 247,6 տոկոսով, մինչդեռ գյուղատնտեսությունը՝ 143,2, իսկ արդյունաբերությունը 135,2 տոկոսով¹¹⁸:

Բնակվարձը կազմում էր աշխատավարձի 25—50%-ը, իսկ բնակարանի սեփականությունը երազանք էր ժողովրդի մեծամասնության համար: Ուստի, Սիրիայի կոմկուսը պահանջում էր կենսագործել N 60 զեկրետը, որի համաձայն կառավարությունը պետք է արգելակեր հոգերի աճուրդային առուժախը, հողը բաժաներ պետական և կոոպերատիվ շինարարական ընկերություններին, որպեսզի բնակարանով ապահովվեին բոլոր կարիքավորները, լայնորեն ծավալեր պետական և կոոպերատիվ շինարարությունը և ավելացներ գրանց հատկացումները հիպոտեկային բանկի կողմից¹¹⁹:

Մեր կողմից քննարկվող ժամանակաշրջանում Սիրիայի կառավարությունը հատուկ ուշադրություն նվիրեց ժողովրդական կրթության զարգացման և անգրագիտության վերացման

Հարցին: Եթե 1967 թ. լուսավորության և բարձրագույն մասնագիտական կրթության միներսրությունների հատկացումները կազմում էին 155515¹²⁰, ապա 1975 թ. գրանք հասան 1312296 հազար սիր. լիրայի¹²¹: Նկատելիորեն աճեց գաղտնիների թիվը և սովորողների քանակը: Այսպես, 1966—1967 թթ. երկրում կար 4875 տարրական գաղտնի աշակերտական տեղով¹²² և 639 միջնակարգ գաղտնի՝ 201977 աշակերտով¹²³, իսկ 1974/1975 թթ. 6760¹²⁴ տարրական և միջնակարգ 1050 գաղտնի¹²⁵, 1211570¹²⁶ և 1200009 աշակերտով¹²⁷, Դա նշանակում է, որ առաջին խմբի գաղտնիների աշակերտների թիվը մեծացել էր 1,7 անգամ, իսկ երկրորդինը՝ մոտ 6 անգամ: Դաճակոսի և Հալեպի համալսարաններում 1967 թ. սովորում էր 31,644¹²⁸, իսկ 1975 թ. 61156 ուսանող¹²⁹, այսինքն, ուսանողների թիվը կրկնապատկվել էր: 1979 թ. երեք համալսարաններում արդեն սովորում էր 96040 ուսանող¹³⁰:

Անգրագիտության վերացման ուղղությամբ հատուկ նշանակություն ունեցավ 1972 թ. N 7 ղեկրեստը: 1967—1975 թթ. անգրագիտության վերացման գաստիարաններում սովորել էր 103236 մարդ¹³¹, Մինչդեռ 1979 թ. սովորող անգրագետներին թիվը կազմել էր 19496 մարդ, որոնցից 12898 ավագ տեղ էին¹³²:

Հատուկ ուշադրություն էր դարձվել նախագաղտնիական երեխաների հասարակական գաստիարանության հարցին: 1958 թ. երկրում կային 33431 երեխաներ, սակայն ոչ մի մանկապարտեզ: 1967 թ. արդեն հիմնադրվել էին 299 մանկապարտեզ՝ 29264 երեխայի համար, իսկ 1979 թ. համապատասխանաբար՝ 354 և 33429¹³³:

Ինչպես տեսնում ենք, այս բնագավառում զգալի աշխատանքներ են կատարվել: Սակայն պետք է նկատել, որ այժմ գարգացումը հիմնականում կենտրոնացված էր հանրակրթական համակարգում, իսկ պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունները զեռես չէին արժանացել համաձայնական ուշադրության, մանավանդ, որ այս հանգամանքը մեծ նշանակություն ունի ազգային կազրերի պատրաստման

անտեսության զարգացման գործում: Այս հարցում օգնության
ձևեր են մեկնում Սովետական Միությունը և մյուս սոցիալիս-
տական երկրները, որտեղ սովորում են հազարավոր սիրիացի
ուսանողներ:

Միրիայում կատարված սոցիալ-տնտեսական առաջադի-
մական վերափոխությունները խոշոր ազդեցություն ունեցան
սիրիական հասարակության զասակարգային կառուցվածքի
վրա:

Գյուղացիությունը կազմում է երկրի բնակչության 2/3
մասը: Այն երկար ժամանակ ենթարկվել է կալվածատեր-
Ֆեոդալների շահագործմանը և կեղերմանը: Գյուղացիությու-
նը միասեռ չէ և բազկացած է գլխավորապես շորս խավերից.
1. ազրառ գյուղացիներ (կիսապրուլետարներ), 2. գյուղա-
տնտեսական բանվորներ, 3. մշակներ, 4. հարուստ գյուղա-
ցիներ: 1964 թ. առաջին անգամ արարական աշխարհում հիմ-
նրվեց Սիրիայի գյուղացիական միությունը, որը 1968 թ. հոկ-
տեմբերի 13-ին, № 253 դեկրետի համաձայն, վերանվանվեց
Գյուղացիական արհմիությունների համընդհանուր ֆեդերացիա:
1979 թ. օվյալներով, նրանում ընդգրկված էր 304844 գյու-
ղացի¹³⁴, Համաձայն կանոնադրության, ֆեդերացիայի գլխա-
վոր նպատակն է հաստատել «գյուղատնտեսության սոցիա-
լիստական եղանակ»¹³⁵, նրա կենտրոնական թերթն է «Նիզալ
ալ ֆալահին»:

Բանվոր զասակարգը համեմատաբար ավելի երիտա-
սարդ է, սակայն նկատելի է նրա քաղաքական և որակական
աճը: Պետական հատվածի շնորհիվ ընդլայնվեց երկրի ծա-
մանակալից արդյունաբերությունը և, հետևապես, նրանում
զբաղված մարդկանց թիվը: Բանվորների առաջին միությունը
Սիրիայում կազմվել էր դեռ 1925 թ., իսկ 1938 թ. վերակազ-
մավորվել էր բանվորական արհմիությունների համընդհանուր
ֆեդերացիան (ԲԱՀՖ): 1978 թ. Սիրիայի ԲԱՀՖ-ը բազկացած
էր 179 արհմիությունից, որտեղ ընդգրկված էին 506249 բան-
վոր¹³⁶, Մինչև 1978 թ. լույս էր տեսնում 95 արհմիութենա-
կան թերթ, իսկ ԲԱՀՖ-ի օրգանն էր «Քիֆա՛ ալ ումմալ ալ

իշխիրաքի» («Ռանւոյրական սոցիալիստական պայքար»)։ Ֆեդերացիայի գլխավոր նպատակն էր «Լեռաշնորդի գասակարգային պայքարը, բարձրացնել արտադրողականութիւնը, պայքարել բյուրոկրատիզմի դեմ՝ որպէս սոցիալիստական վերափոխման առաջին թշնամու, մերկացնել ու մեկուսացնել հակահեղափոխական շահագործող խավերին և բարձրացնել աշխատավորական զանգվածների գասակարգային դիտակցութիւնը»¹²⁷։

Հասարակութեան միջին խավերն էին ներկայացնում արհեստավորները, մանր և միջին առևտրականները, պետական պաշտոնյաները և այլն։ Սոցիալական առաջադիմութեան ուղին բնագործ էր այս խավերի ազատագրումը բուրժուազիայի զաղափարական, քաղաքական և տնտեսական ազդեցութիւնից և կախովածութիւնից։

Միրիայի կյանքում խոշոր ուժ է և ազդեցիկ դեր է խաղում առաջադեմ մտավորականութիւնը։ Այն պայքար է մղում բյուրոկրատիզմի, բուրժուազիայի դեմ թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ասպարեզներում։

Միրիայում դեռևս գոյութիւն ունեն շահագործող հետադեմ ու պահպանողական ուժեր, որոնք, թեպէտ խիստ հարված ստացան ազգայնացումներից ու հողային բարեփոխութիւններից, սակայն շարունակում են մահու և կենաց պայքար մղել Միրիային շեղելու առաջադիմական ուղուց։

Գրանցից ամենավտանգավորը Հասարակական այն շերտերն է, որ կազմված է բուրժուազիայի, խոշոր միջնորդ առևտրականների, վաշխառուների և մաքսանենդների ներկայացուցիչներից։ Հիշատակված ուժերի լեզու և անլեզու քաղաքական ու արհեստակցական կազմակերպութիւնները, ինչպէս օրինակ, «մուսուլման եղբայրները», Միրիայի առաջադիմութեան գլխավոր խոչընդոտն են։

Միրիայի կոմկուսի V համագումարը, ինչպէս արդեն նշել ենք, գտնում էր, որ երկրում տեղի է ունեցել հեղափոխական պրոցեսի որոշ բնզհատում։ Ուստի, կոմկուսը հրատապ խընդիր համարեց վերագամնալ սոցիալական առաջադիմութեան ուղուն։

Հաշվետու զնկուցման մեջ և՛ Բազդաշը նշեց, որ դրա համար առկա են և՛ նյութական օբյեկտիվ հիմքը՝ պետական հաստատվածն ու սոցիալ-տնտեսական նվաճումները, և՛ «սուբյեկտիվ» հիմքը՝ ազգային առաջադիմական ճակատի կուսակցությունները, աշխատավորական զանգվածները, սիրիական բանակը և, վերջապես, Սիրիայի հայրենասիրական ավանդույթները¹³⁸։

Այժմ էլ Սիրիայի կոմկուսն ու զեմոկրատական-հայրենասիրական մշուս ուժերը շարունակում են պայքարը իմպերիալիստական շրջանների մեքենայությունների և Բարայելի ոտնձգությունների դեմ, ամբապնդում և խորացնում սոցիալ-տնտեսական նվաճումները՝ նախ ապահովելու Սիրիայի վերագարձը սոցիալական առաջադիմության ուղուն, և ապա բնթանալու սոցիալիստական կողմնորոշման հետագա զարգացման ուղիով, ուժեղացնում համադորձակցությունն ու բարեկամությունը ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մշուս երկրների հետ։

Կ Լ Ո Ւ Խ Ե Ե Բ Բ Ո Ր Ք

Ի Բ Ա Ք Ի Կ Ո Մ ՈՒՆ Ի Ս Տ Ա Կ Ա Ն Կ ՈՒ Ս Ա Կ Ց ՈՒ Ք Ց ՈՒ Ն Ը ԵՎ
Ա Ռ Ա Ջ Ա Դ Ի Մ Ա Կ Ա Ն - Հ Ա Յ Բ Ե Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն ՈՒ Ժ Ե Բ Ը Ե Բ Կ Ի
Դ Ե Մ Ա Կ Բ Ա Տ Ա Ց Մ Ա Ն ՈՒ Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ջ Ա Դ Ի Մ ՈՒ Ք Ց Ա Ն
Հ Ա Մ Ա Բ Մ Ղ Վ Ա Մ Պ Ա Ց Ք Ա Բ ՈՒ Մ

Հակահամալիրալիստական ուժերի գործողությունների միասնության իրականացման խնդիրը միշտ էլ եղել և մնում է Իրաքի կոմունիստական կուսակցության (ԻԿԿ) զլխավոր սկզբունքներից մեկը: Այն երկրի առաջին քաղաքական ուժն է, որը 1946 թ. առաջագրեց ազգային ուժերի միասնության ամբողջական ծրագիր:

1968 թ. հուլիսյան իրադարձություններից հետո, Իրաքում իշխանության գլուխ անցավ Բաաս կուսակցության համեմատաբար ծախս թեր: Նոր ղեկավարությունը հայտարարեց, որ դառը դաս է քաղել անցյալի պատմությունից, պատրաստ է ծախելու նրա ցավոտ ու հանցավոր էջերը՝ ի խնդիր առաջադիմական ու հայրենասիրական ուժերի համագործակցության: Այն միաժամանակ հայտարարեց, որ Բաասը հրաժարվում է «ղեկավար», «միայնակ» և «ավանդարդ» լինելու նախկին լուրտնյաներից²:

Փոփոխված իրադրությունը համապատասխան նոր տակտիկայի մշակմամբ զբաղվեց 1968 թ. հուլիսի 29-ին հրավիրված ԻԿԿ-ի Կենտկոմի արտահերթ նիստը: Հրապարակած հայտարարությունում կոմկուսը նախանշեց այն ուղին, որով պետք է ընթանար նոր ղեկավարությունը՝ ժողովրդական

զանգվածները վստահությանն արժանանալու համար 144-ը հրամայական պահանջ էր համարում.

— երկրում ղեկավարատական կարգեր հաստատել,

— խազազ ու ղեկավարատական ուղիով կարգավորել բրդական հարցը և էրարքի հանրապետության շրջանակներում ձանաչել ջուրդ ժողովրդի ինքնավարության իրավունքը,

— նապխարդյունահանության հարցում վերականգնել էրարքի իրավունքները,

— բացահայտել և ոչնչացնել քրեական օջախները, սեփական ապարատը զտել կասկածելի ու վատորակ տարրերից.

— ուժեղացնել պայքարը իմպերիալիզմի, սիոնիզմի և արարական հետադիմության դեմ,

— ամրապնդել համազորժակցությունը ՍՍՀՄ-ի և մյուս սոցիալիստական երկրների հետ:

Սեպտեմբերին Լոմկուսը հրապարակեց «Ազգային ուժերի համազորժակցության միասնական ճակատի» խարտիայի համադիրժը, մի փաստաթուղթ, որը ներկայացվեց լայն հասանալիություններ և շերտ ընդունելությունն զտավ ազգային աբսոլյուտիստական ու հայրենասիրական զանազան շոկատներով կողմից:

Սակայն Բասս կուսակցությունը, իր մանրրորժունական վստահարգային կառուցվածքի պատճառով, վարում էր հակասական քաղաքականություն: Այն մի կողմից իրականացնում էր հակաիմպերիալիստական, հակաֆեոդալական կուրսը և մերձենում էր սոցիալիստական ու հեղափոխական միջազգային շարժմանը, իսկ մյուս կողմից երկրի ներսում վարում էր հակաղեկավարատական ու հակակոմունիստական քաղաքականություն:

1969 թ. հունվարի վերջերին ԻԿԿ-ն և Արարական սոցիալիստական շարժումը հանգև հկան համառոտ հաստատությունների մենիշխանությունները, այն դեպքում, երբ նա փոքրամասնություն էր կազմում և նրա մեջ գերակշռում էր մեծահասակ հայրենասիրական ուժերին ամենատարբերակ հակասությունից: «Նման արարքը, — ասված էր հայրական ազատությունից: «Նման արարքը, — ասված էր հայրական ազատության մեջ, — կասկածի տակ է գնում Բասսի հոչատարարությունը»:

կած սկզբունքները միասնական ճակատի ստեղծման վերաբերյալ»⁵։ Հայտարարությունը միաժամանակ ժողովրդին կոչեր անում պայքարել հանուն ղեմոկրատական ազատությունների նվաճման, միասնական ճակատի ստեղծման և կոալիցիոն կառավարության կազմավորման։

Փետրվարի վերջերին Իկկ օրգան «Թարիկ աշ-Շաաբը» կառավարող Բաաս կուսակցությանը նախազգուշացնում էր առաջադիմական ուժերի նկատմամբ կիրառվող պատակոշական քաղաքականության ծանր հետևանքներին։ Թերթը վերջստին պահանջում էր իրականացնել ժողովրդական զանգվածների կամքը՝ ստեղծել առաջադիմական ազգային ճակատ և կազմել կոալիցիոն հայրենասիրական կառավարություն⁶։

Իրաքի կոմկուսի և Բաասի ղեկավարության միջև երկաթ բանակցություններից հետո, 1969 թ. հուլիսի 30-ին Իկկ կառավարությանը ներկայացրեց մի հուշագիր, որում հայտնեց շոշափված հարցերի անարդյունավետությունը։ Հուշագրում կային մի շարք հարցադրումներ. Բաասը ինչպիսի՞ կարծիք ունի առաջադիմական ճակատի մասին, ո՞ր ուժերն ու կուսակցություններն են կազմելու ճակատը, Բաասն, արդյո՞ք, հավատում է համահավասարության սկզբունքին, և վերջապես, Բաասը հրաժարվում է «ավանգարդ կուսակցության» դրույթից, թե՞ ոչ։ Սակայն Բաասը երկար ժամանակ լուռ մնաց։ Շարունակում էր շուրջ մնալ քրդական հարցը։ 1969 թ. աշնանը սուր բնույթ կրեցին քուրդ ապստամբների և իրաքյան բանակի զինված ընդհարումները Քրդստանում։ Մինչև տարվա վերջ իրաքյան կառավարությանը չհաջողվեց քրդական հարցը կարգավորել զենքի ուժով, ուստի սկսեց միջոցներ ձեռնարկել խաղաղ կարգավորման ուղղությամբ։ Սահմանափակվեցին պատերազմական գործողությունները, ղեկավարվեցին հանձնաժողով կազմվեց՝ մշակելու քրդական հարցի ղեմոկրատական կարգավորման ամբողջական ծրագիր։

1970 թ. մարտի 11-ին Իրաքի հանրապետության պրեզիդենտ Ահմեդ Հասան Բաբրը հայտարարեց իրաքյան կառավարության և քրդական հեղափոխության ղեկավարության համաձայնության մասին քրդական հարցի խաղաղ ու ղե-

մոկրատական կարգավորման վերաբերյալ: Գու Իրաքի արաբ
և քուրդ ժողովուրդների առաջադիմական ու հայրենասիրա-
կան ուժերի անդուլ պայքարի արգասիքն էր: Արձագանքելով
հույժ կարևոր այդ իրադարձությունը, «այ Ախրար»-ը գրում էր.
«Համաձայնագրի կենսագործումը պահանջում է հեղափոխա-
կան ու ղեմնկրատական ուժերի կուռ միասնությունը և սերտ
համագործակցություն համաշխարհային հեղափոխական
շարժման ու նրա ավանդարդ Սովետական Միության հետ»:

Մարտի 11-ի ղեկավարացիայի կարևորագույն կետերից
էին. իրաքյան հանրապետության շրջանակներում ճանաչել
և քուրդ ժողովրդի ինքնավարության իրավունքը, որը պետք է
կենսագործվեր չորս տարվա ընթացքում, քուրդ ժողովրդին
իրավունք վերապահել մասնակցելու երկրի օրենսգրքական
մարմիններին, քրդական շրջանում հողային բարեփոխու-
թյուններ անցկացնել, գյուղացիներին համապատասխան հո-
րակառուցելու տալ և քուրդ ավատատերերին ապակուլակացնել,
զակատրոնել ժամանակավոր սահմանադրության որոշ հոդված-
ները՝ ապահովելու արաբ և քուրդ ժողովուրդների խաղաղ
գոյակցությունը, ապահովել քուրդ ժողովրդի համեմատական
ներկայացուցչությունը գործադիր իշխանության մարմիննե-
րում, խոշոր կապիտալ ներգրումներով հողալ քրդական շըր-
րում, իստոր կապիտալ ներգրումներով հողալ քրդացույց և
շաններին արդյունաբերական ու կուլտուրական զարգացումը և
այլն:

Իկկ-ն ջերմորեն պաշտպանեց այդ ղեկավարացիան, այն
համարելով կարևոր հիմք քրդական հարցի խաղաղ կարգա-
վորման համար: Մարտի 11-ին Բաքրին հզամ շնորհավորա-
վորի մեջ Իկկ զլխավոր բարտուղար Ազիզ Մուհամեդն ասում
էր. «Մույն համաձայնությունը հեղափոխական համարձակ
քաջ լինելուց բացի, առաջադիմական ուժերի և կուսակցու-
թյունների միասնական ճակատի ստեղծման կարևորագույն
հիմքն է՝ ի շահ ծաղկուն, առաջավոր ու ղեմնկրատական
Իրաքին»:

Իր հիմնադրման առաջին իսկ օրվանից Իկկ-ն անդուլ
պայքար է մղել մի կողմից արաբ ղեկավարների շովինիս-
տական քաղաքականության, մյուս կողմից՝ քրդական ֆեոդա-

լահան ավազանու և բուրժուազիայի ազգային նեղամտության և անջատողական տրամադրությունների դեմ: ԻԿԿ-ն խոշոր ավանդ ունի արար և բուրդ ժողովուրդների շրջանում ինտեր-նացիոնալիստական զազափարախոսության տարածման դո-ժում:

Ազգայրասպան պատերազմի ավարտը լայն հեռանկարներ բացեց Իրաքի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգաց-ման համար: Փուրղ ժողովրդի դեմ ուղղված զինված դործ-դուլությունները հակասում էին թե՛ արաբների և թե՛ բրդերի շահերին: Գրանք 1961 թ. մինչև 1970 թ. պետական բյուջեից խլել էին ավելի քան 600 միլիոն իրաքյան դինար: Համաձայ-նությունը մեծ դեր խաղաց Իրաքի հակաիմպերիալիստական ու հակասիոնիստական պաշտարի ուժեղացման ուղղությամբ:

Համաձայնության անխափան կենսազորման համար ԻԿԿ-ն պահանջում էր լայն ղեմնորատական ազատություններ տալ ժողովրդական ղանդվածներին: «Մեր կուսակցությունը հավատացած է, որ քրդական հարցի լուծումը օրգանապես կապված է ղեմնորատիայի հարցի հետ: Ուստի, մենք առաջ քաշեցինք «Իրաքին՝ ղեմնորատիա, Քրդստանին՝ ինքնա-վարություն» կարգախոսը»:

Հարկ ենք համարում նշել, որ 1967 թ. սկսած ԻԿԿ-ն երկ-րում միակ քաղաքական ուժն էր, որ բարձրացրեց քրդական հարցի խաղաղ ու ղեմնորատական կարգավորման լողունը: Ազգային ճնշման ամեն մի գրսևորում հանդիպում էր կոմ-կուսի վճռական հակահարվածին: Կյանքի բովով անցած այս ճիշտ կողմնորոշումը հանդիպեց թե՛ Բասսի և թե՛ Քրդստանի ղեմնորատական կուսակցության (ՔԴԿ) քննադատությունը: Քրդական հեղափոխության նկատմամբ իր ունեցած բացա-սական վերաբերմունքից ելնելով, Բասսը այն համարեց սխալ դիրքավորում: Իսկ ՔԴԿ-ն այնքան ջերմորեն չէր խրախու-սում հարցի խաղաղ կարգավորումը: Գրա մասին են վկայում Քրդստանի և Իրաքի այլ շրջաններում կոմկուսի կազմակեր-պած համախոսականները, որոնք, սակայն, հաճախակի հան-դիպել են քրդական հեղափոխության ղեկավարության դի-

մադրութեանը, մանավանդ այն շրջաններում, որոնք գտնվում էին նրանց տնօրինութեան ներքո:

Կոմունիստները շատ բան արեցին, որպեսզի ճնշված ազգի՝ քրդերի աշխատավոր զանգվածները տողորվեն վստահութեամբ դեպի իրաքյան պրոլետարիատը, ի դեմս կոմկուսի տեսնելով ազգային ճնշման բոլոր ձևերի դեմ պայքարող կայուն և աննկուն մարտիկի: Դրա հետ մեկտեղ կոմկուսն անհաշտորեն մարտնչում էր արար մանրբուրժուական նացիոնալիստների դեմ, որոնք ազգային դժտություն էին սերմանում բանվորների միջավայրում: Կոմկուսը անդու պրոպագանդում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքը:

Զարմանալին այն է, սակայն, որ մինչև 1970 թ. մարտի 11-ի ղեկավարացիան, կառավարող Բաասը, որպես միասնական ճակատի ստեղծման նախապայման, կոմունիստներից և պահանջում էր հրաժարվել քրդական հեղափոխությունից և պատապարտել այն: Ի հակակշիռ դրան, կոմկուսն իրաք-ական կառավարությունը և ՔԴԿ-ին կոչ էր անում բանակցության ներքին վարել քրդական հարցի խաղաղ կարգավորման նպատակով:

Իսկ երբ Բաասն ու ՔԴԿ-ն հասան փոխհամաձայնության, երկրով մեկ սկսվեց հակակոմունիստական շարժում, պրոպագանդիստական մեթոդներով փողհարում էր Բաասի և ՔԴԿ-ի պաշտօնակազմի մեթոդները, անտեսելով մնացած բոլոր առաջադիմաառաջատար գերը, անտեսելով մնացած բոլոր զորքերը: Պաշտոնական ուժերի և կուսակցությունների գոյությունը: Պաշտոնական մամուլն իր էջերը հյուրընկալորեն տրամադրում էր կոմունիստների հասցեին ուղղված ամեն տեսակ բանասարկոմունիստների հասցեին ուղղված շատ շանթ թափեցին իրենց դիրքությունների: Կոմունիստները շատ շանթ թափեցին ժողովրդական թի ու պայքարի վերաբերյալ ճշմարտությունը ժողովրդական զանգվածներին հասցենելու համար: Այսպես, 1970 թ. մարտի 23-ին ԻԿԿ-ի հրապարակած հայտարարությունը նախազգուշացնում էր Բաաս կուսակցության դիտակից տարրերին՝ «զգոն լինել իմպերիալիզմի և հետադիմական ուժերի հյուսած ղեկավարից, որոնք սնուցում են հակակոմունիզմի քաղաքակառուցությունը, որն էլ, ի վերջո, խարխուլում է ժողովրդի միասնությունը»¹⁰:

Մարտի 11-ի ղեկարացրած քաղաքիկ առիթ էր ազգային առաջադիմական ճակատի ստեղծման համար:

Բաաս կուսակցության ազգային X համագումարը, որը տեղի ունեցավ 1970 թ. մարտի 1—10-ը, աննշան տեղ հասկացրեց ճակատի հարցին, իսկ որոշումներում մեծ տեղ տրվեց «ափանցարգ կուսակցության» դրույթին, մի դրույթի, որը մերժել էր Բաասի IX համագումարը, երբ զեռ շէր ստանձնել իշխանությունն Իրաքում (1967 թ.): Փաստորեն Բաասը պաշտոնապես մերժեց ազգային ճակատի ստեղծումը¹¹:

1970 թ. հուլիսի 10-ին Բաաս կուսակցությունը, վերջապես, հրապարակեց ազգային ճակատի ստեղծման վերաբերյալ իր դժվարահասանելի նախապայմանները: Նախ և առաջ նա երկրի բոլոր քաղաքական ուժերից պահանջում էր իրեն ճանաչել որպես «հեղափոխական սոցիալ-դեմոկրատական ափանցարգային կուսակցություն», որով և փաստորեն մերժում էր համահավասարության սկզբունքը¹²: Գրանցով իսկ Բաասը անտեսում էր միասնական ճակատի մասին Իրաքի առաջադիմական կուսակցությունների առաջ քաշած ծրագրերը:

Ի պատասխան այդ նախապայմանների, Իկկ օրգան «Քարիկ աշ Ծաար»-ի վերլուծական հոդվածը քաղաքացյալում էր Բաասի քաղաքական զիրբավորումը և նախագծում ճակատի ստեղծման ուղիները: Բաասը փորձում էր սովեր գցել անգամ ճակատի գաղափարի վրա, որը, թերթի կարծիքով, պետք է «հուժկու հարված հասցնեի իմպերիալիզմի շահերին Իրաքում, առաջ տաներ իրաքյան ժողովրդի մղած պայքարը հանուն սոցիալական առաջադիմության»¹³:

Սակայն Բաասը չէր կարող ամբողջովին վերադառնալ նախկին կարգերին: Իրաքն արդեն այն չէր, ինչ մինչև 1969 թվականը: Բոլոր քաղաքական կուսակցություններն անցել էին 1958 թ. հեղափոխության բովով և նրանցից յուրաքանչյուրն իր համար դասեր էր քաղել: Բաաս կուսակցությունը օրյկկատիվորեն շահագրգռված էր հակաիմպերիալիստական և հակաֆեոդալական հեղափոխության հիմնական խնդիրների իրականացմամբ: Հետևապես, զեռ սպառված չէր նրա

առաջագիծ գերը, համազգային խնդիրների լուծմանը մասնակցելու նրա ընդունակությունը: Ուստի, Բասս կուսակցությունն սկսեց վարել նոր քաղաքականություն, որի միջոցով փորձում էր ժողովրդական զանգվածներին ենթարկել իր գազափարական-քաղաքական ազդեցությունը:

1970 թ. հուլիսի 17-ին հրատարակվեց նոր, ժամանակավոր սահմանադրության տեքստը, որի համաձայն Իրաքը հռչակվեց «Ժողովրդա-դեմոկրատական հանրապետություն», որի ղեկավոր նպատակն էր «ստեղծել արաբական հասարակական պետություն և կառուցել սոցիալիստական հասարակություն»: Սահմանադրությունն ազդարարում էր խոսքի, մամուլի, խղճի, ժողովների, կուսակցությունների, արհմիությունների և այլ կազմակերպությունների ազատությունը:

Ինչ վերաբերում է սոցիալիստական շինարարության հարցին, ապա հայտնի է, որ Բասս կուսակցությունը առաջ է հաշում, աչպես կոչված, «արաբական սոցիալիզմի» գաղափարը, որը, որպես կանոն, սոցիալիզմի վերաբերյալ մանր-բուրժուական այն պատրանքների տարատեսակն է, որը փաստորեն բացառում է դասակարգային պայքարը: Այն, մերժելով սորելիտարիատի զիկտատուրայի գաղափարը, ձգտում է մանր-բուրժուազիայի զիկտատուրայի, որի ժամանակ կառավարման գործին մյուս դասակարգների ու հասարակական խավերի մասնակցությունը կրում է ձեռկան բնույթ:

Իրաքի բանվորների և գյուղացիների հեղափոխական պայքարը հաջող զեկավարելու համար վճռական նշանակություն ունենին կոմունիստական կուսակցության ամբապնդումը և ճիշտ գծի մշակումը:

Այդ առումով մեծ երևույթ էր իկյ II համագումարը, որի շխատանքներն սկսվեցին 1970 թ. սեպտեմբերին և տևեցին 8 օր: Համագումարի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը. կուսակցության ծրագրի նախագծի քննարկում, փոփոցելու կանոնադրության մեջ, Կենտկոմի հաշվետվությունների քննարկում և Կենտկոմի նոր կազմի ընտրություն:

Համագումարում իկյ Կենտկոմի հաշվետու զեկուցմամբ

Հանդես եկավ Ա. Մուհամեդը, որը խոսեց միջազգային իրա-
դրության բնորոշ գծերի, Համաշխարհային կոմունիստական
շարժման, կուսակցության գործունեության մասին 1967 թ-
անդի ունեցած III կոնֆերանսից հետո բնկած ժամանակա-
շրջանում, արաբական ազգային-ազատագրական շարժման
առանձնահատկությունների, մերձավորարևելյան պրոբլեմի
կարգավորման և ներքին դրության մասին:

Համագումարը միահամուռ հավանություն տվեց կենտ-
կոմի քաղաքական դժին և պրակտիկ գործունեությանը, նշեց
կուսակցության խնդիրները մոտակա տարիների համար:

Այնուհետև համագումարը բնութային առավ կուսակ-
ցության ծրագրի հարցը: Գեռես III կոնֆերանսից հետո կենտ-
կոմը նախապատրաստել և կուսակցական կազմերի բննարկ-
մանն էր ներկայացրել ծրագրի նախագիծն ու փոփոխված
կանոնադրությունը:

Ծրագիրը բաղկացած էր առաջարանից և 15. գլուխներից:
Այն հանրագումարի էր բերում Իրաքի ազատագրական-հե-
զագոխական շարժման անցած փուլը, կոմկուսի գործու-
նեությունը սկզբնավորումից մինչև հաշվետու ժամանակա-
շրջանը: Մաքսիմում ծրագրում խոսվում էր կուսակցության
վերջնական նպատակի՝ սոցիալիզմի և կոմունիզմի կառուց-
ման մասին: Զարգացման ներկա փուլում նախատեսվում էր
ազգային-գեմոկրատական հեզագոխության հաշոզ ավար-
տումն ու անհապազ վերաճումը սոցիալիստական հեզագո-
խության: Այս բնագավառում գլխավոր հարցերից մեկը ազ-
գային-առաջադիմական հայրենասիրական ճակատի ստեղծ-
ման հարցն էր: Կոմունիստները գտնում էին, որ ճակատը
պետք է ստեղծվեր յուրաքանչյուր կուսակցության գաղափա-
րաքաղաքական լիակատար անկախության հիման վրա: Ինչ
վերաբերում է առաջատար կուսակցության հարցին, ապա
կոմկուսը գտնում էր, որ ժողովրդական զանգվածները լավա-
զույն իրավարարն են որոշելու տվյալ կուսակցության ճիշտ
քաղաքականության և աշխատավորության կենսական շա-
հերին նվիրված լինելը: Ճակատի անդամների միջկուսակ-
ցական տարաձայնությունները պետք է կարգավորել քանակ-

ցությունների միջոցով: Կոմկուսը ճակատի անզամներին կոչ էր անում կազմել ազգային կոալիցիոն կառավարություն, որը կլինի ժողովրդական զանգվածների ձգտումների և նպատակների արտահայտիչը: Համագումարը երկրի բոլոր առաջադեմական ու հայրենասիրական ուժերին կոչ արեց հրավիրել ազգային կոնգրես՝ քննարկելու ճակատի ստեղծման հարցը: Կոմկուսը միաժամանակ հավաստիացնում էր, որ «Ազգային համագործակցության քաղաքականությունը տակտիկական բան է, այլ օրյեկտիվ անհրաժեշտություն՝ համախմբելու առաջադեմական բոլոր ուժերը և կենսագործելու ազգային-զեմոկրատական հեղափոխության խնդիրները»¹⁵:

Երազիրը պարունակում էր քաղաքական ղեմակրատիայի ծավալումն բնութագրությունը, բացահայտում բուրժուական ղեմակրատիայի դասակարգային էությունը և կեղծությունը: Այս բնագավառում կոմկուսը հրատապ խնդիր էր համարում.

— իսպառ ոչնչացնել արտաոտոց և հետադեմ բոլոր օրենքները, որոնք մնացել էին նախորդ ժամանակաշրջանից. — թույլատրել ազգային-առաջադեմական կուսակցությունների, արհմիությունների և այլ հասարակական կազմակերպությունների լիցալ գործունեությունը,

— Ազգային հիմնադիր ժողով (պառլամենտ), օրենսդրական մարմիններ, քաղաքային և գյուղական տեղական խորհուրդներ ընտրելու նպատակով սահմանել ղեմակրատական հուրդներ ընտրելու նպատակով քաղաքային և գյուղական հուրդների լիակատար իրավունքները՝ ընդհանուր, հավասար վոդների լիակատար իրավունքները՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրություններ, փակ քվեարկություն.

— մշակել երկրի մշտական սահմանադրություն. — իրաքյան քրդական շրջանի համար ընտրել օրենսդրական խորհուրդ և նրան վերապահել ինքնավար իշխանության բոլոր իրավունքները¹⁵:

Տեսնահական բնագավառում ծրագիրը զխավորն ու վճռականը համարում էր երկրի ազգային տնտեսության անկախության մարտապնդումը, նավթային և բնդերքի մյուս հարստությանների ազատագրումը իմպերիալիստական մոնոպոլիա-

ների գերիշխանությունից, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, շինարարություն, տրանսպորտի հետագա զարգացումը, ժողովրդական տնտեսության ճիշտ ղեկավարումը և պլանավորումը: (Այս և այլ կարևոր հարցերի վերաբերյալ կխոսվի աշխատության համապատասխան տեղում):

Մրազբում կարևոր տեղ էին գրավում արաբական միասնությունը, պաղեստինյան հարցը, քրդական պրոբլեմը, բանակի հեղափոխական դեմոկրատական վերակառուցման, կանանց ազատագրման, երիտասարդության և ուսանողության վիճակի և այլ հարցեր:

Իրաքի կոմունիստները աշխատավորական ղանդվածներին տվեցին հեղափոխական պայքարի իրական հեռանկարներ և հաստատուն կերպով պաշտպանեցին նրանց առօրյա կարիքներն ու շահերը: Իրաքի բանվոր դասակարգը ի դեմս կոմունիստների տեսնում է հավատարիմ բարեկամների և հուսալի ղեկավարների:

Կոմկուսի ազդեցության մեծացման երկչուզից դրդված կառավարող բաասականները երկրով մեկ սկսեցին հակակոմունիստական լայն շարժում: 1971 թ. հունվարի կեսերին Իրաքի, Սիրիայի, Հորդանանի և Լիբանանի կոմունիստական կուսակցությունների խորհրդածողովը խստորեն դատապարտեց Իրաքում կոմունիստների և այլ առաջադիմական ուժերի նկատմամբ կիրառվող բանությունները: «Հակակոմունիզմի դրսևորումներն Իրաքում միշտ էլ հասցրել են կառավարող շրջանների սնանկությունն ու մեկուսացմանը թե՛ արաբական աշխարհում և թե՛ միջազգային արենայում»¹⁶, — կարդում ենք հայտարարությունում:

Միաժամանակ, հայտարարությունը Իրաքի ղեկավարներին կոչ էր անում վերջ տալ հակադեմոկրատական միջոցառումներին, կենսագործել մարտի 11-ի ղեկավարացիան, իմպերիալիզմի, սիոնիզմի և հետադիմության մեքենայությունները դիմադրավելու համար ստեղծել ազգային առաջադիմական ճակատ:

Սակայն իրաքյան իշխանությունները շարունակեցին

ձերբակալումները և իրենց պամայականությունները կոմունիստներին և այլ ղեմոկրատական ուժերի նկատմամբ: Այդ առթիվ արարական առաջադիմական կուսակցությունների և հայրենասիրական ուժերի ներկայացուցիչները ուղերձ հղեցին Իրաքի պրեզիդենտ Բաքրին, որտեղ ասված էր. «Իրաքի հայրենասերների նկատմամբ կիրառվող անմարդկային վերաբերմունքը ոչ միայն ոսնձգություն է մարդու ամենատարրական իրավունքներին, այլև վերահաս վտանգ է թե՛ Իրաքի և թե՛ ողջ արաբ ազգի համար»¹⁷:

Ամենախիստ ճնշամիջոցների պայմաններում Իրաքի կոմունիստներն ու ղեմոկրատները անձնազոհաբար պայքարում էին հանուն երկրի ղեմոկրատականացման: Եվ շնայած նրանց էին ղոժվարություններին ու անհաջողություններին, նրանք են ի դժվարություններին և անհաջողություններին, Հասարակվերջո որոշում Իրաքի զարգացման մայրուղին: Հասարակության զարգացման արմատական պահանջները, բանվորների և գյուղացիների կենսական շահերը հրամայաբար պահանջում էին ամենից առաջ վերափոխել կառավարող Բասս հուսակցության քաղաքականությունը: Աճած հեղափոխական շարժման ազդեցության տակ, Բասսի և ՔԴԿ-ի փոխհարաբերությունների լարվածության պայմաններում, բասսական կառավարությունը ստիպված եղավ զիջել:

1971 թ. նոյեմբերի 15-ին Իրաքի պրեզիդենտ Բաքրը հրապարակեց «Ազգային գործունեության խարտիայի» նախագիծը, որտեղ սահմանված էին Իրաքի զարգացման տվյալ փուլի բնույթը և հիմնական խնդիրները: Նախագիծը երկրի քաղաքական կարգը համարում էր «անցման փուլ ժողովրդաքաղաքական կարգը համարում էր «անցման փուլ սոցիալիստական ղեմոկրատական կարգից դեպի արաբական սոցիալիստական ղեմոկրատական միասնական հասարակարգ»: Քաղաքական կարգը, ըստ նախագծի, ապահովում էր բոլոր տեսակի ղեմոկրատական ազատությունները, այդ թվում՝ քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, մամուլի, խզճի և այլն: Նախագիծը հակափմպերիստական, հակահայրախառնական և հակափաստատիրական ուղղվածությունը: Այն կոչ էր անում ուժե-

զացնել պայքարը իմպերիալիզմի և սիոնիզմի դեմ, ամբա-
պընդել համադրման կցությունը սոցիալիստական երկրների և
առաջին հերթին ՄՍՀՄ-ի հետ: Այն նախատեսում էր սոցիալ-
տնտեսական վերափոխությունների առաջադիմական կուրս
և սկզբունքորեն մերժում էր դարգացման կապիտալիստական
ուղին: Նախագիծը վերստին հավաստում էր քրդական հարցի
խաղաղ ու ղեմնկրատական կարգավորման անհրաժեշտու-
թյունը և պահանջում ըստ ամենայնի կենսագործել մարտի
11-ի ղեկավարացիան: Նախագիծում խոսվում էր ազգային ճա-
կատի ստեղծման օրյեկտիվ անհրաժեշտություն մասին. «Ազ-
գային առաջադիմական շարժման տարրեր ջոկատների
միասնությունը պետք է խարսխել իմպերիալիզմի, սիոնիզմի
և հետադիմության դեմ մղվող պայքարի ուժեղացման հիմ-
քերի վրա, ապահովելով ղեմնկրատական ազատությունների
ժողովրդական զանգվածների քաղաքական, հասարակական
արհմիութենական և կուլտուրական հիմնարկների համար»¹⁸:

Նախագիծը զրվեց համաժողովրդական քննարկման:
Իկյ-ն և այլ քաղաքական կուսակցություններ հայտնեցին
իրենց սկզբունքային համաձայնությունը խարտիայի նա-
խագծին: Կոմկուսի 1971 թ. նոյեմբերի 27-ին հրապարակած
հայտարարությունը նախագիծն արժեքավորելուց հետո, ընդ-
գծում էր միասնական ճակատի ստեղծման համար նրա կա-
րևորությունը որպես ծրագրային փաստաթուղթ: Հայտարա-
րությունը միաժամանակ վերլուծում էր նախագծի դրական
կողմերը և բացահայտում նրա բացերն ու թերությունները:
Խարտիայի հռչակած սկզբունքների իրականացման համար
կոմկուսը հրամայական խնդիր է համարում.

1. Վերջ տալ բոլոր տեսակի ճնշամիջոցներին՝ ժողո-
վրդական զանգվածների և առաջին հերթին կոմունիստ-
ների ու ղեմնկրատական ուժերի նկատմամբ:

2. Երաշխիքներ տալ քաղաքական ու ղեմնկրատական
ազատությունների գծով, շեշտը դնելով քաղաքական կուսակ-
ցությունների ազատության հարցի վրա, կարճ ժամանակա-
միջոցում վերականգնել սահմանադրական հիմնարկները,

Հային հաջողութիւններից, օրչեկտիւզորեն հակված են ընդունելու այնպիսի որոշումներ, որոնք դուրս են գալիս մանր բուրժուազիայի շրջանակներից: Նրանք, ճիշտ է, բացահայտարեն մերժում են կառավարման հին ձևերը, սակայն, միաժամանակ, և նրբամիտ նույն շափող, ժխտում են նաև հեղափոխական ձևերը: Նրանք, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, «անխուսափելիորեն տատանվում են բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, բուրժուական ղեմնորատիայի ու սովետական կարգի միջև, ռեֆորմիզմի ու հեղափոխականութիւնի միջև, բանվորասիրութեան ու պրոլետարիատից վախենալու միջև»²¹:

Լենինյան այս ելակետը հիմք ընդունելով, կարող ենք ասել, որ սա է այն գլխավոր պատճառը, որը հանդիպում է մի կողմից հակահոմոնիստական ու հակաղեմնորատական տրամադրութիւնների տարածմանն Իրաքում, իսկ մյուս կողմից՝ առաջադիմական սոցիալ-անտեսական վերափոխութիւնների կիրառմանը և հակաիմպերիալիստական կուրսի շարունակմանը, որն ուղեկցվում էր սովետա-իրաքյան հարաբերութիւնների բարելավմամբ: Դա իր արտացոլումը գտավ 1972 թ. ապրիլի 9-ին Բաղդադում սովետա-իրաքյան բարեկամութեան և համագործակցութեան պայմանագրի կնքման մեջ: Ըստ արժանիւնի գնահատելով պայմանագրի նշանակութիւնը, Իրաքի պրեզիդենտ Բաքրը ասում է. «Մենք բարձր ենք գնահատում մեր բարեկամ Սովետական Միութեան ցուցաբերած կարևոր օժանդակութիւնը Իրաքին և մշուշ արարական երկրներին: Մենք այն համարում ենք վճռական գործոն մեր պաշտպանունակութեան ամրապնդման, սոցիալ-անտեսական առաջադիմութեան և խորաչեղական ազրեսիայի գլխավորումն համար»²²:

Պայմանագիրը որակական նոր աստիճանի վրա բարձրացրեց սովետա-իրաքյան հարաբերութիւնները, իմպերիալիզմի, սիոնիզմի և ռեակցիայի ղեմ մղվող պայքարը: Այն ակնառու ուղենիշ դարձավ երկու երկրների փոխհարաբերութիւնների պատմութեան մեջ, որոնք խարսխվում են հավասարութեան:

սովերենության և միմյանց ներքին գործերին շմիշաման-
լու սկզբունքների վրա:

Ինչպես լիովին պաշտպանեց ՍՍՀՄ-ի հետ հարաբերու-
թյունները բարելավելու Բաաս կուսակցության կուրսը: Ինչպիսի
1972 թ. ապրիլի 15-ին հրապարակած հայտարարությունը,
ազդեցականալով սովետա-իրաքյան պայմանագրին, այն
բնութագրում էր որպես «իրաքյան ժողովրդի հայրենասիրա-
կան և առաջադիմական ուժերի անխոնջ պայքարի արգա-
սիր»:

Իրաքյան կառավարության ձեռնարկած առաջադիմական
միջոցառումները, ինչպիսիք էին՝ սոցիալ-տնտեսական վե-
րափոխությունները, «Ազգային գործունեության խարտիայի»
նախագծի հրապարակումը, սոցիալիստական երկրների և նը-
րանց ավանգարդ ՍՍՀՄ-ի հետ համագործակցության ամրա-
պնդումը և հակամիտքերիալիստական պայքարի նշանակալից
ուժեղացումը երկիրը դուրս բերեցին այն մեկուսացումից, որին
մասնաված է նա 1968 թ. հուլիսյան շարժումից առաջ:

Հեղափոխական սրբոցեսի կարևոր հարցերի նկատմամբ
կոմկուսի և Բաասի ղեկավարի բնագծանրություն հետևանքով
1972 թ. մայիսին վերակազմավորվեց իրաքյան կառավա-
րությունը, որի կազմի մեջ, բացի կառավարող Բաաս կու-
սակցությունից, մտան Ինչպիսի և Քրդ-ի ներկայացուցիչները:
Սրանք այն զրահան քայլերն էին, որոնք միշտ էլ հանդիպել
էին Իրաքի առաջադիմական ուժերի աշակցությունն ու պաշտ-
պանությանը: Սակայն գոյություն ունեին նաև բացասական
երևույթներ, որոնք խուշնդատում էին ազգային առաջադի-
մական ճակատի ստեղծմանը: «Ազգային ղեկավարի մեկ տարի
խարտիայի» նախագծի հրապարակվելուց ուղիղ մեկ տարի
անց երկրում շարունակվում էին լարված հարաբերություն-
ները կուսակցությունների միջև, առաջադիմական ու բոլոր
ուժերն էին մասնակցում կառավարման գործին, ինչպես նա-
խատեսում էր նախագիծը: Ավելին՝ շրջադարձին բանություն-
ները մյուս կուսակցությունների, մասնավորապես կոմու-
նիստների նկատմամբ: Քրդական հարցը մտավ փակուղի:

Այդ պատճառով, 1972 թ. վերջերին սուր Հակասություններ երևան եկան Բաասի և ՔԴԿ-ի ղեկավարության միջև:

Կոմկուսը ճիշդ ու ջանք չիսնայեց Բաասի և ՔԴԿ-ի միջև տարաձայնությունների վերացման ուղղությամբ, սակայն երկու կողմերն էլ փորձեցին նսեմացնել Երա բարերար միջնորդությունը: Մինչդեռ պատմական ճշմարտությունը պարտավորեցնում է պսել, որ ԻկԿ-ն, մարքս-լենինյան գաղափարախոսությամբ ղինված, միշտ ճիշտ զիրքերից է լուսարանել և Հետևողական ու սկզբունքային վերաբերմունք ունեցել ՔԲԲ-դական ազգային Հարցում: Ուստի կոմկուսը մեկուսացնելու նման փորձը, ինչպես գրում էր «ալ Ախրաբը», «երբեք չի նպաստում քրդական Հարցի ճիշտ կարգավորմանը, մանավանդ, որ կոմկուսը լայն մասսայական կազմակերպություն ունի բուն Քրդստանում»²⁴:

Այսպիսով, 1972 թ. Բասս կուսակցությունը, ԻկԿ-ն և ՔԴԿ-ն ի վիճակի չեղան վերացնել էական տարաձայնությունները, որոնց պատճառով շհասան Էան «Ազգային գործունեության խարտիայի» վերջնական տեքստի մշակմանը և ազգային առաջադիմական ճակատ կազմելուն:

«Ազգային գործունեության խարտիայի» քննարկումից մեկուկես տարի անց Բաասի ղեկավարությունը Հաշվի առավ ԻկԿ-ի արած զիտողություններն և ուղղումները, մանավանդ այն Հարցերի շուրջ, որոնք վերաբերում էին քաղաքական կարգի, քրդական Հարցի կարգավորման, բանակի և ղինված ուժերի, Համաարարական և միջազգային քաղաքականության, երկրի հետագա սոցիալ-տնտեսական զարգացման խընդիրներին: Նման փոխհամաձայնությունը լայն Հնարավորություն ընձեռեց ազգային առաջադիմական ճակատի ստեղծման համար:

Հարց է ծագում, որոնք էին այն զլխավոր նախադրյալները, որ հող նախապատրաստեցին ճակատի ստեղծմանը՝ նախ և առաջ պետք է նշել ԻկԿ-ի և Բաասի նպատակներին համընդհանրությունը իմպերիալիզմի, սիոնիզմի և արաբական հետադիմության դեմ մղվող պայքարում: Եվ ապա այն, որ երկու կուսակցություններն էլ վճռել էին երկիրը տանել

զարգացման ոչ կապիտալիստական ուղիով, ուստի և կիրառել սոցիալ-անաևսական և քաղաքական առաջադիմական վերափոխությունների մշակված ամբողջական կուրս։ Այնուհետև՝ նրանք կողմնակից էին զարգացնելու և ամրապնդելու Իրաքի հարաբերությունները սոցիալիստական համագործակցության երկրներին և առաջին հերթին ՍՍՀՄ-ի հետ։ Այս հարցում բավականին զործուն օւղղեցություն ունեցավ սոցիալիստական բարեկամության և համագործակցության պայմանագրի կնքումը։ Պակաս կարևոր նախադրյալներ չէին նաև Բաասի ներկուսակցական սրակական փոփոխությունները զազափարական ասպարեզում և նրա ազգային ղեմավարության հեղափոխության խնդիրներին Իրականացմանը ձեռնարկելու լինելը։ Եվ վերջապես, երկու կողմերն էլ որոշել էին նամուս լինելը։ Եվ վերջապես, երկու կողմերն էլ որոշել էին նամուս լինելու նախկինում եղած բացասական հարաբերությանց առնել նախկինում եղած բացասական հարաբերությունները, նպատակ ունենալով բոլոր ջանքերն ուղղել ազգային առաջադիմական ճակատի ստեղծմանը։

Այսպիսով, 1973 թ. հուլիսի 17-ին Իլե-ի և Բաասի միջև ստորագրվեց համաձայնագիր համագործակցության ազգային-հայրերյալ, որով և հիմք դրվեց առաջադիմական ազգային-հայրենասիրական ճակատի (ԱԱՀԾ) ստեղծմանը։

Իլե-ն և Բաասը երկրի բոլոր առաջադիմական ուժերին կոչ արեցին միավորվել ճակատի զրոշի ներքո Համատեղ հայտարարության ստորագրման ժամանակ էաբար հավաստեց, որ Բաասի և կոմկուսի համագործակցությունը պատմականոր խոշոր շրջադարձ է Իրաքի կյանքում։ Նա ընդգծեց, որ «ճակատը պետք է լինի կայուն և հաստատուն, պետք է ունենա կառուցողական խնդիրներն ու ստրատեգիական նպատակները»²⁵։ Ի պատասխան, կոմկուսի ղեկավարները գործադրած Ա. Մուհամեդը բարձր գնահատեց ուղղությունը, ավելացնելով, շանքերը ճակատի ստեղծման ուղղությամբ քայլ է կատարված մեր որ «ճակատը պատմական խոշորագույն քայլ է կատարված մեր երկրի ներկա իրավիճակի և հետագա անելիքների համընդհանրության հետ և Իրականացնելու է մեր ազգային-ղեմուկրատական հեղափոխության խնդիրները»²⁶։

Կրատական հեղափոխության խնդիրները»²⁶։

Օգոստոսին հրատարակվեց ԱԱՀԾ-ի ծրագրին ու կանոնա-

զբրույթունը, որոնց հիմքում ընկած էին «Ազգային գործու-
նեություն խարտիայի» գլխավոր սկզբունքներն ու նպատակնե-
րը: Բնութագրելով ճակատի էությունը, կանոնադրությունը նը-
շում էր. «ԱԱՀԸ-ը ազգային առաջադիմական ու հայրենասիրա-
կան կուսակցությունների և ուժերի կամավոր միությունն է:
Այն արտահայտում է հասարակության տարրեր առաջադի-
մական դասակարգերի, խավերի և գործիչների, ինչպես նաև
ճակատի անդամների համընդհանուր շահերը: ԱԱՀԸ-ը ժո-
ղովրդական զանգվածների համախմբման և ազգային ու սո-
ցիալական նպատակների իրականացման համար նրանց հա-
մատեղ պայքարի ճիշտ կազմակերպման գործարար միջոց է:
ԱԱՀԸ-ի մասնակիցների համատեղ պայքարը բնականաբար
նախադրյալներ է ստեղծում եզրայրական համագործակցու-
թյան ամրապնդման ու այդ ուժերի միջև փոխվստահություն
ուժեղացման համար: Այն բարենպաստ հող է նախապատ-
րաստում միասնական հայրենիքի տարրեր ազգությունների
արարների, քրդերի և այլ փոքրամասնությունների համընդ-
հանուր պայքարի ավանդությունների հարստացման հա-
մար»²⁷:

ԱԱՀԸ ծրագիրը հավաստում էր, որ Իրաքի հեղափոխա-
կան շարժումը կազմում է համաշխարհային հեղափոխական
պրոցեսի բաղկացուցիչ մասը: Այն անհրաժեշտ էր համարում
սերտ համագործակցություն հաստատել ՍՍՀՄ-ի, սոցիա-
լիստական երկրների և ազգային-ազատագրական միջազ-
գային շարժման հետ:

ԱԱՀԸ կանոնադրության 2-րդ հոդվածը նախատեսում էր
կազմել ճակատի բարձրագույն կոմիտե՝ 16 անդամներից,
այդ թվում Բասսը ներկայացնում է Տ հոգի (ներառյալ կո-
միտեի նախագահը), երեքական անդամներ՝ Իկի-ից և ՔԳԿ-ից
և մեկական անդամ՝ առաջադիմական ազգայնականներից և
անկախ ղեկավարաններից: Բարձրագույն կոմիտեի նախագահն
է Թասս կուսակցության ղեկավարության գլխավոր
քարտուղարը կամ նրա տեղակալը: Ընկալած ունի քարտու-
ղարություն և տեղական մարմիններ՝ մուհաֆազաթներում
(նահանգներում):

Ճակատի գործելակերպի մասին էր խոսում կանոնա-
դրությունների Ե-րդ հոդվածը.

ա—Ճակատի բոլոր մարմինները գործում են ազգային
միասնության ոգով և ղեմնկրատիայի հիմունքներով, որոնք
սպառնում են յուրաքանչյուր կողմի ազատությունը՝ քննաբ-
կելու աշխատանքները և առաջարկություններ անելու ի սպաս
գործունեության կատարելագործման.

բ— Խաբտիայի վերանայումը կատարվում է անգամ-
ների համաձայնություններ, հաշվի առնելով հեղափոխական
շարժման հրատապ խնդիրները.

գ— տարածայնությունները քննարկվում են ղեմնկրա-
տական բանավեճի միջոցով, թերություններն ու սխալները
վերացվում են քննադատության և ինքնաքննադատության
սկզբունքով²⁸;

Իրաքի ԱՆՀՃ-ի կազմավորումը արժանացավ արարական
բոլոր առաջադիմական ուժերի, ՄՍՀՄ-ի և առաջավոր մարդ-
կության բարձր գնահատականին:

Բաասի և կոմկուսի ղեկավարներին ուղղված սովետա-
կան ղեկավարության շնորհավորական հեռագրերում ընդ-
գրված էր, որ ճակատի ստեղծումը Իրաքի կոմունիստների
զբված էր, որ ճակատի ստեղծումը Իրաքի ղեմնկրա-
տական և բնասականների կարևոր ներդրումն է Իրաքի ղեմնկրա-
տական, ազգային ու հասարակական առաջադիմության գոր-
ծում²⁹;

Միրիայի կոմկուսի ղիսավոր քարտուղար Խ. Բազդաշն
ընդգծեց, որ «Ազգային ճակատի ստեղծումը ԻԿԿ-ի և Բասսի
կողմից խոշոր նվաճում է ոչ միայն Իրաքի, այլև արարական
ազգային-ազատագրական շարժման բոլոր առաջավոր շո-
կատների համար»³⁰;

Կոմկուսի և Բասսի համագործակցության շնորհիվ
1973 թ. սեպտեմբերի 19-ից սկսեց վերահրատարակվել ԻԿԿ
կենտրոնական օրգան «Թարիկ աշ-Շաար» քաղաքական օրա-
թերթը:

Բասս-կոմկուս կոալիցիայի պատմական զարգացումն
անցել է երեք փուլ.

— Համազգային խնդիրների լուծման վուլ՝ պայթաբ տեղական և միջազգային սեակցիայի և քրդական (Բարզանիի) անշատողականների գեմ (1973—1975 թթ.),

— Բաասի աստիճանական անցումը սեֆորմիզմի և աշակոզմյան նացիոնալիզմի գիրքերը և հակասոցիունների ձևավորումը Բաասի և կոմկուսի միջև (1975—1977 թթ.)

— կոսպիցիայի ճգնաժամն ու կազմալուծումը (1978—1979 թթ.):

Այժմ տեսնենք, թե Քրդստանի դեմոկրատական կոսակցությունը ինչպիսի գիրք գրավեց ճակատի նկատմամբ: Չնայած կոմկուսի և Բաասի ղեկավարների բազում կոչերին, ՔԴԿ-ն մերժեց ճակատին միանալու գազափարը, որովհետև այն պահանջում էր իրականացնել մարտի 11-ի ղեկավարացիայով նախատեսված քրդական ինքնավար շրջանի աշխարհագրական սահմանումը, քրդերի համեմատական ներկայացուցչությունը կենտրոնական պետության գործադիր, օրենսգիր, դատական իշխանություններում և այլ հարցեր, որոնց շուրջ բանակցություններ տեղի ունեցան Բաասի, կոմկուսի և ՔԴԿ-ի ղեկավարների միջև: Ի վերջո, ապարդյուն անցան գործադրված բոլոր ջանքերը՝ ՔԴԿ-ի ղեկավարությանը համոզելու միանալ ճակատին: Բանը հասավ այնտեղ, որ 1971—1973 թթ. ՔԴԿ-ի ավատատիրական ցեղային պահպանողական և անշատողական ղեկավարությունը Մ. Բարզանիի ղլխավորությամբ ոչ միայն չմտավ ճակատի կազմում, այլև թշնամական գիրք գրավեց թե՛ Բաասի, թե՛ կոմկուսի և թե՛ երկրում կատարվող սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխությունների նկատմամբ: Այն պրոպագանդիստական մեծ արշավ կազմակերպեց կոմունիզմի գեմը քնդհանրապես: Իրարի կոմկուսի գեմ մասնավորապես:

ՔԴԿ ղեկավարությունը շրավարարվեց դրանով: 1973 թ. նոյեմբերին կուսակցության զինված ջոկատները հարձակում գործեցին Քրդստանի կոմկուսի մասնաճյուղի կենտրոնի վրա: սպանեցին և վիրավորեցին տասնյակ արար և բուրգ կոմունիստներին, որոնք քաշարար մարտեչեչ էին հանուն բուրգ

մոռովրդի ազգային իրավունքների նվաճման: Գեո ավելին,
զինված շոկատավարներից մեկը՝ Սալեհ Բեդաուին գիմում էր
էր զինակիցներին հետևյալ մարտահոշով. «Մենք գիմում ենք
կոմունիստներին սնչաջանելու Ուզում ենք սպանել և բնա-
ջնջել նրանց: Գուք ձեռնարձակ եք նրանց կանանց, գուստրե-
րի և ունեցվածքի հանդեպ»³¹:

Այդ կապակցությամբ իկկ կենտկոմը նամակ-կոշ հղեց
արարական կոմունիստական ու բանվորական կուսակցու-
թյուններին, որով բացահայտում էր կոմունիստների դեմ
սանձազերծված ոտնձգությունը: «ՔԴԿ-ի ղեկավարության
ներկա քաղաքականությունը, — կարդում ենք նամակ-կոշում, —
ահավոր վտանգ է Իրաքի հեղափոխական շարժման համար:
Մանավանդ, որ նման հանցագործությունը կատարվում է այն
ժամանակ, երբ ամերիկյան իմպերիալիզմը և նրա գործա-
կալները ինտրիգների շղթա են հյուսում երկրում կատարվող
առաջադիմական նվաճումների դեմ»³²:

Արարական առաջադիմական ուժերը և, առաջին հերթին,
Սիրիայի, Լիբանանի, Հորդանանի կոմունիստական կուսակ-
ցություններն իրենց համերաշխությունը հայտնեցին Իրաքի
կոմունիստներին: 1973 թ. նոյեմբերին նրանց հրապարակած
հայտարարությունը խիստ դատապարտում էր ՔԴԿ-ի զին-
ված շոկատների փորձերը՝ լուծարքի ենթարկել կոմկուսի-
մանահշուղը քրդական շրջանում: Բնութագրելով ոճրագոր-
ծությունները կոմունիստ աննկուն մարտիկների նկատմամբ,
հայտարարությունն քնդգծում էր դրանց «ձանք հետևանք-
ները Իրաքի ազգային հայրենասիրական շարժման վրա
ընդհանրապես և քրդական ազատագրական պայքարի վրա
մասնավորապես»³³:

Հատկանշական է նաև Սիրիայի կոմկուսի գլխավոր քաղ-
աքաբար Խ. Բազդաշի Բարզանիին հղած նամակը, որտեղ
նա իր զարմանքն էր հայտնում վերևում նշված մարտահոշի
նկատմամբ: Բազդաշը կոշ էր անում դադարեցնել կոմու-
նիստներին նկատմամբ սանձարձակ ահարկությունները,
«որովհետև այն կուսակցությունը (նկատի ունի ՔԴԿ-ն — Պ. Ս.),
որ երկար ժամանակ պայքարում էր իմպերիալիզմի և սեակ-

ցիայի զեմ, շպեար է տեղափոխելի հակառակ՝ հակահոմո-
նիզմի դիրքերը»³⁴,

Համանման հայտարարություններ հանդես են գալիս Իրանի
ԱԱՀԾ-ի բարձրագույն կոմիտեն, շեշտելով, որ այդ կամայա-
կանությունները երբևէ չեն նպաստի քրդական ինքնավարու-
թյան կենսագործմանը և երկրի առաջադիմական ու հանրա-
նասիրական ուժերի համախմբվածությունը:

Հարկ ենք համարում շեշտել, որ շնայած ԻկԿ-ի և ՔԴԿ-ի
քաղաքական նպատակների որոշ ընդհանրություններ, միջո-
չէ, որ կոմիտան հաջողվել է համագործակցել ՔԴԿ-ի հետ:
Դրա գլխավոր պատճառը ՔԴԿ-ի ղեկավարության ազգային
նեղմիտ քաղաքականությունն էր՝ հենց թեկուզ քրդական
հարցում, և կոմունիզմի հանդեպ նրա թշնամական վերաբեր-
մունքը:

Որո՞նք էին ԻկԿ-ի և ՔԴԿ-ի գաղափարական սկզբուն-
քային տարաձայնությունները:

Նախ և առաջ՝ ՔԴԿ-ի ղեկավարության բազում կոչերը
լուծարքի ենթարկելու կոմիտանի մասնաճյուղը իրաքյան
Քրդստանում, հիմնվելով այն թույլ փաստարկների վրա, թե
իրք «Քրդստանում գոյություն չունի գասակարգային պարզ
սահմանազատում», «չկա բանվոր գասակարգ», թե «բուրժ-
գյուղացին չի ընդունում կոմունիզմը», թե «կարիք չկա քրդ-
զական ազգային շարժումը գունավորել կոմունիստական
կարմիր երանգով»³⁵: Այս և այլ լողունքներն ու կոչերը արդ-
յունք էին ՔԴԿ-ի ղեկավարության ներսում առավել պահպանու-
ղական ու հետադիմական տարրերի գոյության:

Երկրորդ՝ բուրժ ժողովրդական զանգվածների սոցիալ-
տնտեսական առաջադիմական վերափոխումների համար
մղված պայքարի նկատմամբ ՔԴԿ-ի ղեկավար շրջաններ
թշնամական դիրքը: Նրանք, կազմելով բուրժուա-կալվածա-
տիրական վերնախավը, փորձում էին քրդական ազգային-
ազատագրական պայքարը հակադրել գասակարգային պայ-
քարին:

Երրորդ՝ ՔԴԿ-ի ղեկավարությունը ազգային նեղմաու-
թյան դիրքերից էր մեկնաբանում քրդական հարցի կարգավոր-

բումը, այն արհեստականորեն անշատելով իրաքյան ժողովրդի համաժողովրդական գեմոկրատական պայքարից՝ ՔԳԿ-ն ճշտորոշ սահմանադատում չէր մտցնում կառավարող հետազոտական շրջանների հակաքրդական տրամադրությունների և արարական ժողովրդական գանդվածների վերաբերմունքի միջև, իսկ վերջիններս ոչ մի շահ չունեին ճնշելու քրդական աշխատավորությանը:

Չորրորդ՝ 1972—1975 թթ. կոմկուսի և ՔԳԿ-ի ղեկավարների գլխավոր տարածայնություններից էին նաև ՔԳԿ-ի բացասական ու վերապահ վերաբերմունքը երկրում կատարվող սոցիալ-տնտեսական առաջադիմական վերափոխությունների, անգամ նաև սովետա-իրաքյան համագործակցության պայմանագրի նկատմամբ:

Շինդերորդ՝ ՔԳԿ-ի սխալ գիրքավորումն ԱՄՆ-ի, Իրանի և այլ հետազոտական պետությունների հանդեպ, որոնք լուխ խոստումներ էին շտախլում հենց Բարդանիին և նրան կրախի հասցրին: Կոմկուսը բաղմիցս նախազգուշացրել էր նման մերժեցման վտանգից: Սակայն, ՔԳԿ-ի ազդեցիկ ղեկավարները գնալով միբնվեցին այդ ճահճի մեջ՝ վտանգի ենթարկելով քլ քրդական հարցի արդար կարգավորումը և քլ իրաքյան ժողովրդի համագեմոկրատական պայքարը³⁶:

1974 թ. հունվարի 8-ին իրաքյան հանրապետության 14 նահանգներում կազմավորվեցին ԱԱՀԾ-ի տեղական կոմիտեներ, բաղկացած Բասսի և կոմկուսի ներկայացուցիչներից: Կոմկուսի կյանքում նշանավոր իրադարձություն էր նրա հիմնադրման 40-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր տոնակատարությունը Բաղդադում³⁷, Մխտինգին ներկա էին Բասս կուսակցության մարզային և ազգային ղեկավարության ներկայացուցիչները, ինչպես նաև՝ արարական կոմունիստական ու բանվորական կուսակցությունների պատվիրակությունները: Իրաքի ԱԱՀԾ-ի անունից ողջունի խոսք բաղկացրեցին Վալիդ Մուսաևը, Իրաքի ԱԱՀԾ-ի անունից՝ Վալիդ Մուսաևը, Իրաքի ԱԱՀԾ-ի անունից՝ Վալիդ Մուսաևը, Իրաքի ԱԱՀԾ-ի անունից՝ Վալիդ Մուսաևը: Այս բաղաձայնությունը ԱԱՀԾ-ին, ԻԿԿ գլխավոր քարտուղար Ա. Մուսաևին և Վալիդ Մուսաևին ներկայացրեց իրաքյան կոմկուսի կողմից:

ընտրությունը և ասաց. «Կոմունիստներին համար շատ հա-
ճելի է, երբ այսօր մեր աշրջով տեսնում ենք մեր նպատակ-
ների ու ձգտումների իրականացումն առաջադիմական կար-
գի կողմից՝ ազգային միասնության հովանու ներքո, որի
մարմնավորումն է Իրաքի Ազգային առաջադիմական-հայ-
րենասիրական ճակատը»³⁵:

1974 թ. մարտի 31-ին Իրաքի հեղափոխական հրամա-
նատարության խորհուրդը (ՀՀԽ), կոմկուսի էկեռակումի երկր-
անզամենների՝ Նազիհա Գուլաշմիրին, Ռահիմ Աջինաշին և Մահ-
գի Հաֆեզին նշանակեց այն հանձնաժողովի կազմում, որն
զբաղվելու էր ԱԽՀՃ-ի աշխատանքների ճիշտ կազմակերպ-
ման հարցերով:

Այս շրջանում Իրաքի ներքաղաքական կյանքում կրկին
առաջնակարգ նշանակություն ստացավ քրդական հարցը՝
Իրաքի կոմունիստական կուսակցությունը մեծ ջանքեր է
գործադրում քրդական ինքնավարության վերարերջալ 1970 թ.
մարտի 11-ի մանիֆեստի հետևողական էիրատման համար՝
3. Պետական հաստիքի ձեռքում կենտրոնացնել տնտեսության հրամանատարական բարձունքները:

4. Հասնել ժամանակակից զարգացած գյուղատնտեսության մակարդակին՝ վճռական անցում կատարելով ղեկի մեքենայացում: Միաժամանակ անհրաժեշտ է խորացնել հոսանքի վերափոխությունների օրենքը, սահմանելով հողատիրության առավելագույն չափ՝ 25 ֆեդան մեկ շնչի և 50 ֆեդան գյուղական ընտանիքի համար, իջեցնելով այն 50%-ով նրանց համար, ովքեր չեն զբաղվում հողագործությամբ: Իսկ նրանց վերացնել կիսարտության ձևերը և անցնել գյուղատնտեսության կոոպերացիայի:

5. Զարգացնել առևտուրը, մեծացնելով արտահանության քանակը և կանոնավորելով ներմուծման պահանջները, վերացնել պերճանքի առարկաների ներմուծումը, ներքին առևտրի բնագավառում պետականացնել մեծածախ առևտուրը և

վերջ տալ շահագործողական դասակարգի ներկայացուցիչներին՝ պարազիտային բուրժուազիայի, կոմպրադորականներին, մաքսանենգներին, վաշխատունների և կապալառուներին ազատությունը:

6. Կատարել սոցիալ-վարչական արմատական վերափոխություններ:

7. Իրագործել կուլտուրական հեղափոխություն և հինգ տարվա ընթացքում վերացնել անդրազիտությունը⁴⁴:

Եզիպտոսի քաղաքական կյանքում խոշոր իրադարձություն էր կոմունիստական կուսակցության (ԵԿԿ) վերաստեղծումը (1975 թ.):

Եզիպտոսի կոմկուսը արտահայտում է աշխատավորության և առաջադեմ մտավորականության շահերը, ակտիվորեն պայքարում է երկիրը վերադարձնելու անկախության ու առաջադիմության ուղուն և մերձավորարևելյան կոնֆլիկտի հարցում սեպարատ գործարքների դեմ: ԵԿԿ-ը վճռականորեն դատապարտում է եզիպտական Էլեյ-վա-ու-Մյան հակասովետական քաղաքականությունը, ընդդժեհելով, որ այն հակասում է եզիպտական և մյուս արաբական ժողովուրդների շահերին: Կուսակցությունը գործում է անլեզու պայմաններում:

Սակայն, հակառակ բոլոր դժվարություններին, ԵԿԿ-ը անշեղորեն համալրում է իր շարքերը: 1980 թ. սեպտեմբերին կայացավ կուսակցության I համագումարը, որը հաստատեց նրա ծրագիրն ու կանոնադրությունը: ԵԿԿ-ի օրգանն է «ալ Ինթիսար» թերթը:

Կոմունիստներն իրենց կարևորագույն խնդիրներից մեկը համարում են ազգային-հայրենասիրական միասնական ճանդղիմադիր ուժերի հետ միասին, 1980 թ. մարտին, նրանք ստեղծեցին Եզիպտական հայրենասիրական ճակատ (ԵՀԾ): Նրա գլխավոր քարտուղար ընտրվեց Եզիպտոսի զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ, հայրենասեր զենկերալ Սաադ էդ Դին աշ-Շազլին: Ճակատի ծրագրում սահմանված էին այն գլխավոր խնդիրները, որ կանգնած են Եզիպտոսի և

նրա ղեմնորատական ուժերի առջև: Ճակատի հրամայական
պահանջներին էր Սաղաթի ղեմնորատական վարչակարգով:
Բինումը հեղափոխական ու ղեմնորատական վարչակարգով:
Անդրազատնալով Սաղաթի վարչակարգի տնտեսական քաղա-
քականության հարցին, ծրագիրը նշում էր. «Պետք է վերջ
տալ լիբերալիզացիայի քաղաքականությանը, որը հաստա-
տեց օտարերկրյա մոնոպոլիաների գերիշխանությունը եզրա-
տական տնտեսության վրա, սողի մատենց ժողովրդական
զանգվածներին՝ ի շահ պարագիտային բուրժուազիայի, որը
թափառում է երկրի հարստությունները և բաժանում այն առ-
թասահմանյան նորաստեղծ բնկերությունների ու դրամա-
տների հետ»⁴⁵:

Արանք են սոցիալ-տնտեսական և քաղաքական որոշա-
կի պատճառները, որոնք հասցրին Եզրիպտոսի հրամարմանը
սոցիալիստական կողմնորոշումից և հակաիմպերիալիստա-
կան քաղաքական կուրսից:

Եզրիպտոսը, որ նասերի օրոք հանդես էր գալիս արա-
բական ազատագրական պայքարի ավանգարդում, Սաղաթի
օրոք օգտագործվեց, որպես իմպերիալիզմի օտարյական ձի»
որոք օգտագործում էր, որպես իմպերիալիզմի օտարյական ձի»
արարական աշխարհում: Եզրիպտոսի ղեկավարությունը, ստո-
րագրական համաձայնագրերը, կանգնեց արաբ
բազրելով Քեմպ-Գերդի համաձայնագրերը, կանգնեց արաբ
ժողովուրդների կենսական շահերի զավաճանության ուղու
վրա:

Սաղաթի ազգազավ քաղաքականությունը, բնականաբար
հանդիպելով եզրիպտական ժողովրդի զորեղ գիմադրությանը,
ձախողանք ձախողանքի հետևից կրեց, որը հասցրեց Սաղաթի
անփառունակ վախճանին 1981 թ. հոկտեմբերի 6-ին:

Հասկանալով իրենց պատասխանատվությունը ժողովրդի
և պատմության հանդեպ, Եզրիպտոսի կոմկուսը առավելա-
զույն նախաձեռնություն է ցուցաբերում հայրենասիրական
ուժերի ճակատի ամրապնդման համար: Եզրիպտոսի կոմկուսի
օգրքայության 1983 թ. փետրվարին ընդունած քաղաքական
բանաձևը ընդգծեց, որ երկրում գեղևս շարունակվում են
օտարերկրյա կապիտալի տիրապետությունը, ազգային
տնտեսության աճի տեմպերի կտրուկ անկումը, բնակչու-

Յյան յուրաքանչյուր շնչին ընկնող Եկամտի նվազումը, գործազրկությունն աճը, ժողովրդական զանգվածների դժգոհությունը և քեմպ-դեիդյան պրոսիմպերիալիստական կուրսը:

Որպես ձախ ու ղեմնկրատական բուրբ ուժերի միավորման հիմք, կոմկուսի բանաձևը մշակեց ազգային փրկություն միեմիմում ծրագիր: Իրանում հրապարակված են, մասնավորապես հետևյալ պահանջները. 1) աշդայնացնել և պետական հատվածին հանձնել օտարերկրյա կապիտալին պատկանող բոլոր ընկերությունները, 2) անցկացնել արմատական ազդարային ռեֆորմ, 3) ուժեղացնել և ընդլայնել պետական հատվածը և ղեմնկրատականացնել նրա կառավարումը՝ բոլոր մակարդակներով բանվորական վերահսկողություն սահմանելու ճանապարհով, 4) վերանայել բանվորներին աշխատավարձ սահմանելու կարգը, հաշվի առնելով դեների բարձրությունը և այլն, սահմանել աշխատավարձի միեմիմում, 5) ճանաչել արհմիությունների, կուսակցությունների և ազգայնազգային կազմակերպությունների լեգալության իրավունքները, 6) վերացնել գործազրկությունը, ղեմնկրատականացնել կրթական համակարգը և այլ կարևոր խնդիրներ:

Եզիպտոսի կոմկուսի առաջարկած ծրագրի հիման վրա պայքարի զարգացումը և գործողությունների միասնությունը կոմունիստների կարծիքով, կհանգեցնի երկրում դասակարգային ուժերի հարաբերակցության փոփոխության՝ հօգուտ բանվոր դասակարգի և նրա մերձավորագույն գաշնակցի գյուղացիության:

Եզիպտացի կոմունիստները հաշվի են առնում, որ ծրագրերի իրականացման ճանապարհին իրենց սպասում են, ոչ փիշ դժվարություններ: Սակայն նրանք համոզված են, որ ստեղծված պայմաններում դա է Եզիպտոսի ղեմնկրատական ուժերի և աշխատավորական զանգվածների ոտնահարված իրավունքների վերականգնման ռեալ հիմքը:

Գ Լ Ո Ւ Ե Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

ԼԻԲԱՆԱՆԻ ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ՈՒ ՏԵՐԻՏՈՐԻԱԿԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՀԱՄԱՐ

1967 թ. իսրայելական ազդեցիկ սրբյ արարական
երկրներին, այդ թվում նաև Լիբանանի, սոցիալ-տնտեսական և
քաղաքական տազնապը: Լիբանանի կառավարող առևտրա-
բուրժուական և կալվածատիրական վերնախավը ճիգ ու ջանք
վնայեց մեկուսացնելու երկիրն արարական աշխարհից,
որպեսզի թեկուզև նվազագույն շափով շմանակցեր ազ-
րեսիայի հետևանքների վերացման ուղղված ազատագրա-
կան պայքարին: Ընդհակառակը, նա ավելի ուժեղացրեց երկ-
րի տնտեսական և քաղաքական կախվածությունը համաշ-
խարհային կախյալության տնտեսությունից և միջազ-
գային իմպերիալիզմից, զործուն մասնակցությունը ցուցաբե-
րեց իրականացնելու իմպերիալիզմի դավերը՝ հուժկու հար-
ված հասցնել երկրում ուժեղացող առաջադիմական ու հայ-
րենասիրական ուժերին և Պաղեստինի դիմադրական շարժ-
մանը (ՊԳՇ):

Լիբանանյան ճգնաժամի էությունը ճիշտ հասկանալու
համար անհրաժեշտ է հանդամանորեն լուսարանել երկրի
սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը ուսումնասիր-
վող ժամանակաշրջանում:

Լիբանանի սոցիալ-տնտեսական մերօրյա ճգնաժամի

արմատները դալիս են անցյալից: Լիբանանում կապիտա-
լիստական արտադրահարարերու թյունների դարգացումը ըս-
կիզբ առավ այն ժամանակ, երբ համաշխարհային կապի-
տալիզմը Բեհակոխեց իմպերիալիզմի փուլը: Այդ ժամանակ էլ
Լիբանանին վերապահվեց չուրստեսակ՝ առևտրական միջ-
նորդի դեր իմպերիալիստական տերությունների և արաբա-
կան երկրների միջև, հանգամանք, որով պայմանավորված էր
նրա տնտեսության միակողմանի դարգացումը: Առևտրական
միջնորդությունից ստացված մեծ հարստությունները եր-
կիրը օրգանապես կապեցին արտասահմանյան, հատկապես
Ֆրանսիական կապիտալի հետ: Այս հանգամանքը ինչ-որ
ժամանակ նպաստեց տնտեսության որոշ «ծաղկման», այն էլ
մեկ բնագավառում՝ սպասարկությունների ոլորտում և որոշա-
կի տարածքներում՝ լեռնագոտու կենտրոնական հատվածներում
ու Բեյրութում: Սպասարկությունների ոլորտը (առևտուրը,
բանկերը, տուրիզմը և տրանզիտը) տալիս էր ազգային եկամտի
65% -ը, մինչդեռ արդյունաբերությունն ու շինարարությունը՝
23%, իսկ գյուղատնտեսությունը՝ 12% -ը¹: Սակայն «ծաղ-
կումը» երկար շարունակվեց և տնտեսական լիբերալիզմը
սկսեց ապրել իրեն հատուկ ճգնաժամը: Արաբական երկրնե-
րում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և քաղաքական տե-
ղաշարժերը, որոնք այս կամ այն ձևով սահմանափակեցին
իմպերիալիստական պետությունների արտոնյալ ներկայու-
թյունը արաբական շրջանում, հասցրին նաև Լիբանանի՝ որ-
պես միջնորդի, դերի նվազմանը: Գրան պետք է ավելացնենք
կապիտալիստական երկրների, հատկապես ԱՄՆ-ի, Ֆրանսի-
այի և Անգլիայի տնտեսական ճգնաժամի ուժեղացումը,
որի հետ սերտ կապված էին Լիբանանում գործող օտար-
երկրյա դրամատները, ապահովագրական, բաժնետիրական
ընկերությունները:

Վերը նշված պատճառները, ինչպես իրավամբ եզրա-
կացնում է Ն. Հովհաննիսյանը, հանգեցրեցին այն բանին, որ
«Լիբանանի տնտեսությունը հաստատուն հիմքերի վրա չի
գտնվում: Այդ բոլոր սպասարկությունները ենթակա են ար-
տաքին և հատկապես միջազգային գործոնների ազդեցության»:

ՔԼ՝ առևտուրը, թե՛ տուրիզմը և թե՛ բանկային գործունեու-
թյունը մշտապես կախված են միջազգային դրուժյունից և
միջազգային հարաբերությունների ամեն մի փոփոխում իր
անդրադարձն է ունենում կիբանանի տնտեսության վրա»²։

«Տնտեսական լիբերալիզմի» բարոյիչներն անգամ
ստիպված էին հաշտվել այս ճշմարտության հետ։ կրանանի
ֆիլանտաների և պլանավորման նախկին միեխտր, փազան-
դավորների տեսարան, տնտեսագետ Ժոզեֆ Շադերը երկրի
տնտեսական զարգացման ողջ հեռանկարը տեսնելով «նեոլի-
բերալիզմի» մեջ ստիպված էր խոստովանել, որ «լիբրալիզմ-
յան տնտեսության հիմքերը ամուր չեն, բանդի մեր աշգային
կամտի մեծ մասը գալիս է առևտրից և այլ սպասարկու-
թյուններից»³։

Ինչ վերաբերում է սպասարկությունների համակարգին,
ապա բուրժուական տնտեսագետները, փորձելով հավաս-
տիացնել, որ այն անընդհատ բարգավաճման մեջ է, իբրև
սպացույց վկայակոչում էին բանկերում կուտակված ավանդ-
ների աճը։ Հիրսովի, գրանք 1967 թ. կազմում էին 2, 621 մլն.
լիբանանյան լիբա⁴, իսկ 1974 թ. հասան մինչև 7 մլրդ լի-
բայի⁵։ Եվ, սակայն, լիբանանյան տնտեսական հակասությու-
նները միշտ չէ, որ լուծվում էին հենվելով կապիտալի շրջանառու-
թյան վրա, որովհետև դժվար էր մշտապես ապահովել գրամա-
պիտալների ներհոսքի բարձր տեմպերը։ կրանանի գրամա-
կան շուկան մեկուսացված չէր արտաքին ազգակներից՝ կա-
պիտալիտատական աշխարհի տնտեսական ճգնաժամներից, մա-
նավանդ, որ նրա բանկային համակարգը կապիտալիտ-
ի թուլության մեջ էր զիմադրել մրցակցությունը։
տական աշխարհի գրամական շուկաների ներդրված լինելով
Բացի այդ, կապիտալների մեծ մասը ներդրված ունենալով
ցզահանչ, այլ խոսքով, ավանդատուն էր վերցնել, անկարելի էր
ցանկացած պահին իր կապիտալը երկարաժամկետ վարկերի
գառնում գրանց օգտագործումը կապիտալները ներդրվում էին
համար կավազույն գեպրում հյուղերում։
տնտեսության անարտադրողական ճյուղերում։

Լիրանանում տեղի էր ունենում բանկերի համակենտրոնացում: Եթե 1966 թ. սկզբներին զործող բանկերի թիվը հասնում էր 130-ի⁹, ապա 1967 թ.՝ 90-ի⁷, իսկ 1975 թ.՝ 75-ի⁵: Երկրում կային տեղական, արտաքին, խառը և օտարերկրյա բանկեր, որոնցում գերիշխում էր օտարերկրյա կապիտալը: Բազմական է նշել, որ օտարերկրյա, հիմնականում ամերիկյան 11 բանկերում կենտրոնացված էին կապիտալների 61,2%-ը⁹: Սա հնարավորություն էր ընձևում իմպերիալիստական մենաշնորհային կապիտալին հսկողություն սահմանել Լիրանանի տնտեսության, այդ թվում՝ սպասարկությունների և ֆինանսների վրա:

Կառավարող ֆինանսական օլիգարխիայի տնտեսական անհեռանկար քաղաքականության հետևանքով, 1971 թ. ըսկզբած Լիրանանն սկսեց ապրել կապիտալիստական էկոնոմիկային բնորոշ ինֆլյացիա, որի տեմպերը 1972, 1973 և 1974 թվականներին համապատասխանաբար կազմեցին 14, 25 և 18%¹⁰: Դա պատճառ դարձավ լիրանանյան լիրայի արժեզրկմանը, սպառման առարկաների գների բարձրացմանը և ռեալ աշխատավարձի նվազմանը:

Տնտեսական վիճակը վատթարացավ, երբ 1972 թ. կառավարության հովանավորությամբ բանկային և հիպոտեկային կապիտալները միացան լիրանանցի վտարանդիների կապիտալին: «Այս երևույթը, — գրել է մարքսիստ տնտեսագետ Քամալ Հանին, — հասցրեց հիպոտեկային ալիպիսի մրցակցության, որի նախագիտը չի եղել Լիրանանի պատմության մեջ: Անշուշտ, դրա հետևանքը միանգամայն պարզ է. ազգային հարստության համակենտրոնացում մազնատների ձևով՝ ի հաշիվ աշխատավորական զանգվածների, մանր և միջին ունեւորների, որոնք հետզհետե նետվեցին սնանկության գիրկը»¹¹:

Տնտեսական լիրերալիզմի շատագույնները, փողհարելով սպասարկությունների դերը, փորձում էին բողարկել արտաքին առևտրի խրոնիկ դեֆիցիտը: Այսպես, 1967 թ. նրա հաշվեկշռի պակասորդը կազմեց 1317 մլն.¹², իսկ 1975 թ.՝ 2,3 մլրդ. լիրա¹³: Ճիշտ է, դեֆիցիտը ծածկվում էր այլ

ազդյուններից ստացվող եկամուտներով, սակու և վայրուտայի, տրանզիտային առևտրից, տուրիզմից ստացած շահույթներով և օտարերկրյա նավթային ընկերությունների վճարումներով: Սակայն նման ազդյունները նույնպես կայուն չէին, քանզի մեծ կախում ունեին տիրող քաղաքական իրադրությունից և այն փոխհարաբերություններից, որոնք գոյություն ունեին կիրանանի և Հարևան արաբական երկրների միջև:

Բուրժուական տնտեսագետները, անգամ ռեֆորմիստները, որոնք մինչև վերջին տարիները գտնում էին, որ կիրանանի տնտեսության միակողմանի զարգացումն ամենաօրինակելին էր և որոնք երբեք չէին բնութանում այն փաստը, որ կիրանանում գոյություն ուներ սոցիալ-տնտեսական ճգնաժամ, սկսեցին արդեն խոսել կիրանանի «նեոլիթերալիզացմամբ» և «տնտեսական համասարակչություն» ստեղծման մասին:

Տնտեսության զարգացման հարցը բնեւիտ, 1974 թ., կիրանանի կոմկուսը նշեց, որ խոշոր բուրժուազիան բամանվում է երկու զլխավոր հոսանքի: Առաջինը ներկայացնում է խոշոր առևտրականները, կոմպրադորները և ավանդատուները, որոնք պահանջում էին է՛լ ավելի կապերը իմպերիա-առևտրատնտեսական և քաղաքական հոսանքը ներկալիստական պետությունների հետ: Երկրորդ հոսանքը, որ առաջադրում է արդյունաբերական բուրժուազիան, որ առաջադրում է համագործակցության նոր ձև՝ միջնորդի դեր անկողնում և տրրաարդյունաբերական և ֆինանսական ասպարեզներում կիրանանի և կապիտալիստական պետությունների միջև, և պահանջում է հիմնել վերամշակող արդյունաբերական այնպիսի ձեռնարկություններ, որոնք պետք է դառնան կապիտալիստական երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի մենաշնորհային ընկերությունների մասնաճյուղերը¹⁴:

կիրանանը արդյունաբերական տեսակետից թույլ զարգացած երկիր է, որտեղ համարյա բացակայում է ծանր արդյունաբերությունը: Առավելապես զարգացած են թեթև և վերամշակող արդյունաբերության ճյուղերը: կիրանանում կան տեքստիլ, պատրաստի հագուստեղենի, կոշիկեղենի, կաշվի

18,680, բնտանիքի օժանդակող անդամներ՝ 35,670, գործա-
շուրկներ՝ 20,940, ուրիշներ՝ 11,584: Այս քվեերին պետք է
ավելացնենք 100,000 շրջիկ և սեղոնային՝ շինարարության,
երկրագործության և տրանսպորտի աշխատողներ²¹:

Սանր էր աշխատավորական զանգվածների վիճակը:
Նշված ժամանակաշրջանում սովորական երևույթ էին դարձել
բանվորներին բժաշակ ձևով աշխատանքից ազատելը, հար-
կադրաբար գործից բացակա աշխատողներին օրավարձից
զրկելը, աշխատավարձի նվազագույն չափի վճարումը, աշ-
խատամասերի ավելացումը՝ մինչև 10 ժամի և այլն:

Լիրանանի բուրժուական վաճառքական կարգի բացա-
սական հետևանքներն ավելի ակնհայտ էին գյուղատնտեսու-
թյան բնագավառում: Նախկին խոշոր կալվածատերերի
ստվար մասը հանդիսանում էր նորաստեղծ հողային բուր-
ժուակի հիմքը: Ֆեոդալական ու կապիտալիստական ար-
տադրահարաբերությունների միահյուսումը առաջ բերեց
գյուղական բնակչության շահագործման առավել զածան
ձևեր:

Գյուղատնտեսության մեջ մինչև 1970 թ. զբաղված էր
տնտեսապես ակտիվ բնակչության 45,36%-ը²²: Սակայն
հետագայում գյուղից քաղաք արտահոսքի պատճառով այդ
թիվը հասավ 19%-ի²³: Տարեցտարի նվազում էր նաև գյու-
ղատնտեսությունից ստացվող ազգային եկամտի բաժինը.
1948 թ. այն կազմել է 20%, 1954 թ.՝ 18%, 1965 թ.՝ 15%,
1970 թ.՝ 12%²⁴:

Լիրանանի տարածքը կազմում է 1007201 հեկտար
Գրանցից մշակվում էր 273890 հա, որից միայն 60 հազար
հա ոռոգվող: Խամ ու խոզան 256311 հա հողատարածություն
կարելի էր յուրացնել, որը մեծ չափով կրարելավեր երկրի
տնտեսական վիճակը²⁵:

Գյուղատնտեսության զարգացման գլխավոր խոչընդոտ-
ներից էր հողային տարածությունների համակենտրոնա-
ցումը մի բուռ խոշոր ֆեոդալ-կալվածատերերի ձեռքում: Լի-
րանանի պայմաններում սակավահող գյուղացի էր համար-
վում 1—10 դոնում, մանր՝ 10—30, միջակ՝ 30—50, հարուստ՝
177

փաշտամշակման, ծխախոտի, սննդի, թղթի և ցեմենտի ֆաբ-
րիկաներ ու գործարաններ: Գոյություն ունեն նաև պողպա-
տածուլման պլաստիկ-քիմիական, նավթագործ և մետաղա-
մշակման գործարաններ: 1973 թ. պաշտոնական վիճակա-
գրական տվյալների համաձայն, Լիբանանում կային 18 հա-
զար արդյունաբերական, այդ թվում 12 հազար արհեստա-
վորական ձեռնարկություններ, որոնցում զբաղված էր 120
հազար բանվոր¹⁵: Արդյունաբերության ոլորտում տարեց-
տարի աճում էին կապիտալ ներդրումները: Արդյունաբերող-
ների միություն տվյալներով 1970 թ. բնդհանուր կապիտալ
ներդրումները կազմեցին 1175 մլն., իսկ 1972 թ.՝ մոտ երկու
մլրդ. լիրա¹⁶:

Միաժամանակ ուժեղացել էր օտարերկրյա կապիտալի
ներթափանցումը արդյունաբերության մեջ: 1973 թ. արդյու-
նաբերողների միությունը բողոք ներկայացրեց էկոնոմիկայի
միխատրությունը, որտեղ հրամայական պահանջ էր դրվում
պաշտպանել արդյունաբերությունը օտարերկրյա կապիտալի
միջամտությունից¹⁷:

1967—1974 թթ. Լիբանանի արդյունաբերության մեջ
նկատվեցին որոշ տեղաշարժեր¹⁸: Որոշ շափով աճեց արդյու-
նաբերության բաժինը ազգային եկամտի մեջ¹⁹, եթե 1965 թ.
այն տալիս էր ազգային եկամտի 13%-ը միայն, ապա 1973 և
1974 թվականներին՝ համապատասխանաբար 15 և 16,7%²⁰:

Արդյունաբերության զարգացման հետ միասին շոշա-
փելի տեղաշարժեր արձանագրվեցին բանվոր դասակարգի քա-
նակական և որակական կառուցվածքի մեջ: Լիբանանի աշխա-
տավորական զանգվածների կառուցվածքի մասին գոյություն
ունեցող միակ պաշտոնական վիճակագրությունը հրասպա-
րակվել է 1972 թ.՝ Բեյրութի վիճակագրական կենտրոնական
գրասենյակի կողմից:

Լիբանանում աշխատավորության թիվը կազմում էր մոտ
572 հազար մարդ, այսինքն՝ բնակչության 20—25%-ը: Բան-
վոր դասակարգի թիվը հասնում էր 390,139-ի, որից մշտա-
կան գործավորներ՝ 203,265, օրավարձով աշխատողներ՝

վում հողային հարցը լուծելու վճռական պահանջը: Հողային արմատական բարեփոխությունների իրականացման նպատակով կոմկուսը խնդիր էր դնում.

1. Սահմանել հողատիրության առավելագույն չափ՝ հաշվի առնելով հողակտորի արգավանդությունը, շահագործման ձևերը, շուկայից մոտիկ կամ հեռու լինելը:

2. Բռնադրավել բոլոր այն հողատարածությունները, որոնք գտնվում են տեղական և օտարերկրյա կապիտալի տնօրինության ներքո և որոնք հափշտակել էին գյուղացիներից՝ պարտքերի բարձր տոկոսների դիմաց:

3. Սահմանել առաջագիմական հարկ ժամանակներին տնտեսությունների նկատմամբ, որոնց սեփականությունը թիչ է գերազանցում սահմանված առավելագույն չափը:

4. Բաժանել բռնադրված հողատարածություններին և գյուղատնտեսական շուրկ, սակավահող գյուղացիներին և գյուղատնտեսական իրաբանավորներին՝ անփոխհատույց և սեփականատիրական իրավունքով, նույնպես հաշվի առնելով հողի արդյունավետության հանգամանքները: Հող ստացող գյուղացիին ենթարկվում է հարկի, եթե նա առաջին տարին չձշակի այն, հաջորդ տառն է հարկի, եթե նա առաջին տարին չձշակի այն, հաջորդ տառն է վերցվում: Ժամանակակից տեխնիկա գործածող խոշոր տնտեսությունները ո՛չ բաշխվելու են և ո՛չ էլ մանխոշոր տնտեսությունները ո՛չ բաշխվելու են որպես պետական կամ Բարձրագույն տնտեսություններ:

5. Հող ստացող գյուղացիներին տրամադրել վարկ, սերմացու, տեխնիկա և ուղղման անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար առավել արդյունավետ արտադրանք:

6. Պաշտպանել մանր ու միջակ հողատերերին կապիտալի ներգործությունից և նրանց ցույց տալ անհրաժեշտ օգնություն:

Մրազրում համապատասխան լուծումներ էին առաջադրվում գյուղացիության համար մեծ նշանակություն ունեցող այնպիսի խնդիրների համար, ինչպես գյուղացիների կենսական շահերի պաշտպանությունը, սոցիալական ապահովագրությունը, գյուղատնտեսության տարերային զարգացման

արդիւակումը, խամ ու խոտան հողերի չուրացումը, գյուղատնտեսական արտադրանքի բարձրացումը, ոտոզման սխառմի ստեղծումը, ժամանակակից տեխնիկայի կիրառումը, անասնապահութեան զարգացումը, գյուղատնտեսական մթնոլորտի իրացումը շուկայում և այլն²⁰։

Լիբանանի կառավարող ֆինանսական օլիգարխիան հավաստիացնում էր, որ տնտեսութեան բարգաւաճման ցայտուն ապացույց է պետական բյուջեի աճը։ Այն 1973 թ. կազմել է 1199, 5 մլն, 1974 թ.՝ 1385 մլն²⁰, 1975 թ.՝ 1986 մլն լիբան²¹։

Այժմ տեսնենք, թե ուռճեցրած այդ բյուջեները ինչպե՞ս էին բաշխվում։ 1974 թ. պետական բյուջեի առաջին և երկրորդ մասերը, որոնք ոչ արտադրողական մասեր էին, ընդգրկում էին նրա 83% -ը։ Առաջին մասը, որ հատկացվում էր պետական վարչամեթոդային, կազմում էր 821 մլն լիբան կամ ամբողջ բյուջեի 67% -ը։ Երկրորդ մասը, որը հատկացվում էր աշխատողներին, սովորական կառույցներին և սարքավորումներին կազմում էր 190 մլն լիբան կամ 16%, որից 47 մլն պաշտպանութեան մինիստրութեանը, 14 մլն՝ ներքին գործերի մինիստրութեանը, 3 մլն. միայն պետական գաղթյուններին։ 18 մլն՝ գյուղատնտեսութեան մինիստրութեանը, իսկ արդյունաբերութեանը՝ ոչինչ։ Բյուջեի երրորդ մասը՝ 215 մլն կամ 17% հատկացվում էր հեռանկարային ծրագրերի իրականացմանը։ Այստեղ նույնպես երևում էր պետութեան վարած քաղաքականութեան անհեռանկարային բնույթը։ Այն ղեկավարում էր պաշտպանութեան մինիստրութեանը դարձյալ հատկացվում էր 70 մլն, լուսավորութեան մինիստրութեանը՝ 44 մլն, աշխատանքի մինիստրութեանը 76 մլն լիբան, արդյունաբերութեան, գյուղատնտեսութեան և շինարարութեան մինիստրութեաններին այս մասում ոչ մի հատկացում չկար²²։

Պետական բյուջեի 70% -ն ապահովում էին անուղղակի հարկերը, որոնց ծանր բեռը հիմնականում ընկնում էր աշխատավորական զանգվածների ուսերին, մինչդեռ բյուջետային ուղղակի հարկերը կազմում էին ընդամենը 25—30%²³։

Լիբանանի կոմիտուսը և բոլոր առաջադիմական ուժերը միահամուռ հանդես էին գալիս հարկային քաղաքականությանը դասակարգային կողմնակալության դեմ: Նրանք պահանջում էին երկրում կիրառել մեկ միասնական պրոգրեսիվ հարկի սխեման:

Վարչակառույցի դատապաշտպաններն օգտագործում էին այն թույլ փաստարկը, որ Լիբանանի ազգային եկամուտը տարեց-տարի աճում էր և որ բնակչության մեկ շնչին ընկնող եկարացառույթյամբ Քուվեյթի և Կատարի: Թերևս այս ազմկարարության միակ ճիշտ կողմն այն էր, որ ազգային եկամուտը իրոք բարձրանում էր: Սակայն մեզ հետաքրքրում է այն երոք բարձրանում էր: Սակայն մեզ հետաքրքրում է այն հարցը, թե հասարակական-դասակարգային խմբերը ի՞նչ համամասնություններ էին օգտվում գրանից: Պաշտոնական տվյալներով, 1967 թ. ազգային եկամուտը կազմել է 3483,3 մլն²⁴, 1972 թ.՝ 6365 մլն, 1975 թ.՝ շուրջ 9275,5 մլն լիրա²⁵, Այն բաշխվում էր հետևյալ ձևով: Բնակչության 18%-ը վայելում էր ազգային եկամտի 60%-ը, իսկ մնացած՝ 82%-ին բաժին էր ընկնում միայն 40%-ը²⁶: Այս փաստը մերկացնում է վերևում նշված կեզծ սյնդումը բարձր կենսամակարդակի վերևում նշված կեզծ սյնդումը բարձր կենսամակարդակի մասին: Այն ցույց է տալիս, որ բնակչության գերակշռող մեծամասնությունը ամենօրյա դժվարին պայթար էր մղում իր սպորտուստը հայթայթելու համար:

Լիբանանում աշխատավորական զանգվածների ցածր եկամուտների և կյանքի արժեքի անհամապատասխանության եկամտաճանգի շափազանց վատ վիճակում էր գտնվում բնակարանային հարցը: Պաշտոնական տվյալներով 1975 թ. կարիք էր զգացվում 535 հազար սենյակի կամ 151 հազար բնակարանի²⁷:

Լիբանանի կոմիտուսի և «Բանվորների ու ծառայողների պրոմիթյունների ազգային միություն» 1974 թ. համատեղ ժողովը հանդես եկավ բնակվարձի իջեցման և բնակարանա-յին շինարարության օրինագծի վերափոխման օգտին: Ժողովի հիմնական որոշումներն էին.

1. Իջեցնել բուրբ տեսակի բնակարանների վարձը 25% -ով:

2. Հիմնել հատուկ ֆոնդ՝ վարկավորելու ժողովրդական բնակարանային շինարարությունը:

3. Արտոնել արհմիություններին և բանվորական կոոպերատիվներին, որպեսզի նրանք անձամբ շինանյութ ներմուծեն, առանց մաքսատուրք վճարելու:

4. Արհմիություններին և կոոպերատիվներին տրամադրել զբամական վարկեր խորհրդանշական շնչին տոկոսով կոոպերատիվ բնակարաններ կառուցելու համար³⁸:

Բանվոր դասակարգի երկարատև անխոնջ պայքարի շնորհիվ կիրանանում 1946 թվականից գործում է աշխատանքային օրենքը, որը լրացվեց 1971 թ. «ստոգրապահական ապահովագրության» և 1973 թ. «սոցիալական ապահովագրության» օրենքներով: Ընդ տ է, նշված օրենքները բավականին թերի կողմեր ունենին, սակայն կիրանանի կամկուտի և «Բանվորների ու ծառայողների արհմիությունների ազգային միության» մղած երկարատև պայքարը վճռական դեր խաղաց աշխատավորական զանգվածների պահանջների իրագործման ուղղությամբ:

1946 թվականից բանվոր դասակարգը անդուլ պայքար էր մղում աշխատանքային օրենքի հակաբանավորական 50-րդ հոդվածի դեմ, որն ձեռնարկատիրոջն իրավունք էր տալիս բանվորին, ծառայողին և պաշտոնյային քմահաճորեն ազատել աշխատանքից: 1974 թ. այդ պայքարը պոսակվեց հաղթանակով և 50-րդ հոդվածը փոփոխության ենթարկվեց: Այդ առթիվ «Կանչը» գրել է. «Այն, ինչ ձեռք ձգվեցավ անցնող շարքով՝ կարևոր հաղթանակ մը կը հանդիսանա: Կը մնա զայն պահպանել, զարգացնել և օգտագործել՝ ի խնդիր նորանոր հաղթանակներու»³⁹:

Կիրանանի բանվորների ու ծառայողների արհմիությունների ազգային միությունը ընդգրկում էր 135 արհեստակցական միություն՝ 50 հազար բանվորով, այսինքն՝ աշխատավորական զանգվածների միայն 13%-ը⁴⁰: Բանվորական շարժման համախմբման ու կազմակերպման գործում խոշոր

նշանակություն ունեցան արհմիությունների ազգային միության առաջին (1970) և երկրորդ (1975 թ.) համագումարները: Աշխատավորների մեծ նվաճումներից էր, ինչպես նշվեց, 1971 թ. ընդունված օրենքը առողջապահական ապահովագրության մասին: Աշխատավորները ձեռք բերեցին այնպիսի բնավունքներ, ինչպես հիվանդության մամանակավոր անաշխատունակության վարձատրություն, աշխատող հղի կանանց և անաշխատունակության վարձատրություն, աշխատող ստանալու հնարավորություններ և այլն⁴¹:

Կրանանում սոցիալ-տնտեսական զարգացման գլխավոր միտումը դասակարգային հակասությունների, ամենից առաջ՝ աշխատանքի ու կապիտալի միջև եղած հակասությունների սրումն էր: Վարչակարգի դեմ աշխատավորական զանգվածների ելույթներն աչքի էին բնկնում ոչ միայն մեծ թավով զանգվածների ելույթներով, այլև հարաճուն կազմակերպությունների և պահանջների մակարդակի բարձրացմամբ: Հիմնականում զարգանալով աշխատանքի պայմանների բարելավման, աշխատավարձի բարձրացման, աշխատատեղիների կրճատման, արձակուրդների, նպաստների ավելացման և այլ լոզունգների ներքո, աշխատավորական զանգվածային ելույթները ավելի ու ավելի հաճախակի էին ուղեկցվում քաղաքական կոնկրետ պահանջներով:

Առանձնապես պետք է նշել բանվորների, գյուղացիների, առաջագիմ ուսանողության և մտավորականության 1969—1975 թթ. ծավալած քաղաքական և տնտեսական գոտեմարտները, ինչպիսիք էին Բեյրութի «Ղանդուր» գործարանի բանվորության գործադուլը, Նարաաիայի ժխտոտագործների զուլույթը, Սալոա քաղաքի ձկնորսների ցույցը, հարավի գյուղացիության բազում ելույթները, որոնք ընդգրկեցին ավելի քան 170 գյուղ, կազմավորվեցին գյուղացիական առաջին հարավիրվեց գյուղացիության համալիրանանյան առաջին համագումարը: Իր արձանի տեղն ունեցավ Արհմիությունների ազգային միության՝ 1974 թ. կազմակերպած համընդհանուր գործադուլը: Հիշատակության են արժանի նաև 1969 և 1973 թվականների պաղեստինյան հեղափոխության հետ համե-

բաշխության ցույցերը, որոնց չուրաքանչյուրին մասնակցել էր ավելի քան 250 հազար մարդ⁵²։

Վերլուծելով ժողովրդական լայն շարժման բնույթը, ԿԿ Կենտկոմի 1974 թ. լիազուժար նիստը ընդգծում էր, որ «այդ պայքարի ընթացքում, բանվոր դասակարգի գլխավորությամբ, աշխատավորների հարվածն ուղղված էր ոչ միայն կառավարող բուրժուազիայի առանձին խմբերի, այլև պետական կապիտալիստական ամբողջ վարչակարգի դեմ»⁵³։

Դասակարգային պայքարի տրամաբանությամբ համապատասխան՝ բանվորական ու ղեմնկրատական շարժման վերելքն ու նախաձեռնությունը, անխուսափելիորեն հանդիպում են հետադիմական ուժերի կատաղի դիմադրությանը։ Իշխանությունն ավելի հաճախ էր դիմում կազմակերպված բռնությունների, որոնց մասին վկայում են 1969, 1973 և 1975 թվականների, իրադարձությունները, երբ փազանդավորական-շամոնական զորամիավորումները փորձեցին հաշվեհարդար տեսնել հայրենասիրական առաջադիմական ուժերի և ՊԳԾ-ի ջոկատների հետ։

Վերջ շարադրվածից հետևում է, որ Լիբանանի վարչակառույցի բազմաթիվ հակասություններից էին.

1. Հակասություն՝ արտադրահարաբերությունների և արտադրողական ուժերի միջև, որը զրսևորվում է տնտեսության բոլոր լծակներում առևտրա-ֆինանսական համակարգի տիրապետությամբ։ Այդ հանգամանքը խոչընդոտում է արտադրողական ճյուղերի, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը։ Սա իր հերթին ծնում է մի կարևոր հակամարտություն՝ արդյունաբերական և գյուղական բուրժուազիայի և առևտրաբանկային բուրժուազիայի միջև։

2. Լիբանանի վարչակառույցի կախվածությունն իմպերիալիզմից սպառնում է նրա տնտեսական և քաղաքական անկախությունը։ Այս հակասությունը սրեց սոցիալ-տնտեսական և քաղաքական պայքարը ազգային առաջադիմական-հայրենասիրական և հետադիմական ուժերի միջև։

3. Կիսաֆեոդալական և կապիտալիստական արտադրա-

Հարաբերությունների միահյուսումը գյուղատնտեսության
մեջ առաջ բերեց մի նոր հակասություն՝ գյուղացիության և
փերայելտող քաղաքական ուժերի միջև։ Դա հանգեցրեց գյու-
ղացիական ղեմնկրատական շարժման աննախագիս վերելքի։

4. Հակասություն լիբանանյան առևտրակոմպրադորական
բուրժուազիայի և արաբական ազգային-ազատագրական շարժ-
ման միջև։

Ինչպես տեսնում ենք, առաջին և երրորդ հակասություն-
ների լուծումը ենթադրում է քաղաքական և սոցիալ-տնտեսա-
կան արձատական վերափոխություններ։ Այնինչ երկրորդ և
չորրորդ հակամարտությունների կարգավորումը մնում է ազ-
գային-ազատագրական պայքարի շրջանակներում։ Այսպիսով,
ազգային-ազատագրական պայքարը միահյուսվում է ազգային
ղեմնկրատական պայքարի ինդիերների հետ։



1967—1982 թթ. սոցիալ-տնտեսական ճգնաժամի սրու-
մով լիբանանում դասակարգային ուժերի հարաբերակցու-
թյունը փոխվեց հօգուտ առաջադիմական ու հայրենասիրա-
կան ուժերի։ Նրանք սկսեցին վճռական դեր խաղալ քաղա-
քական կյանքում և երկրի ապագայի կանխորոշման գործում։
Հետադիմական հարվածային գլխավոր ուժի՝ փաղանգավոր-
ների օրգան «ալ Ամալ»-ը ինքնախոստովանության կարգով
նշում էր, որ «պաղեստինցիների գոյությունը լիբանանում
անհավասարակշռություն ստեղծեց, հատկապես այն ժամա-
նակ, երբ նրան միացան հզորացած ձախ ուժերը»¹⁴։

Նշված ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկը լիբա-
նանի ձախ ուժերի գիրքերի նշանակալից ուժեղացումն էր։
Հարկ է ընդգծել, որ ԼԿԿ-ը մեծ դեր խաղաց ժողովրդական
զանգվածային շարժման ղեկավարման բնագավառում։

Այսպիսի բարդ ու լարված պայմաններում անլեզալ
գործում էր լիբանանի կոմունիստական կուսակցությունը։
1968 թ. հուլիսին տեղի ունեցավ ԼԿԿ II համագումարը, որը

քննարկեց հետևյալ հարցերը. 1. ԼԿԿ կենտկոմի հաշվետվու-
թյունը. 2. ԼԿԿ ծրագրի նախագիծը. 3. ԼԿԿ կանոնադրության
նախագիծը. 4. Կուսակցության կենտրոնական մարմինների
ընտրությունը:

Կենտկոմի հաշվետվության մեջ և համագումարի որո-
շումներում ի մի բերվեցին առաջին համագումարից հետո
անցած ավելի քան քսանհինգամյա ժամանակաշրջանում,
կուսակցության գործունեության արդյունքները: Հաշվետվու-
թյան մեջ արտացոլված էր կուսակցության պայքարը հանուն
ազգային քաղաքական և տնտեսական անկախության, հանուն
ժողովրդական զանգվածների կենսական շահերի իրակա-
նացման:

Համագումարը քննարկեց և ընդունեց կուսակցության
կոնկրետ, գիտականորեն մշակված ծրագիրը, որը նոր փուլ
նշանավորեց կուսակցության պատմության մեջ: Ծրագրի 10
պատասխանում էր Լիբանանի զարգացման կարևորագույն
հարցերին, արտահայտում էր բոլոր աշխատավորների բաղ-
ձանքներն ու ակնկալումները: Այն բաղկացած էր առաջար-
կից և 7 դրոշմներից: Առաջարկում խոսվում էր կուսակցու-
թյան վերջնական նպատակի՝ կապիտալիզմը սոցիալիզմով
փոխարինելու մասին: Առանձին դրոշմներում խոսվում էր
արարական ազգային-ազատագրական շարժման հիմնական
սկզբունքների, Լիբանանի սոցիալ-տնտեսական և քաղաքա-
կան զարգացման առանձնահատկությունների, կուսակցու-
թյան մերձավոր խնդիրների՝ Ֆինանսական օլիգարխիայի
խշխանության տապալման, ազգային ինքնուրույնության ամ-
րապնդման, տնտեսական անկախության, նվաճման, Ֆեոդա-
լական ու կիսաֆեոդալական անհավասարության բոլոր ձևե-
րի ոչնչացման, կապիտալիզմի և կապիտալիստական զար-
գացման ուղու մերկացման, աշխատավորության լայն զանգ-
վածների շահերի պաշտպանության, դեմոկրատական հան-
րապետության ստեղծման և այլ կարևոր հարցերի մասին⁵⁵:

Կոմունիստական կուսակցությունը, պայքարելով հա-
մադեմոկրատական նվաճումների ամրապնդման ու ընդլայն-

ման համար, ընդգծում էր, որ դա պատմական անհրաժեշտություն է ապահովելու կիրանանի զարգացումը սոցիալական առաջադիմության ուղիով: Սակայն ծրագիրը հավասարում էր, որ համազգային ու համադեմոկրատական խնդիրներին իրականացումը անհնար է առևտրաֆինանսական իշխանության տիրապետության պայմաններում: Ղեկավարելով ծրագրի այս հիմնադրույթով, ԼԿԿ-ն կոչ էր անում «տապալել ֆինանսական օլիգարխիայի իշխանությունը և ստեղծել ազգային դեմոկրատական կառավարություն»⁴⁶:

Համազումարն իր որոշումներում ընդգծեց ազգային-առաջադիմական միասնական ճակատի ստեղծման անհրաժեշտությունը: ԼԿԿ-ի նախաձեռնությամբ առաջ քաշվեց այդպիսի լայն ճակատի ծրագրի նախագիծ: Ճակատի նպատակն պիտի լայն ճակատի ծրագրի նախագիծ: Ճակատի մոզերի ժողովրդաէր՝ պայքարել հանուն առաջադիմական ստեղծման: Այդ կառավարական կառավարության ստեղծմանը իրականացնել սոցիալ-րությունը պետք է պարտավորվեր իրականացնել «ճշգրիտ մտնտեսական մի շարք խոր վերափոխություններ՝ հօգուտ ժողովրդական լայն զանգվածների, ամենից առաջ կառավարման պետական ապարատը վերակառուցել դեմոկրատական հիմքի վրա, պետական հսկողության տակ զենել մասնավոր, ներառյալ օտարերկրյա բանկերը՝ սահմանափակելու օտարերկրյա մոնոպոլիաների գերիշխանությունը, վարել հակամասնակցել արարական աշխարհին հուզող հարցերի լուծմանը, սերտ համագործակցություն հաստատել ՍՍՀՄ-ի և սոցիալիստական ընկերակցության երկրների հետ»⁴⁷:

Համազումարը հազժահարեց մի այնպիսի արգելք, ինչպիսին էր խմբակայնությունը: «Կուսակցության պատակալած մասի վերաբերյալ» բանաձևում համազումարը գատակարարեց Կուրայտեմ-Սովաշա ձախ արկածախնդրական և օպորտունիստական խմբի հայացքները կազմակերպական և տակտիկական հարցերում: Համազումարը սուր քննադատության ենթարկեց նաև զաղափարական-կազմակերպական աշխատանքում եղած թերությունները, ամենից առաջ՝ դե-

մոկրատական ցենտրալիզմի, ըննադատության և ինքնա-
քննադատության սկզբունքներին խախտումը: Համագումարի
որոշումներում ընդգծվում էր. «կուսակցության կազմակեր-
պությունների պարտականությունն է՝ աչքի լույսի սկս պահ-
պանել մարքս-լենինյան տեսության անադարտությունը, ան-
հաշտ պայքար մղել մանրրործական զազափարախտու-
թյան ամեն տեսակ դրսևորումների դեմ»⁴⁸:

Համագումարն ընդունեց նաև կուսակցության կանոնա-
գրությունը, որի մեջ ընդհանրացված էր երկարամյա պայ-
քարի ընթացքում կուսակցության կազմակերպման փորձը: Կա-
նոնագրությունը ելնում էր կուսակցության ծրագրի առաջա-
գրքանքներին և ազգային-դեմոկրատական խնդիրների իրա-
կանացման պահանջներին:

Լիբանանի կոմունիստները հայրենասիրական բուրբ ուժե-
րի հետ միասին միախնդրելու և ցույցեր էին կազմակերպում,
սեմինարներ անցկացնում, դասախոսություններ կարդում,
գրույցներ անցկացնում գործողությունների միասնության ան-
հրաժեշտության և ակտիվ աշխատանքի մասին՝ ի պաշտպա-
նություն միավորված ճակատի, ընդդեմ հետադիմական ուժե-
րի, հանուն դեմոկրատիայի ու սոցիալական առաջագիժություն
ուղիով Լիբանանի զարգացման:

Զգտելով կասեցնել ժողովրդական շարժման բուռն գրոհը՝
Լիբանանի կառավարող վերնախավը հանդես էր գալիս դեմո-
կրատական ազատության դեմ, նա վախենում էր հասարա-
խանություն տալ ժողովրդի շահերն արտահայտող դեմո-
կրատական հայրենասիրական ուժերին, ընդ որում հիմ-
նակ հարվածն ուղղված էր կոմունիստների, ինչպես
վրա 1969 թ. ապրիլի 23-ին լիբանանյան հետադիմա-
ձեցին մահացու հարված հասցնել թե՛ ՊԳԾ-ի ջոկատնե-
րին և թե՛ ազգային հայրենասիրական ուժերին: Երկարատե-
ղինված բախումներից հետո վերջիններս հաղթանակով

գուրս եկան: Ամենալայն բարոյաբարձարական աշակցություն
ցույց տալով ՊԴԵ-ին, կոմունիստները միաժամանակ խիստ
բննադատեցին Լիբանանի ղեմավարտական, հայրենասիրա-
կան ուժերի պայքարը ՊԴԵ-ի ղեկավարությանը լիովին են-
թարկելու փորձերը, ընդգծելով, որ «ՊԴԵ-ի լիազորություն-
ների ու պարտականությունների մեջ չի մտնում Լիբանանի
սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման խնդիրների
ուժումը»⁴⁰:

Ազդրիլյան ղեկավարից հետո, վեց ամիս տևած կառավա-
րական ճգնաժամից զուրս գալու նպատակով, կառավարող
վերնախափը ստիպված եղավ զիմելի զիշումների: Կազմվեց
նոր կառավարություն, որի կազմում առաջադիմական հայ-
րենասիրական ուժերի ներկայացուցիչ, առաջադիմական
սոցիալիստական կուսակցության նախագահ Ք. Զունբլաթը
ստանձնեց ներքին գործերի մինիստրի պոստը: Նա բա-
վականին վճռական զեր խաղաց Լիբանանում ղեմավար-
տական ազատությունների ընդլայնման գործում: Երկա-
րատե ու տրնաշան պայքարից հետո, 1970 թ., Լիբանանի
կոմունիստական կուսակցությունը նվաճեց լեզալ գործու-
կություն իրավունք: Կոմունիստներն իրենց զբոսորեցին որ-
պես համաշխարհային շահերի համար հետևողական մարտնչո-
ղներ:

Լիբանանյան կոմկուսի գործունեության համար ստեղծ-
ված նոր պայմաններում 1972 թ. հունվարի 7—10-ը զուժար-
վեց Լիկ III համագումարը: Համագումարի օրակարգն էր՝
1) Կենտկոմի հաշվետու զեկուցումը, 2) ազրարային ծրա-
զրրի նախագիծը, 3) քաղաքական թեզիսների նախագիծը, 4) կու-
սակցական կենտրոնական օրգանների ընտրություն:

Համագումարում Լիկ Կենտկոմի հաշվետու զեկուցմամբ
հանդես եկավ կուսակցության զխափոր քարտուղար Նիկոլա
Շաուին, ազրարային ծրագրի նախագծի մասին՝ Կենտկոմի
քաղբյուրոյի անդամ Յ. Խ. Հելուն, քաղաքական թեզիսների
նախագծի մասին՝ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Քարիմ
Մրունն:

Համագումարում ներկա էին Հյուրեր՝ կոմունիստական, բանվորական, ազգային-դեմոկրատական և ձախ սոցիալիստական կուսակցությունների ու կազմակերպությունների 85 պատվիրակություններ:

Համագումարի քաղաքական թեզիսները բարձրացնում էին «Հանուն ազգային դեմոկրատական վարչակարգի՝ Հոգ նախապատրաստել սոցիալիզմի հաղթանակի համար» լուծույզը: Համագումարն ընդգծում էր, որ Լիբանանի քաղաքական և սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացումը և ծառայած խնդիրները լուծելու կառավարող շրջանների անհաջող փորձերը կրկին անգամ հավաստեցին կոմկուսի ծրագրի նշած ուղիների ճշմարտացիությունը, արմատական վերափոխությունների անխուսափելիությունը: Այս նպատակին հասնելու համար կոմկուսի III համագումարը գլխավոր նախապայման էր համարում «ֆինանսական օլիգարխիայի տիրապետության տապալումը և ազգային դեմոկրատական պետության ստեղծումը»⁵⁰,

Կոմունիստական կուսակցությունն իրավացիորեն զբաղում էր, որ ազգային դեմոկրատական պետության խնդիրներն իրենց բնույթով բնավ սոցիալիստական չեն: Նման խնդիրների կենսագործման համար ահրաժեշտ էր ստեղծել ազգային առաջադիմական ուժերից բաղկացած կոալիցիոն կառավարություն, որը պետք է իրագործեր Հետևյալ միևնույն ծրագրերը, լուծարքի ենթարկել օտարերկրյա մոնոպոլիստական ընկերությունները, թուլացնել ֆինանսական օլիգարխիայի տնտեսական գիրքերը, ազգայնացնել բանկային ֆինանսավար կենտրոնացնել պետական հատվածի ձևերում, դարգացնել և ընդլայնել ազգային արդյունաբերությունը պետական հատվածի անմիջական ղեկավարությամբ և համախառն մասնավոր ու պետական ձեռնարկությունների ստեղծման միջոցով: Կիրառել Հոդվածի բարեփոխություններ, ազգայնացնել խոշոր ֆեոդալ կալվածատերերի սեփականությունները, սահմանել հողատիրության առավելագույն

ցին լիկվիդացնել ՊԴՇ-ի հենակետերը: Անհաջողության մատնված այս փորձը մի կողմից ամրապնդեց պաղեստինցիների ռազմաքաղաքական հեղինակությունն ու ներկայությունը երկրում, իսկ մյուս կողմից՝ ղեմնկրատական հայրենասիրական ուժերն առավել ազդեցիկ դիրք գրավեցին Ռաշիդ Սուհի նոր կարիներտում:

Երկրի ճգնաժամային իրադրություն և ժողովրդական շարժման վերելքի պայմաններում քաղաքական մեծ կարևորություն ունեցան 1974 թ. մարտի 27-ի կազմակերպված համաժողովրդական ցույցը և կոմկուսի հիմնադրման 50-ամյակին նվիրված տոնակատարությունները:

Հայտնի է, որ բանվորական շարժումը պառակտելու նրա շարքերում խառնաշփոթություն առաջացնելու նպատակով բուրժուազիան օգտագործում է, այսպես կոչված, բանվորական բյուրոկրատիան: Ի պատասխան նման փորձերի, Լիբանանի բանվորների և ծառայողների ազգային միությունը կոչ արեց 1974 թ. ապրիլի 2-ին համընդհանուր գործազուկանցիկացնել: Միության աշակողմյան որոշ ղեկավարներ փորձեցին վիժեցնել այն: Հակաբանվորական այս քայլի ղեմ մարտի 27-ին զանգվածային հղոր ցույց ծավալվեց (30 հազար մարդ), այնպիսի մասշտաբով, որ շէր եղել 1946 թ. քնդհանուր գործազուկից ի վեր: Կոմկուսի ղեահատմամբ, դասակարգային մենամարտի հետևանքով Լիբանանում արհմիութենական ու բանվորական շարժման մեջ բացահայտ տեղաշարժ է նկատվում ղեպի ձախ⁵²:

Կոմկուսի հիմնամյակի տոնակատարությունն ավելի սարսափեցրեց կառավարող վերնախավին: Այն ցույց տվեց, որ բանվոր դասակարգի ավանդարդ կուսակցությունն իր ակտիվ պայքարի շնորհիվ նվաճել է ժողովրդական ղանդվածների վստահությունը: «Ժողովրդական լայն զանգվածների ակտիվ մասնակցությունն այս տոնակատարությանը ոչ միայն հաստատում է նրանց պաշտպանությունն ու համերաշխությունը կուսակցության ծրագրին ու քաղաքական դժին, այլև նրանց պատրաստակամությունը՝ ներգրավվելու ար-

Ճատական հեղափոխական վերափոխման համար մղված պայքարին»⁵³, — կարգում ենք ԼԿԿ IV համագումարի փաստաթղթերում:

Սակայն զեպրերի հետագա զարգացումն այլ բնույթ ստացավ:

1975 թ. Լիբանանի աշակողմյան առավել հետադիմական ուժերը, փաղանդավորների գլխավորությամբ, սանձակերձեցին զինված բախումներ ազգային-առաջադիմական ուժերի և նրանց դաշնակից ՊԴՇ-ի դեմ: Երկրում սկիզբ առավ քաղաքացիական պատերազմը, որը ծանր նստեց Լիբանանի վրա՝ տասնյակ հազարավոր զոհեր, հարյուր հազարավոր վիրավորներ և ահռելի նյութական վնասներ⁵⁴:

Անդրազատնալով քաղաքացիական պատերազմի հանդուցային հարցերին, Ն. Հ. Հովհաննիսյանը «Լիբանանահանույթյունը ծանր փորձության առջև» հոդվածում նշում է. «Առաջադիմական հայրենասիրական ուժերը հանդես են գալիս Լիբանանի պետական կառուցվածքի մեջ փոփոխություն մտցնելու և իշխանություն հարցում մարտնչի համայնքի մեծաթիվության վերացման, բուրժուական պառլամենտարիզմի սկզբունքների հետևողական կիրառման, աշխատավորական սկզբունքների իրավունքների ընդլայնման, պաղեստինցիզմի աշակցություն ցույց տալու, արտաքին քաղաքականության բնագավառում պրոարևմտյան կուրսից հրաժարվելու և արաբական երկրների հետ սերտորեն համագործակցելու պահանջներով»⁵⁵:

1979 թ. հուլիսին կայացավ ԼԿԿ IV համագումարը, ԼԿԿ Կենտկոմի հաշվետու զեկուցմամբ հանդես եկավ կուսակցության նոր գլխավոր քարտուղար Ժորժ Հատին: Հաշվետվության մեջ տրվեց միջազգային և ներքին դրության բազմակողմանի վերլուծությունը, հանրագումարի որոշյալ բազմազարգացիական պատերազմի տարիներին կուսակցության գործունեության արդյունքները, որոշվեցին հրատապ խնդիրներ և կուսակցության քաղաքական գիծը:

Հաշվետվությունը նշեց, որ Լիբանանը եղել և մնում է իրականաց-
193

նկու մերձավորարևելյան կոնֆլիկտի կապիտուլյանտական կարգավորումը: Այդ ծրագրի իրագործումը, նշում էր հաշվետվությունը, ընթանում էր երկու ուղղությամբ. վերացնել ծրագրի իրականացման ճանապարհին եղած ամեն տեսակ արգելքները, հատկապես պաղեստինյան զիմադրական շարժումը ու կիրանանի հայրենասիրական ուժերը, ճնշում գործադրել Սիրիայի վրա և ապա կիրանանը վերածել ամերիկախորանյալական կարգավորման շղթայի երկրորդ օղակի⁵⁶:

Հաշվետվությունը, խոր վերլուծության ենթարկելով լիրանանյան կոնֆլիկտի ներքին և արտաքին գործոնները, ընդգրծում էր նրա օրգանական կապը արաբական իրադրություն հետ. «Սկզբից ևեթ պարզ է, որ գոյամարտը երկար է լինելու, որովհետև իմպերիալիստները որոշել են ամենակատաղի գրոհ կազմակերպել ոչ միայն լիրանանյան հայրենասիրական ուժերի և պաղեստինյան հեղափոխության նվաճումներին ալլե համարարարական ազգային-ազատագրական շարժման վերելքի՝ դեմ»⁵⁷:

ԼԿԿ Կենտկոմի հաշվետվությունը լիրանանյան քաղաքացիական պատերազմը բաժանում էր հետևյալ հիմնական փուլերի.

Առաջին փուլը՝ 1973 թ. ապրիլի 13-ից մինչև 1976 թ. փետրվարի «սահմանադրական փաստաթուղթը»: Սկզբնական շրջանում զգալի հաջողությունների հասան աչերը, որոնք հենց իրենք էին սանձադերձել պատերազմը: Աչերը միավորվեցին, այսպես կոչված, «կիրանանյան ճակատում», որի գլխավոր հարվածային ուժը փաղանգավորներն ու շամունականներն էին:

Սակայն, 1976 թ. սկզբներից հայրենասիրական ուժերին հաջողվեց փոփոխություն մտցնել պատերազմի ընթացքի մեջ: Նրանք միավորվեցին և կազմեցին «Ազգային շարժում», որի մեջ մտան ԼԿԿ-ը, կոմունիստական գործունեության կազմակերպությունը, Սոցիալիստական առաջադիմական կուսակցությունը, Սիրիական ազգային-սոցիալական կուսակցությունը, նասերականները, Բասս կուսակցության լիբա-

Նանյան մասնաճյուղը, «Ամալ» շիական կազմակերպությունը և այլ հայրենասիրական ուժեր: Ազգային շարժումը որակական նոր աստիճանի բարձրացավ, երբ Ք. Զուրբաթի ղեկավարությամբ կազմավորվեց Կենտրոնական քաղաքական խորհուրդը⁵⁸:

Նշված ժամանակահատվածում հետադիմությունը լուրջ պարտություններ կրեց, իսկ նրա ղեկավարած քաղաքական կարգը թեակոխեց կրախի շրջան: «Ազգային շարժումը» պատերազմական գործողությունների զազարեցման նախապայման էր համարում ոչ թե սոցիալ-տնտեսական և քաղաքաման էր համարում ոչ թե սոցիալ-տնտեսական և քաղաքական վերափոխման ծրագրի իրականացումը, այլ ՊԳՇ-ի իրավունքների ճանաչումը կիրանանում: Ելնելով պահի հասովունքների ճանաչումը կիրանանում: Ելնելով պահի հասովունքների ճանաչումը կիրանանում: Ելնելով պահի հասովունքների ճանաչումը կիրանանում:

Քաղաքական պայքարի ամենատարբեր մեթոդներով⁵⁹, 1976 փետրվարի ժամանակավոր զինադադարից հետո փոխզիջումների հիման վրա հուլիսին, այսպես կոչված, «սահմանադրական փաստաթուղթը», որը թեպետ լիովին չէր արտահայտում ղեմնկրատական վերափոխման վերաբերյալ հայրենասիրական ուժերի պահանջները, այնուամենայնիվ նախատեսում էր լիբանանյան կոնֆլիկտի կարգավորումը խաղաղ ճանապարհով:

Սակայն, հետադիմության՝ ալ Ահգարի զլխավորությամբ մարտի 11-ին կազմակերպած զինվորական հեղաշրջումը վերացրեց այդ հնարավորությունը և սկիզբ դրեց զինված բախումների հետագա շիկացման:

Կենտկոմի հաշվետվությունը միաժամանակ բացահայտեց նշված փուլում թույլ տրված թերությունները: «Զանազան, հանցամասնքների բերումով ՊԳՇ-ն ճիշտ տակտիկա չվարեց այս հարցում, իրեն վերապահելով վճռորոշման իրավունքը թե՛ քաղաքական և թե՛ ուղղակի ասպարեզներում»—նշված է կիրանանյան կոմկուտի IV համագումարի հաշվետվության մեջ⁶⁰:

Եղած լուրը թերությունների շարքին էին գասվում նաև «Ազգային շարժման» պաշտպանական՝ հարձակման նախաձեռնությունը մշտապես հակառակորդին թողնելու տակախկան, մի բան, որ ծանր նստեց հայրենասիրական ուժերի վրա, մանավանդ ՄԼԹՆԻ շրջանում, երբ ճակատամարտը բախտորոշ նշանակություն ուներ «Ազգային շարժման» համար։ Որոշակի անհաշվենկատ վերաբերմունք ցուցաբերվեց այն ուժերի նկատմամբ, որոնք ղեմ էին մեկուսապաշտների ծրագրերին, սակայն, «Ազգային շարժման» ոչ-ճիշտ տակախկայի հետևանքով, շեղզգրկվեցին գոտեմարտերում։

Երկրորդ փուլն ընդգրկում է «սահմանադրական փաստաթղթի» հրատարակումից մինչ Ռիազում և Կահիրեում գումարված արաբական երկրների ղեկավարների կոնֆերանսը՝ Ալ Ահլաբի ղինվորական կառավարության անկումից հետո։ «Ազգային շարժումը» հարված հարվածի ետեից հասցնում էր այն ուժերին և արդեն 1976 թ. կեսերին կիրանանի տարածքի 82 տոկոսը գտնվում էր նրա հսկողությունից տակ։

Հանրապետության պրեզիդենտ Ս. Ֆրանսիեի հրավերով նույն տարվա հունիսին կիրանան մտան սիրիական զորքերը, որոնց նպատակն էր, ինչպես նշված էր պաշտոնական հայտարարության մեջ, վերջ տալ եղբայրասպան պատերազմին։ Եթե սկզբնական շրջանում որոշակի զրական արդյունքներ արձանագրվեցին այդ ուղղությամբ, ապա հետագայում փոխվեց ուժերի հարաբերակցությունը։ Կիրանանյան թատերաբեմում սուր հակասություններ ի հայտ եկան մի կողմից «Ազգային ճակատի» և ՊԳՇ-ի, մյուս կողմից՝ Սիրիայի միջև։ Զինված բազմաթիվ բախումներ տեղի ունեցան վերահիշյալ ուժերի միջև։

1976 թ. հոկտեմբերին Ռիազի և Կահիրեի կոնֆերանսներում որոշվեց արաբական այլ պետությունների ուժեր ևս ուղարկել կիրանան և կազմել միջարաբական խաղաղապահական ուժեր, որոնց միջուկը փաստորեն սիրիական զորքերն էին։ Այդ ուժերը զրվեցին նորընտիր պրեզիդենտ Ի. Սարգսի տրամադրություններով։ Այս որոշումները համարելով բա-

ցասական, ՀԿԿ Կենտկոմի հաշվետվության մեջ ընդգծված էին նաև մի շարք դրական պահեր, ինչպիսիք են արաբական երկրների կողմից Լիբանանի տերիտորիալ ամրոցակա- նություն ճանաչումը, նրա՝ արաբական պատկանելության հռչակումը և, վերջապես, պաղեստինցիների իրավունքների վերահաստատումը քառ 1969 թ. Կահիրեի համաձայնագրի⁶¹:

Հաշվետվության մեջ բարձր էր գնահատվում Լիբանանի «Ազգային շարժման» ստրատեգիական ընդհանուր գիծը, սակայն մատնանշվում էր, որ տակտիկական բազմաթիվ սխալ- ներ թույլ տրվեցին: Դրանցից ամենազխտավորն էր «Ազգա- յին շարժման» և Սիրիայի միջև առճակատումը կանխելու ուղղությամբ անբավարար ջանքերի գործադրումը: «Ճկուն տակտիկայի կիրառումը, թեկուզև որոշ զիջումների գնով, կհանխեր այդ ցավալի բախումը»⁶², — ասված էր հաշվետվու- թյան մեջ:

Երրորդ փուլն ընդգրկում է արաբական երկրների ղեկա- վարների Կահիրեի ժողովից մինչև Մադաթի այցը Իսրայել վարժարանի (1977 Նոյեմբերի 19-ը) ընկած ժամանակահատվածը: Այս փուլի սկզբնական շրջանում իրադրությունը էականորեն փոխվեց: «Ազգային շարժումը», որոշակի անկում ապրելով, ստիպված եղավ ժամանակավորապես նահանջել ճակատի կենտրոնական ղեկավարության վարպետությունը դրսևոր- վեց այն բանում, որ ոչ միայն կարողացավ մաներել, զի- ջումների գիմել, այլև կազմակերպված ձևով նահանջել ճակատակորդի գերակշռող ուժերի և Սիրիայի համագոր- ժումը» քաջ գիտակցում էր, որ աշերի և Սիրիայի համագոր- ժակցությունը կարճատև է լինելու: Ուստի, ինչպես «շարժու- մը», այնպես էլ արաբական կոմունիստական կուսակցու- մը, նախազգուշացնում էին Սիրիային ծանր հետ- թյունները, նախազգուշացնում էին Սիրիայի ծանր հետ- ցանքների մասին: Եվ իրոք, ղեկավարի հետագա ընթացքը բա- ցահայտեց աշերի իսկական նպատակների նպատակները, նրանց ընդհանրությունը արաբական հետադիմություն, ԱՄՆ-ի և Իսրայելի հետ: Ետևում, Ետորայի համաձայնությունից հետո, Իսրայելի հետ: Ետևում, Ետորայի համաձայնությունից հետո, սերտ համագործակցություն հաստատվեց Սիրիայի, «Ազգա- յին շարժման» և ՊԳԾ-ի միջև:

1977 թ. մարտին զավագրարար սպանվեց «Ազգային շարժման» կենտրոնական քաղաքական խորհրդի նախագահ Ք. Զոնբրլաթը: Այդ պաշտոնը ստանձնեց նրա որդին՝ Վալիդ Զոնբրլաթը: Զոնբրլաթի մահը մեծ կորուստ էր ոչ միայն կիրանանի ազգային շարժման, այլև ողջ արարական ազգային-ազատագրական շարժման համար: «Ազգային շարժումը» ժամանակավորապես հետաձգեց կիրանանի կառուցվածքի քաղաքական-գեոսկրատական վերափոխման պահանջը: Ծակատը, ինչպես նաև բոլոր առաջադիմական ուժերը, դատապարտեցին Սադաթի կատարած այցը Իսրայել:

Զորքորդ փուլը՝ Սադաթի Իսրայել կատարած այցից մինչև Քեմալ-Դեկդի գործարքը (1977 թ. նոյեմբերի 19—1978 թ. հուլիսի 17), Եգիպտոսը դուրս գալով Իսրայելին դիմակայող արաբական ճակատից, լքեց արաբական ժողովուրդներին արդար դատը, մեկուսացավ արաբական աշխարհից և օբյեկտիվորեն նպաստեց Մերձավոր արևելքում ԱՄՆ-ի և Իսրայելի դիրքերի ամրապնդմանը:

Վերը նշված ծրագրի կենսագործման նպատակով ամերիկյան իմպերիալիզմը հալածագրեց արաբական աշխարհի «Հինգերորդ շարասյան» բոլոր ուժերին: Կիրանանը վերստին դարձավ Քեմալ-Դեկդի կողմնակիցների և հակառակորդների պատերազմի գաշտ: Աչերը դիմեցին Իսրայելի անմիջական օդնությանը: 1978 թ. մարտի 16-ին իսրայելական զորքերը ներխուժեցին կիրանան և զրավեցին նրա տարածքի զգալի մասը՝ բնոհույ մինչև կիտանի գետը:

Կիրանանի հայրենասիրական ուժերի և ՊԳՇ-ի համատեղ հերոսական դիմադրության, ՍՍՀՄ-ի և սոցիալիստական մյուս երկրների օժանդակության շնորհիվ, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի № 425 և 426 բանաձևերի պահանջով, երեք ամիս անց իսրայելական զորքերը դուրս եկան կիրանանից, սակայն տարածքի սահմանազոտային մասը հանձնեցին ոչ թե կիրանանյան կառավարությանը, այլ գրեցին իրենց գործակալ, մայոր Սաադ Հադդադի տնօրինության տակ: Անհրաժեշտ պաշտպանություն գտնելով բուն

իսկ լիբանանյան կառավարության կողմից և իրեն հայտարարելով «օրինականության» ներկայացուցիչը, Հաղազը այդ տարածքը հայտարարեց «անկախ լիբանան», որպեսզի բողոքովի իսրայելական փաստական գրավման նպատակը⁶³։

Այս շրջանում «լիբանանյան ճակատի» ներսում սուր տարածանություններ առաջացան փաղանգավորների և լիբանանի նախկին պրեզիդենտ Ս. Ֆրանժիեի միջև, որը զեկավարում էր Ջոորթայի շրջանի մարտիների խմբավորումը։ Երկվա զաշնակիցների ու բարեկամների միջև զինված ընդհարումները կատարվեցին 1978 թ. հունիսին, երբ փաղանգավորները սպանեցին նախկին պրեզիդենտի որդուն՝ Տանի Ֆրանժիեին։

Փաղանգավորներն ու շամունականները հարձակումներ կազմակերպեցին նաև լիբանանի հայ համայնքի դեմ, 1978 թ. հոկտեմբերյան իրազարձությունների ժամանակ զոհվեցին 80 հոգի, իսկ 1979 թ. սեպտեմբերին համապատասխանաբար՝ 25 և 30 հայեր, առևանգվածների թիվը հասավ 80-ի։ Մեծ էր նաև հայերին հասցված նյութական վնասը⁶⁴։

Ն. Հ. Հովհաննիսյանն իր աշխատության մեջ ամփոփելով հայերի դեմ աշերի զինված հարձակման և լիբանանահայության ինքնապաշտպանական մարտերի արդյունքները, գրում է. «...լիբանանյան աշերին չհաջողվեց իրագործել իրենց ռազմաքաղաքական ծրագրերը հայկական համայնքի նկատմամբ։ Ձախողվեցին նրանց փորձերը՝ ստիպելու լիբանանահայ համայնքին հրաժարվելու գրական լիբանանյան զոքություն քաղաքականությունից և միանալ «լիբանանյան ճակատին»⁶⁵։

«լիբանանյան ճակատի» զորամիավորումները հարձակվում էին նաև արարական խաղաղապահական ուժերի միջուկը կազմող սիրիական զորքերի վրա։ Մեկուսապաշտ ուժերի հետ համատեղ պրեզիդենտ Բ. Մարգիսը ներկայացրեց մի ծրագիր, որի նպատակն էր լիբանանյան բանակի, հետևապես նաև աշերի զորքերի ուժեղացումը՝ ի հաշիվ սիրիական զորքերի։ Լիբանանի հայրենասիրական բոլոր ուժերը մերժեցին

պրեզիդենտի այդ խորամանկ ծրագիրը, որը միտում էր ճշմարտում գործադրել Սիրիայի վրա⁶⁶։

